Armenian Research & Academic Repository

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format
Adapt — remix, transform, and build upon the material

The licensor cannot revoke these freedoms as long as you follow the license terms.

Under the following terms:

- **Attribution** — You must give appropriate credit, provide a link to the license, and indicate if changes were made. You may do so in any reasonable manner, but not in any way that suggests the licensor endorses you or your use.
- **NonCommercial** — You may not use the material for commercial purposes.

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ „ՏԱՃԱՐ"Ի

7122

ՀԱՅ. ՑԵՂ.

ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Թուրքերէն բնագրէն
թարգմանուած

329
2-24

329 7 Հ.
Հ-24
500

ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ

ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐԸ

ԵՒ

ՕՍՄ. ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ

329
2001

2010

1916

§

ՀԱՅԿԱԿԵՏԱՎԱՆ ՊՐՈՖՈՒՄԻ
Գ. Գ. Библиотека
ՀՍՍՀ-Арм.С.С.Р
Ա. Մաստիկայի
անվան

85244-02
365-92

ԱՄՓՈՓՈՒՄ

Ա. ՊԱՏՄԱԿԱՆ ՀԱՄԱՌՕՏ ԱԿՆԱՐԿ ՄԸ

Կ. Պոլսոյ Պատրիարքութեան հաստատութիւնը

Ա. Շարժումները

ՋԷՅԹՈՒՆ, ԷՐԶՐՈՒՄ, ՍԱՍՈՒՆ

Բ. ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Պոլսոյ եւ գաւառներու մէջ

908 Յուլիս 10-914 Յուլիս 10

Գ. ԳԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՋԱՐԻՋՄԸ

Դ. ԳԱՒԱՌՈՒԹԵԱՆ ՍԿԻԶԲԸ

Ե. Կուսակցութիւնները ընդհ. պատերազմի

յայտարարութեան միջոցին

Զ. ՎԵՐՋԱԲԱՆ

ԵՐԿՈՒ ԽՕՍՔ

Գրկոյրը, որ կը խօսի հայ. յեղափոխականներու մասնաւորապէս Օսմ. Մայր հայրենիքին դէմ անոնց ահեղ դաւաճանութեան մասին, կը բաղկանայ երկու մասերէ:

Ա. մասին մէջ, սպասնական հանանոս ակնարկէ մը եմ, նկարագրուած է սահմանադրութեան հռչակումին, մինչեւ ընդհանուր սպասերազմի յայտարարութիւնը, վեց տարուան ժամանակամիջոցին հայ, կուսակցութիւն ներու հայ · ազգին եւ Օսմ. պետութեան դէմ բռնած ընթացքը, անոնց գործերակերպը ու նպատակը:

Բ. մասը կը խօսի սպասերազմի յայտարարութենէն եմ, կուսակցութիւններու թէ՛ արտասահմանի եւ թէ մայրաքաղաքի ու գաւառներու մէջ Օսմ. կառավարութեան հանդէպ անոնց բռնած ընթացքի, դաւադրութեան, դաւաճանութեան սարազաներու մասին:

Սահմանադրութեան հռչակումէն առաջ կուսակցութիւններու բռնած ուղղութիւնը թէեւ այնքան չէր շահագրգռեր զանոնք, եւ նոյն իսկ գրքոյկիս նպատակին հետ ո՛ եւ է աղերս չունի, սակայն անիրաւ տեղեկութիւն մը տալու եւ մեր ընտծները, իրողութիւնները հաստատելու համար, սխալուցանիք տեղ տեղ հանանոս ակնարկ մը նետել կուսակցութիւններու անցեալ կեանքին վրայ:

Աւելորդ համարեցինք մանրամասնութիւններու մէջ մտնել, մանաւանդ որ գլխաւոր գիծերը բաւական են ապացուցանելու թէ ինչ հրեշային միջոցներով ի գործ դրուած է դաւադրութիւնը, եւ թէ մինչեւ ո՛ւր հասած է դաւաճանութիւնը:

Գրքոյկիս մէջ պատերը, «տօգիմանիներն» են որ կը խօսին, եւ հետեւաբար ընթերցողին կը յանձնարարենք սրտի արիւնով հե-

տեղի իրողութիւններուն, անաչառ եւ անկողմնակալ ըղձայ իրենց դասաւանդներուն մէջ:

Օտ. հայրենիքի վաս թշնամիները եւ անոնց պաշտպանները ուշադրութեամբ թող կարդան այս խանի մը էջերը, որոնք ցաւոտ արտի մը արտայայտութիւններն են:

Օտ. կառավարութիւնը իբր բարբարոս ամբաստանող, խանը մեկերորդ դարու խաղաղարարութեան պաշտպանները? թող բանական ատենութենէ կուրցած իրենց աչքերը՝ տեսնելու համար թէ որո՞նք են բարբարոսները:

ԱՅԶԱՓ ՄԻԱՅՆ,

Պատմական Համառօտ Ակնարկ մը

Երջանկայիշատակ ՅԱՌԹԻՒ ՍՈՒԼԹԱՆ ՄԷՀԷՄԷՏ ԿԱՅՍԵՐ Պոլիս յաղթական մուտքին հետ կը սկսի ՀԱՅՈՑ Կ. ՊՈԼՍՈՅ ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹԻՒՆԸ։

Մեծ աշխարհակալին ծանօթ ըլլալով Պրուսայի Յովակիմ եպիսկ-ին կեանքը, կրօնական կարգ մը առանձնաշնորհութիւներ-ով իր սահմաններուն մէջ բնակող հայերու հոգեւոր պետ կարգեց, Բաթրիզ=Պատրիարք տիտղոսը տալով Անոր։

Օսմ. կառավարութիւնը երբեք չէ միջամտած հայ ժո-ղովուրդին կրօնական գաւանանքներուն։ Կաթոլիկ և բողո-քական վէճերը երբեք չեն հետաքրքրած կառավարութիւնը։ Ընդհակառակը հայերը, —ինչպէս բոլոր միւս քրիստոնեայ ժողովուրդները— Օսմ. երկիրներու մէջ վայելած են կրօնա-կան լայն ազատութիւն մը։

Հայ նախնական վարժարաններու ընդհ. հսկողութիւնը պատրիարքին յանձնուելու պարագան, Օսմ. պետութեան հայերու հանդէպ մնուցաց բարեացակամութեան մեծագոյն ապացոյցն է։

Կ. Պոլսոյ պատրիարքութեան հաստատութենէն 1461— մինչեւ 1860 թուականը, պատրիարքարան և պատրիարքները անայլայլ հաւատարմութիւն մը ցոյց տուած են Օսմ. գահուն հանդէպ։

Կառավարութիւնը հայերու հաւատարմութենէն վստահ,

պետական շրջանակներու մէջ անոնց վստահած է շատ կարեւոր պաշտօններ։ Պէզճեան, Տատեան, ևն. զերդաստանները կոչուած են կառավարական բարձր պաշտօններու, և իրենց հաւատարմութեամբ օգտակար եղած են երկրին և պետութեան, և այս իսկ պատճառով արժանացած մեծամեծ շնորհներու։

Շատ բնական է որ այս ընթացքը պիտի յարատեւէր այսպէս, եթէ Կովկասի հայերը, մանաւանդ Էջմիածնի կաթողիկոսները ռուսական թելադրութիւններէ տարուած, չ'գային միջամտել Թուրքիոյ հայերու կրօնական և ազգային խնդիրներուն։

Ռուս կառավարութիւնը, Թուրքիոյ դարաւոր ուխտեալ թշնամին, մանաւոր նպատակներով Էջմիածնի կաթողիկոսութեան կապուած տեսնել կ'ուզէր Կ. Պոլսոյ Հայոց Պատրիարքութիւնը և մասամբ ալ յաջողած էր, քանի որ Թուրքիոյ պատրիարքները կոյր հետեւողութեամբ, կրօնականապէս կապուած էին Էջմիածնի կաթողիկոսներուն հոգեւոր իրաւասութեան։

Իրարու յաջորդող կաթողիկոսներ չկրցին թափանցել Ռուս. քաղաքականութեան գաղտնիքներուն, և ասոնց էն գլխաւորները. Ներսէս Աշտարակեցի —որ վաթսուն հազար կամաւորներու գլուխ անցած Ռուսեւպարսկական պատերազմին մասնակցեցաւ, Ռուսիոյ կողքին—, յետոյ Մկրտիչ Խրիմեան, և ամէնէն վերջը Մատթէոս Իզմիրլեան խարուելով զոհ գացին Ռուսիոյ քաղաքական էնթրիքներուն։

Կաթողիկոսական և պատրիարքական ներքին վէճերը չեն հետաքրքրեր զմեզ, կէտ մը կայ միայն, որ կարելի չէ զանց առնել։

Ռուս կառավարութիւնը հայերը կը շոյէր ամէնուն ծանօթ քաղաքական մասնաւոր նպատակով մը, մինչդեռ ներքնապէս, իր սահմաններուն մէջ գտնուած բոլոր յարանուանութիւնները և մասնաւորապէս հայերը կ'ուզէր ձուլել Ռուս Օրթոտոքս եկեղեցիին մէջ։ Այս պարագան չկրցին հասկնալ հայերը։

Նոյն իսկ 1836 Մարտ 11ին ռուս պաշտօնատարներու ձեռքով խմբագրուած և Զարական հաստատութեամբ վաւերացուած պոլսոյ Ժենիան կաթողիկոսական իրաւասութիւններու սեղմում մըն է, ուրիշ ոչինչ։

1828ի Թուրքեւռուսական պատերազմին, Կ. Պոլսոյ հայ եկեղեցիներու մէջ կը դադրէր Էջմիածնի կաթողիկոսին անունին յիշատակութիւնը, այս որոշումը տրուած էր ժամանակին բանիմաց աշխարհական և կրօնական անձնաւորութիւններէ կազմուած ժողովի մը կողմէ։

Մատթէոս Պատրիարք գաղտնապէս թելադրուած Կ. Պոլսոյ Ռուս դեսպանէն 1844 Սեպտ. 14ի կիրակին, Բերայի եկեղեցին մէջ, առաջին անգամ ըլլալով յիշատակեց Ներսէս Ե. Աշտարակեցի Կաթողիկոսին անունը։

Այս թուականին հայկական շրջանակներու մէջ խլրտումները ծայր տալ սկսած էին թէև, բայց հայ ժողովուրդը առաջնորդող խոհական անձնաւորութիւններ իրենց ազդեցութեամբ կրցած էին թումբ կանգնել այդ հոսանքներուն առջեւ։

Յարութիւն ամիրա Պէզճեան բացարձակապէս հակառակած է Կ. Պոլսոյ Պատրիարքութեան կրօնականապէս և քաղաքականապէս Էջմիածնի կաթողիկոսին իրաւասութեան ենթարկուելու գաղափարին, որ մասնաւոր թելադրութեամբ յուզուած և մէջտեղ նետուած էր, կրօնական և աշխարհական բրօքականտիսդներու կողմէ։

Ռուսահայերու մէջ ալ խլրտումներ կային՝ որոնք ուղղուած էին միմիայն Թուրք կառավարութեան դէմ։

Դաբրիէլ Պատկանեան Գամառ Դարիպա իր հիմնած Կովկաս թերթին և իր հրատարակած պրակներուն, գրքոյկներուն մէջ, Ռուսահայերը ինչպէս նաեւ Թուրքիոյ հայերը կը գրգռէր Օսմ. կառավարութեան դէմ։

Իր հրատարակած բազմաթիւ երգերուն մէջ, միշտ Հայաստանի անկախութիւնը երազած է, անարգելով եւ անպատուելով Թուրք ժողովուրդը։

«Տէր ողորմեա Հայոց ազգին
Հալածեա զու անգութ Տաճկին
Տէր ողորմեա տէր ողորմեա»

Ռամիկ միտքերը յուզող եւ զրգռող երգեր և յայտարարութիւններ։

Սմիրնոյ եւ պատրիարքներու սանձառարիչ գործունէութենէն զժգոհ դիտակից խմբակ մը գործի սկսած էր Պոլսոյ մէջ։

Այս խմբակը օգտուելով Օսմ. կառավարութեան բարեացակամութենէն, Պատրիարքարանի համար կանոնադրութիւն մը կը պատրաստէր, որուն մէջ կ'որոշուէին, Պատրիարքին, վարչական ժողովներուն, տեսուչ խորհուրդներուն ընտրութեան և իրաւասութեան եղանակները։

Կանոնադրութիւնը կը վաւերացուէր կառավարութեան կողմէ 1860 Մայիս 24ին, Հայ ազգ. սահմանադրութիւն անուանի տակ, որը ուրիշ բան չէր, բայց եթէ կառավարութեան մէջ կառավարութիւն։

Նոյն իսկ այս կանոնադրութեան վաւերացումին մէջ կը տեսնուի Օսմ. կառավարութեան հայերու հանդէպ ունեցած վստահութեան մէկ խոշոր ապացոյցը։

Մինչ թուրք ժողովուրդը հայրենիքին պաշտպանութեան կը զոհէր իր զաւակները իրեն առջեւ գոց գտնելով, վաճառականական, քաղաքական, դիտական ամէն ասպարէզ, անդին հայ ժողովուրդը կը տիրանար վաճառականական, դիտական և քաղաքական հրապարակներուն և Սահմանադրութեան տրամադրութիւններուն համաձայն կը կազմուէին զանազան միութիւններ և ընկերակցութիւններ, միակ նպատակ ունենալով հայ տղուն և երիտասարդին կրթութիւնը։ Օսմ. կառավարութիւնը երբեք չէր արգիլէր, չէր մրջամտէր ընդհակառակը կը քաջալերէր հայ բարեգործական հաստատութիւնները, այսպէս հաց և միս կը սահմանէր Եէտի Գուլէի Ազգ. հիւանդանոցին, Խասգիւղի Գալֆեան որբանոցի

հաստատութիւնը կը վաւերացնէր, և հոն պատսպարուող որբուհիներուն ալ հաց, միս կը կապէր, Պատրիարքարանները տարեկան պիւտճէին բացը գոցելու համար երեւմտեան գանձէն մասնաւոր դումարներ կը չնորհէր...

Այրտումը տարածուած էր նաև արեւելեան ներքին գաւառներու մէջ, Արիմեան Մկրտիչ Եպիսկոպոսը Վանի Վարագայ վանքին մէջ—1857—կը հիմնէր տպարան և կը հրատարակէր «Արծուի Վասպուրական» անկախութեան բրօքանտի առաջին թերթը, նոյն վանքին մէջ նաև ժառանգաւորաց գիշերօթիկ վարժարան։

Ներքին գաւառներու մէջ ալ անկախութեան ցնորքը երեւան կուգայ և հայ նորահաս գրիչները կ'սկսին երգել անկախ Հայաստանը։

Կ. Պոլսոյ Պատրիարք կ'ընտրուի Մկրտիչ Արիմեան —1869— Երեսփոխանական ժողովը ցոյց կուտայ տենդոտ գործնէութիւն մը, Հայաստանի կրթեցեալ հարստահարութիւններու մասին տեղեկագիրներ կը խմբագրուին, առանց աչքի առջեւ ունենալու ներքին գաւառներու մէջ, հայ աւատապետներու հարստահարութիւնները, կեղեքումները, վաշխառութիւնները են. են.։

Արիմեանի գրգռիչ քարոզութիւններէն, անոր ցնորական գաղափարներէն դժգոհ եղող եկեղ. և աշխարհական անձնաւորութիւններ յաջողեցան սարքել տալ հրաժարականը —1873 Հոկտ. 2—։

Արիմեանի հետեւողները սակայն գործի վրայ էին, դպրոցներու մէջ, ազգային պատմութիւն, ազգ. աշխարհագրութիւն, ազգ. մատենագրութիւն կ'ուսուցանէին անարգել. անկախութիւնը երազող երգեր կ'արձագանգէին դպրոցական յարկերու մէջ։

Արիմեանի իբր յաջորդ պատրիարք կ'ընտրուէր Ներսէս եպիսկ. Վարժապետեան, —1874 Ապրիլ 24—։

Այս միջոցներուն ծայր տուաւ Ռուսեւթրքական պատերազմը —1877 Ապրիլ 14—։ Ռուս բանակը Այաս-թէֆանոյի

առջեւ կանգ առաւ։ Հոն կնքուեցաւ Սան-Սթէֆանոյի դաշնադրութիւնը։

Ներսէս պատրիարք օգտուելով Ռուսաց ներկայութենէն, անձամբ ներկայացաւ Նիքոլա ռուս իշխանին և յաջողեցաւ դաշնադրութեան մէջ մտցնել տալ 16րդ յօդուածը, որ յետոյ Պերլինի դաշնադրութեան մէջ եղաւ 61րդ յօդուած։

Այսպէս ահա, Հայոց հոգեւոր պետը, առանց սէջի առջեւ ունենալու Օսմ. կառավարութեան բարեացակամութիւնը, ուրանալով Հայոց պատրիարքութեան եղած այնքան բարիքները, յանդգնեցաւ հրաւիրել օտար միջամտութիւն մը՝ կայսրութեան ներքին խնդիրներուն մէջ։

Ներսէս պատրիարք, մասնաւոր պատուիրակութեան մը հետ, որուն անդամներն էին Մկրտիչ Խրիմեան, Խորէն Նարպէյ, Ստեփան Փափազեան, Մօսիչեան են. յիշատակագիր մը ալ մատոյց Նիքոլա մեծ դուքսին, որուն մէջ կը գանգատէր Օսմ. կառավարութենէն, և անկախութիւն և կամ գոնէ. ռուս. մասնաւոր գօնթրոլ մը կը խնդրէր արեւելեան հայաբնակ գաւառներու վրայ։

Պատրիարքը այսքանով ալ չբաւականացաւ։ Իր կողմէ երկու եկեղեցականներ, Մկրտիչ Խրիմեան և Խորէն Նարպէյ ղրկուեցան Եւրոպա, մեծ պետութիւններու կարեկցութիւնը հրաւիրելու Հայաստանի վրայ.

Խրիմեան այցելեց Հռոմ, Վիեննա, Բարլիզ և Լոնտոն, իսկ Խորէն Նարպէյ այցելեց Ռուսիոյ արքունիքին։

Երկու պատուիրակները Պերլինի մէջ միացան և աշխարհական մեւս երկու պատգամաւորներու Զերազ Մինասի և Ստեփան Փափազեանի հետ համախորհուրդ յիշատակագիր մը մատուցին Վեհաժողովին Հայաստանի տեղական ինքնավարութեան համար։

Ասոր արդիւնքը եղաւ Պերլինի դաշնադրութեան մէջ ծանօթ 61րդ յօդուածը...

Ասիկա կ'ըլլար անտակ ատեն մը որ, Օսմ. կառավարութիւնը իր հպատակ ազգերուն մէջ, ամէնէն աւելի կարեւո-

բութիւն կ'ընծայէր հայուն, և ինչպէս ըսինք քիչ մը անդին, պետական ամենակարեւոր պաշտօններ վստահուած էին հայ ձեռքերու։

Մնաց որ, այս շրջանին արեւելեան գաւառներու հայութիւնը, կրթական, գիտական և քաղաքական տեսակէտներով հաւասար մակարդակի մը վրայ կը գտնուէր իր թուրք դրացիներուն հետ, բացառութիւն կը կազմէին գլխաւոր քաղաքներու մէջ մասի վրայ համբուած ունձնաւորութիւնները։

Պատրիարք և իր համախոհները, փոխանակ Օսմ. պետութեան հետ համակամ, համախորհուրդ երկրին զարգացումին և յառաջդիմութեան աշխատելու, օտար միջամտութիւն կը հրաւիրեին երկրին վրայ մասնաւոր նպատակով մը։

Խնդրոյն ամէնէն զարմանալի և ծիծաղելի կողմը սա է որ, Ներսէս պատրիարք, որուն ազգասէր ատուէր կուտան հայերը, 1881 Սեպտ.ին իր հրաժարականը կուտար բարեկարգութեան և բարենորոգման գործադրութիւնը տեսնելու համար, և սակայն 1882 Նոյեմբեր 29ին կայսերական պատգամ կ'երթար ու մեծագին ընծաներով և Օրթագիւղ խոշոր ծովեղերեայ ապարանքի մը տիրանալով կը վերադառնար իր աթոռը. ու պահանջկոտ բերանը գոցուած էր այլ եւս...

Անկախութեան կուսակիցները սակայն կը շարունակէին երենց առաքելական պաշտօնը, եկեղեցական և աշխարհական ազատականներու! խմբակը կը գործէր անդուլ, օգտուելով նախորդ Ռէժիմի անփութութենէն։

Ներսէս պատրիարքի շրջանին և անկէ առաջ կազմուած միութիւնները. Արարատեան, Արեւելեան-դպրոցասիրաց, Կիլիկեան՝ 1880ին ձուլուելով կը կազմեն «Միացեալ ընկերութիւնք Հայոց»ը; բոլոր այս ընկերութիւններու ինչպէս նաեւ, Ազգանուէր Հայուհեացի նպատակն էր բովանդակ արեւելեան գաւառներու մէջ դպրոցներ բանալ և պատրաստել նոր սերունդ մը...

Այս պարագան ալ արդեօք, Օսմ. կառավարութեան բարեացակամութեան արդիւնքը չէ՞ր, կարելի՞ է ժխտել։

Սահմանադրութեան հանդէսներուն հետ կարելի չէ չփոչատակել նաեւ հայկական թատրոնը:

Այս հանդէսներու առթիւ երգուած ժողովրդական երգերը յայտնապէս ապստամբական կնիք մը կը պարունակէին իրենց մէջ:

Առաջին անգամ Կէտիկ Փաշա հաստատուած ազգ. թատրոնին մէջ օրուան երիտասարդութիւնը կը ներկայացնէր Վարդան Մամիկոնեանը, Արշակ Բ.ը և տակաւին կարգ մը ազգայնական ներկայացումներ, ինչ էր արդեօք ասոնց նպատակը, և հայը Թուրքիայէն դուրս ո՞ւր վայելած էր այսքան լայն ազատութիւն:

Նմանօրինակ pièceներու նպատակը բացատրել աւելորդ կը նկատենք, և կը թողունք ընթերցողներու դատաստանին:

Ներսէս պատրիարք կը վախճանէր «1884 Հոկտ. 26ին», և պատրիարք կ'ընտրուէր Երզրումի առաջնորդ Յարութիւն եպիսկ. Վեհապետեան «1885 Յունվար 26»:

Յարութիւն պատրիարք երբեք սիրելի չեղաւ ծանօթ խմբակին, վասն զի սկզբունքով հակառակ էր անջատողական գաղափարներու և հետեւաբար ժամանակակից բարձրաստիճան կղերը թուրքոֆիլ մը կը ճանչնար զանի:

Մկրտիչ Խրիմեան իրեն հետ ունենալով Մատթէոս Իզմիրլեան, Գրիգորիս Ալէքսիճեան, Եղնիկ Ապահունի եպիսկոպոսները, ինչպէս նաեւ քանի մը հետեւորդ վարդապետներ և աշխարհականներ, պայքար մը կը մղէր հայ մեծատուններուն դէմ, որոնք գաղափարակից չէին, Խրիմեանի և ծանօթ խմբակին ցնորական ծրագիրներուն:

Այս միջոցին վիճակաւոր առաջնորդներ արեւելեան գաւառներու մէջ անդուլ անդադար կը գործէին, կուսակալներ կառավարիչներ կ'ապտակէին, մի միայն ներքին խնդիրներ յարուցանելու, եւրոպական միջամտութիւն հրաւիրելու համար:

Կովկասի մէջ խլրտումները աւելի ծաւալուն հանգամանք մը ստացած էին, բոլոր հայ մտաւորականութիւնը

Հայաստանի անկախութիւնը կը հովուերդէր, ընկերակցութիւններ կը կազմուէին և սակայն նետը միշտ Թուրքիոյ դէմ ուղղուած էր։

Ռուս կառավարութիւնը իր հեռաւոր նպատակներով գաղտնապէս կը քաջալերէր կովկասահայ միտքը, ու նոյն իսկ կը թելադրէր գաղտնի գործակալներու միջոցաւ։

Շատ կարճ տեւեց Յարութիւն պատրիարքի պաշտօնավարութիւնը, հազիւ երեք տարի։

Նոր ընտրութեամբ պատրիարք ընտրուեցաւ Խորէն Ա. Չըգեան «1888»ին։

Աշըգեանի ընտրութիւնը պարզապէս խաղ մըն էր Խորէն Նարպէյի դէմ, որովհետեւ ժամանակին վարչութեան և ազգային շրջանակներու մէջ ձայն ունեցող, հեռատես անձնաւորութիւններ մօտէն գիտակ էին Նարպէյի ձգտումներուն, անոր փառասիրութեան, ևն.

Եւ արդարեւ Խորէն Նարպէյ իր բոլոր հնարագիտութիւնը ի գործ կը դնէր մէկ կողմէ իր աղգասէր աղգը կը խաբէր, միւս կողմէ նախորդ... կայսրը կը շողոքորթէր, և յետոյ եւրոպական արքունիքներու հաշուոյն լրտեսութիւն կ'ընէր։

Հայ բարձրատեսիման եկեղեցականներու մէջ, ոչ մ.կը այնքան աւելի ազատ մուտք ունեցած է պալատական շրջանակներու մէջ, ոչ մէկը արժանացած է այնքան նուէրներու՝ որքան Նարպէյ...

Այս միջոցներուն ծանօթ խմբակին կողմէ հրապարակ նետուած «Մուսա պէյ»եան խնդիրը հրատապ երեւոյթ մը ստացած էր, բովանդակ հայ մամուլը այդ խնդիրով կ'զբաղէր միայն, բոլոր թերթերը եւրոպական միջամտութիւն կը պոռային...

Այս պարզ և սովորական դէպքը, որ, յաճախադէպ է նոյն իսկ եւրոպական ամէնէն զարգացեալ կեդրոններուն մէջ, քաղաքական գոյն մը ստացած, և, եւրոպական միջամտութիւնը գործի խառնուած էր։

Մկրտիչ Փորթուկալեան Եւրոպայի մէջ կը հրատարակէր Սուլեմիա անունով թերթ մը և իբր չափաւոր ազատական եւրոպական գծեթրոլ կը սրահանջեր Հայաստանի վրայ, Մուսա պէյի այս պարզ դէպքը առատ նիւթ կը մատակարարէր Սուլեմիային։

Փորթուկալեանէն ետք, Մինաս Զերազ Բարիզի մէջ կը հրատարակէր յ'Ասուլեմի անունով թերթ մը, եւրոպական ուշադրութիւնը Հայաստանի վրայ դարձնելու համար։

Պոլսոյ մէջ պատրիարքական շրջանակներու դէմ, օրուան վարչութեան դէմ դժգոհութեան ձայներ կային։

Խորէն Աշրգեան իբր հեռատես մարդ մերժած էր գործակցիլ ծանօթ խմբակին, երբեք համամիտ չէր անոնց գաղափարներուն, այս պատճառով Թուրքոֆիլ մը, խաֆիյէ մըն է կ'ըսէին անոր՝ ազատականները...

Յեղափոխութիւնը սկսած էր, միակ նպատակ ունենալով անկախութիւնը։

Հնչակեան կազմակերպութեան ծագումը

Զուիցերիոյ մէջ ծանօթ բաղդախնդիր Նազար Բէկ և իր անզուգական կինը Մարօ (1886ին) կը կազմեն մութիւն մը և անմիջապէս կը ձեռնարկեն Հնչակ անունով թերթի մը՝ որ մինչեւ այսօր կը շարունակէ իր հրատարակութիւնը։

Առաջին յեղափոխական կուսակցութիւնը «Հայ Յեղափոխական կուսակցութիւն» անունին տակ կազմուած էր, իրեն նպատակ ունենալով Հայաստանի անկախութիւնը։

Կուսակցութիւնը Պոլսոյ և գաւառի մէջ ունեցաւ իր հետեւողները։

Առաջին անգամ Էրզրումի մէջ կազմուեցաւ մասնաճիւղ մը, յետոյ Պոլսոյ և յաջորդաբար զանազան քաղաքներու մէջ։

Ա. ցոյցը տեղի ունեցաւ Էրզրումի, իսկ Բ.ը Պոլսոյ մէջ։

Յ. Ճանկիւլեան, Գ. Գրիգորեան, Ա. Աշրգպաշեան, Պօյաճեան, Տամատեան կը ներկայացնէին Հնչակը Պոլսոյ մէջ, և Ա. ցոյցին գլխաւոր կազմակերպիչներն էին։

Այս նոր խմբակը կ'ուզէր իրեն գաղափարներուն գործիք ծառայեցնել օրուան պատրիարքը՝ Աշրգեան եպիսկ.ը։

Պատրիարքի ընդդիմութեան վրայ կը հաւաքուին Մայր եկեղեցի քոնի եկեղեցի կ'առաջնորդեն պատրիարքը և կ'ըստիպեն զիրենք առաջնորդել Կայս. պալատ, յիշատակագիր! մը մատուցանելու համար։

Հետեւողներուն մէջ չկար մէկը որ գիտակցութիւնը ունեցած ըլլար իրողութեան, գաւառացի պանդուխտներ որոնք աշխատիլ, դրամ շահելու համար եկած էին Պոլիս, ու թերեւս գոհ իրենց կեանքէն։

Աշրգեան ստիպեալ կը համակերպի և ամբոխը կը յառաջանայ դէպի Երլտրզ, Կայս. պալատ։

Զինեալ ուժը կը միջամտէ և Հնչակեան Ա. ցոյցը կը վիժի այսպէս։

Բոլոր այս իրադարձութիւններուն մէջ ամէնէն նողկալի կէտ մը եթէ կայ, ան ալ Ճանկիւլեանի պատրիարքարանի մէջ, Օսմ. Թուղրան պատէն վար առնելով իր ոտքերուն տակ կոտոր կոտոր ընելու պարագան է, բան մը, որ ուղղուած էր բովանդակ թուրք ժողովուրդին դէմ, և միջազգային օրէնքով ալ դատապարտելի արարք մըն էր...

Այս իրարանցումներու միջոցին կը վիրաւորուին Տ. Խաչատուր քհնյ., Տաճատ վրդ., որոնք հանդարտեցնել կը ջանային կատղած խմբակը։

Խորէն Աշրգեան այս խայտառակութիւններուն առջեւ ստիպուած կը հրաժարէր։ (1894)

Կառավարութիւնը այս ցոյցին հանդէպ ալ դրեթէ անտարբեր մնաց, բաւականացաւ միայն ձերբակելով պարագլուխները և հարցաքննութեան ենթարկելով հետեւողներէն ոմանք։

Հնչակեանները սակայն թէ հոս Պոլսոյ մէջ և թէ նեղքին գաւառներու մէջ կը կազմակերպուէին և կը պատրաստուէին նոր ցոյցերու. մանաւանդ որ՝ հոս ռուս դեսպանատունը, իսկ արեւելեան գաւառներու մէջ ռուս. հիւպատոս

ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ՀՍՍՀ-Ա.ԱԿ

սարանները կը թելադրէին և կը պաշտպանէին կուսակցապետները...

Հնչակեան կուսակցութիւնը իր մէջէն ընտրած էր տերորիստներու խմբակ մը՝ բոլորն ալ անմիտ, ոգէտ գաւառացիներ, որոնք խաբուած էին ստապատիր խօստումներով։

Այս պարագան յայտնի եղաւ յետոյ ապա, հարցաքննութեան պահուն։

Պատրիարքարանի ազգ. ժողովը ճնշումներու տակ Իզմիրլեան Մատթէոս եպիսկ.ը կ'ընտրէր պատրիարք։ (1894)

Կուսակցութեան գաղափարակից Իզմիրլեանը, պատրիարքական աթոռը անցնելուն պէս, ինքը անցաւ կուսակցութեան գլուխը։

Քաջալերեց կուսակցականները, հրահրեց յեղափոխութիւնը և իրեն աչակերտներ պատրաստեց։

Կրօն. ժողովի ատենապետութեան հրաւիրեց Գրիգորիս եպիսկ. Ալէքսիանը, որ Մուշի միաբանարքը ապրակած, և հրաժարեցուցուելով Պոլիս ղրկուած էր։

Ասիկա ցոյց մը էր օրուան կառավարութեան դէմ։

Իր թելադրութեամբ Ալէքսիանեան ընտրուեցաւ Կիլիկիոյ կաթողիկոս...

Դաշնակցութեան ծագումը

Այս միջոցներուն հնչակեաններէ զատ խմբակ մը, արտասահմանի մէջ նոր կուսակցութիւն մը կազմած էր, դաշնակցութիւնը՝ որ իր օրգանին Դրօշակի անունն ալ կրեց պահ մը։

Հնչակեանները Պոլսոյ մէջ սկսած էին բռնի գրամահաւաքութեան նուիրական գաղափարին իրականացումին համար։

Սպառնական նամակներ կը ղրկուէին հայ հարուստ վաճառականներուն։

Մամբրէ վրդ. Սկիւտար, փաստաբան Խաչիկ էֆ. Թօփգարու, Տիգրան Գարակէօզեան՝ կամուրջին վրայ, Աբիկ Ունճեան՝ Ղալաթիա, Մաքսուտ Սեպուհ պէյ՝ Ղալաթիա Խավեար

խանի դրան առջև յաջորդաբար զոհ գացին հնչակեան ոճրագործները, ոմանք հնչակեան չահերուն չծառայելնուն, իսկ հարուստներն ալ՝ դրամ տուած չըլլալնուն համար...

Արտասահմանի մէջ Հնչակ և Դրօշակ և Ամերիկայի մէջ հետզհետէ հրատարակուող թերթերը Օսմ. կառավարութեան և թուրք ժողովուրդին դէմ նախատական և գրգռիչ հրատարակութիւններով լեցուն էին։

Ռուսական թելադրութիւնները, անգլիական խօստումները չփացուցած էին զոյգ մը կուսակցութիւնները։

Իզմիրլեան ապստամբութեան դրօշ պարզած՝ վերջնագիր կուտար կայսերական պալատ։

Գաւառներու մէջ յեղափոխութիւնը ծաւալած էր. Զէյթուն, Սասուն ապստամբած էին։

Արտասահմանի մէջ ծրագրուած ցոյցը Իզմիրլեանի հաւանութեան արժանացած ըլլալով, 96ի օգոստոսին գործադրութեան դրուեցաւ։

Ռուսական բասբօռներով Պոլիս հասնող քանի մը կուսակցականներ պոմպաներով և զէնքերով Օսմ. պանքան մտան՝ դեսպաններու ուշադրութիւնը իրենց վրայ հրաւիրելու համար, որովհետև միջազգային հաստատութիւն մըն էր. փորձեցին օգը հանել Պանքան։

Այս գաւառանները առանց իրենց նպատակին հասնելու, զինուորական ուժի առջև փախուստ խուճապեցին, ասոնց ձերբակալութեան պահուն վրայ հասան Ֆրանս. և ռուսական դեսպանատան Ս. թարգմանները Ռուէ և Մաքսիմօֆ և ոճրագործները առաջնորդեցին Մէսաժրիի ժիnolis չոգենաւը...

Ահա թէ ուսկից էր թելադրութիւնը։

Իզմիրլեան պատրիարքարանէն անտարբեր կը դիտէր և հերոսները կը հեռանային Պոլսէն։

Կուսակցականները և ասոնց համակիրները հաւաքուած էին պատրիարքարանի Մայր եկեղեցիին, Բերայի, Ղալաթիոյ և Սամաթիոյ եկեղեցիներուն մէջ, կառավարութենէն երաշխաւորութիւն կը պահանջէին դուրս ելնելու համար։

Դէպքը կը շարունակուէր Պոլսոյ մէջ ուրեք ուրեք։ Սամաթիոյ մէջ, կուսակցապետ մը Արմէն Գնունի, իզուր կ'սպասէր անգլ. նուաստորմին Պոլիս ժամանումին...

Կ'անիծէր զինքը խաբողները և խաբուած ըլալը զգալով իր քունքին կը պարպէր ատրճանակը ու կ'իյնար անկենդան...

Ուզմիրլեան կը յամառէր տակաւին, նոյն իսկ անգլ. դեսպան Սըր Ֆիլիպ Բրբրիի Օսմ. կառավարութեան մօտենալու թելադրութիւնները չէին զօրեր այդ անմիտ, անքաղաքագէտ մարդուն վրայ...

Ու Իզմիրլեան կը հրաժարէր և իր զոհերուն արիւնին վրայէն քալելով «1896» կ'երթար Երուսաղէմ...

Թուրքին և Հայուն միջև բացուած էր անդնդային խրամատը։

Հայկական գաղթը սկսաւ։ Յեղափոխականներու ապատամբական ընթացքէն զզուած հայերը կ'անցնէին Եւրոպա։

Այս թուականէն մինչև Սահմանադրութեան հռչակումը յեղափոխական կազմակերպութիւնները չդադրեցան արտասահմանի մէջ գործելէ և ներքին գաւառներու մէջ խռովութիւններ յարուցանելէ։

Էջմիածնի կաթողիկոսութիւնը, չնայելով ուսս հալածանքին՝ որու մասին պիտի խօսինք իր մասնաւոր տեղը, Լահէյի դեսպանատորհուրդին ներկայացուցիչներ կը զրկէր հայկական դատին հաւար...

96ի այս անցեալող ցոյցէն ետք կուսակցութիւններու արտասահմանի մէջ մօտաւորապէս տասներկու տարուան գործունէութիւնը իր մասնաւոր բաժնին թողլով։ երկու խօսք ալ Զէյթունի, Սասունի և Էրզրումի շարժումներու մասին։

ԶԷՅԹՈՒՆ.— Այս գաւառակը որ երեսուն երկու թուրք և հայ գիւղերէ կը բաղկանայ վերջին տասներս ունեցած

է առաւելապէս 22000 բնակիչ որոնց 14000ը հայ, մնացեալը Թուրք։

1545 Թուականէն կսկսի Զէյթունի առաջին շարժումը որ տեւեց մինչեւ 1908 շարունակաբար գրեթէ չորս հարիւր տարի։

Առաջին շարժումներու ատեն անկախութեան գաղափարը դեռ ծնունդ չէր առած այդ լեռնականներու մտքին մէջ, որոնք ասպատակութիւնը ապրուստի միջոց մը ընտրած էին։

Հետզհետէ Զէյթուն ապաստանող ասպատակներ, բնակութիւն հաստատելով և իրենք իրենց մէջ միաբանելով տեսակ մը աւատապետութեան հաստատած են, իշխան անունը տալով իրենց պետերուն։

Գրեթէ մինչև վերջին ժամանակներս Զէյթուն բաժնուած էր չորս Թաղերու, չորս իշխաններու հրամանին տակ։

Այսպէս Սուրէնեան Թաղ, (1545), Եաշարեանց Թաղ, (1780). Եէնի Տիւնեա Թաղ, (1790). Շօվրօեան Թաղ, (1800)։

Իշխաններէն իւրաքանչիւրը միմիայն իր Թաղին վրայ իշխելու իրաւունքը ունէր, ամենազօր էր իր սահմաններուն մէջ, մահուան վճիռ անգամ կրնար ստորագրել և տալ։

Իշխանները չրջակայ Թուրք գիւղերը խարաճի կապած էին և ատոնց կողմէ դապաստիներ ամեն տարի գիւղերը երթալով տուրքերը կը գանձէին.....

Այս դրութիւնը կը տեւէ մինչև 1895 երբ Օսմ. կառավարութիւնը այս յաւիտենական ասպատակութիւններուն, իշխանական առանձնաշնորհումներուն վերջ կուտայ։

Իշխաններու Օսմ. պետութեան և չրջակայ Թուրք գիւղերու բնակչութեան հանդէպ բռնած ընթացքը տեղի տուաւ առաջին ապստամբութեան։

Լեռնականները 1780ին ապստամբութեան դրօշ կը պարզէին, պատրուակ բաներով տուրքի քանակն ու գանձումին եղանակը։

Բացէ ի բաց կը մերժեն վճարել կառավարութեան կող-

մէ սահմանուած տարեկան 15000 ղրուշի պետական տուրքը։ Կարճ դիմադրութենէ մը ետք կը խոստանան կանոնաւորապէս վճարել և սակայն երկու տարի ետք —1782— կրկին կ'ապստամբին պետութեան դէմ, այսպէս կը շարունակեն ապստամբութիւնները 1786, 1808, 1818, 1825, 1831, 1842։

Իրարու յաջորդող այս անընդհատակ ապստամբութիւններէն ետք 1853 թուականին պօլսէն Զէյթուն կը հասնի Մելիքեան Արծրունի «Ցովակիմ» իբրեւ գործիչ եւ գաւառակին մէկ անկիւնը գտնուող հին պանդոկին պարտի ձեւ տալով ինք կ'ստանձնէ Զէյթունի կառավարութիւնը, իրեն գործակից և խորհրդական ունենալով չորս իշխանները և Տէր Մարտիրոս քհնյ. Տիրացուեանը իբրեւ ընդհ. դատաւոր։ Այսպէս Ս. գաղափարական խառնիչը կը ներկայանայ Մելիքեան Արծրունի։ Այս մարդը, իր նպատակը գլուխ հանելու համար կը խորհի Ռուսիա երթալ, նպաստ հաւաքել և պաշտպանութեան միջոցներ և միջնորդներ գտնել, սակայն Էրզրումի մէջ ճանչցուելով կը ձերբակալուի և կը բանտարկուի։

1850ին սկսուած ապստամբութիւնները վերջ գտած չէին. լեռնականները կը շարունակէին ասպատակել շրջակայ թուրք գիւղերը և բնակչութիւնը կը պարտադրէին հեռանալ Զէյթունի սահմաններէն մինչեւ 50 ժամ հեռաւորութեամբ ուրիշ տեղեր։

Հոս ալ պարզ կը տեսնուի թէ, այս լեռնականներուն նպատակը ուրիշ ոչ այլինչ էր, բայց եթէ, տեսակ մը աւատապետութիւն և յայտնի ապստամբութիւն մը պետութեան դէմ։

Գաղափարական շարժումը —որուն հիմերը դրած էր Մելիքեան— կ'սկսի 1865 թուականին, որ ատեն, Պոլսոյ մէջ ալ սկսած էր շարժումը և գաղափարական քարոզիչներ գործի ձեռնարկած էին...

Ասպատակային շարժումներուն կը յաջորդէ կրթական շարժումը։ Դպրոցական Ազգ. վարժարանի ընթացաւարտներէն

ազատական մը և ծանօթ օճախին անդամներէն Յարութիւն Զաքրեան անունով ընկեր Զէյթունցի մը իբրեւ ուսուցիչ և գործիչ կը դառնայ իր բնակաւառը։

Շարժումը անկախութեան փոխուա՞ծ է։

Գահիրէաբնակ Աբարկիրցի Պօղոս էֆ. Զէյթունի դպրոցներուն կը նուիրէ (400) օսմ. ոսկի, Աղեքսանդրիայէն Իզմիրցի Թագւոր բաչա Յակոբեան միւնոյն նպատակին համար կը նուիրէ 200 օսմ. ոսկի և իր կողմէ ուսուցիչ կը ղրկէ Կարապետ Տ. Մինասեան ծանօթ «Վահան վարդապետ Տ. Մինասեանը»։

Ութսունական թուականներուն Միացեալ ընկերութիւնը Զէյթունի մէջ վարժարաններ հաստատելով իր կողմէ ուսուցիչներ կը ղրկէր, որոնցմէ մասնաւորապէս Սեւերիք Կեսխանեան կարեւոր դեր մը ունեցած է 1895 ապստամբութեան միջոցին։

1861ին Հաճընէն Զէյթուն կը հասնի ուրիշ գաղափարական գործիչ մը որ ինքզինքին իշխան անունը տուած էր։ Քանի մը ամիսներ Զէյթուն մնալէ ետք, ՆԱԲՈԼԷՕՆ Գ.ի մատուցանելու համար հանրագրութիւն մը կը պատրաստէ և ստորագրել կուտայ Զէյթունի կղերին և իշխաններուն։

Այս հանրագրութեամբ Լեւոն ի դիմաց Զէյթունի 70,000 կարիճներու! անկախութիւն կը խնդրէր։ Նաբոլէոն հեռաւոր նպատակներով անչուշտ, թէև կարեւորութիւն կընծայէ այս հանրագրութեան, և սակայն տեղւոյն վրայ կատարուած քննութեան հետեւանքով, Զէյթունի բնակչութեան և իր զինուորական ուժին! չափազանցութիւնը երեւան ելլելով այս ծրագիրն ալ ջուրը կիյնայ։

Հայ ժամանակակից պատմագիրները Զէյթունի յաջորդական ապստամբութիւնները և ապստամբութիւնները, աղգայնամոլներու ակնոցով դիտած և այդ ապստամբութիւնները շրջակայ թուրք բնակչութեան յարձակումներուն և կամ Օսմ. պետութեան ճնշող հրահանգներուն իբր հետեւանք ցոյց տուած են...

1865 ի Աղգայնճիները, անկախութեան կուսակիցները

Զէյթունի ապստամբութիւնը իր բոլոր փուլերուն մէջ բռնակալ Ռէժիմի դէմ ընդվզում մը ներկայացնելով երբ Զէյթունի համար անկախութիւն կը պահանջէին, կը մոռնային, կամ անգիտանալ կը ձևանային ուղղակի կեդրոնէն. դարաթիոյ օճախեն ղրկուած գաղափարական գործիչներու կողմէ եղած թելադրութիւնները։ 1862 ի ապստամբութենէն ետք երբ Զէյթունի պատգամաւորութիւնը պօլիս կը հասնէր 1862 Սեպտ. 27, դալաթիոյ օճախը, օրուան մտաւորականները փառաւոր ընդունելութիւն մը կատարեցին։

Մկրտիչ Պէշիկթաշլեան, ծանօթ գրագէտ-բանաստեղծը պատգամաւորութեան առջևէն կարդար՝ այս առթիւ գրի առած իր հետեւեալ կտորը.

Զէյթունցիներու երգը

— o —

Դու զով խնդրես մայր իմ անուշ
Եկ մի դողար մօտեցիր հոս
Անոյց աչօք դիտէ զորդիդ
Որ իր վերեն արիւնահոս.
Թրքաց մայրեր թող դան ու դուն
Ուրախ լուրեր տար ի Զէյթուն:

Արեւ եղաւ Զէյթունցիներ— Շուտ ձի հեծնիք—
Զեզի վեր առնեմ դիմեմ յառաջ,
Մեզի պէտք չի ձեռէր քաշած — ծոցը դրած, տունը նստած—
Բաւ է եղարք այսման տարուայ գերութիւն,
Թիչ մ'աղ եղնեմ ցոյց տանք տանկաց դառնութիւն...

Ինչպէս ըսինք արդէն 1865 ին պօլսոյ մէջ ծայր տուած էին խլրտումները, Ազգ. Սահմանադրութեան տրամադրութիւններուն համաձայն Ազգ. և քաղաքական ժողովները զուտ ազգային խնդիրներէ դուրս իրենց իրաւունք տուած էին միջամտելու երկրին ներքին և արտաքին քաղաքականութեան։

Պատգամաւորներու պօլիս ժամանումեն առաջ Գրիգոր

Վրդ. Աբարդեան Բարիզ գացած էր Նաբոլէոնի մօտ բողոքելու համար.... Հոն իրեն գաղափարակից առաջնորդող մը եղած էր նաև կարապետ վրդ. Շահնազարեան։

Քննիչ յանձնախումբ մը կազմուած էր Զէյթունի խնդիրը քննելու համար, այս յանձնախումբին կ'անդամակցէր Եօղկաթի առաջնորդ Մատթէոս վրդ.ը որուն յանկարծական մահուան պատճառով իրեն յաջորդ նշանակուեցաւ Խասգիւղի քարոզիչ Ներսէս վրդ. Վարժապետեան՝ որ յետոյ եղաւ պատրիարք —։

Աղգասէր առաջնորդը իրեն տրուած հարիւր ոսկի ճամբու ծախսը Սիսի կաթողիկոսին տալով, Աստանացի ականաւոր հայու մը Մանուկ պէյ Սամուրասչեանի միջնորդութեամբ Եպիսկոպոս ձեռնադրուեցաւ և դարձաւ պոլիս։

Օսմ. կառավարութիւնը նկատելով որ իր տիրապետութեան դանուղ դաւառակ մը զուրկ է պետական ներկայացուցիչ է մը, և միւս կողմէ չարունակական ապստամբութիւններու վերջ մը տալու և թէ մանաւանդ վարչական նոր կազմակերպութիւն մը տալու համար այս թուականներուն Ա. անդամ ըլլալով պաշտօնեայ մը զայնազան կարգեց Զէյթունի։ Այս պարագան անհաճոյ թուելով լեռնական անհանդաստ ժողովուրդին, բողոքեցին պատրիարքարան որպէս զի կառավարութեան դիմելով իսկոյն ետ կանչել տայ Գայմագամը՝ ապա թէ ոչ..

Մինչև 1875—1878 կը չարունակուին ապստամբութիւնները։ Այս թուականներուն Երևան կուգայ հռչակաւոր ՊԱՊՊԻԿ ԲԱՇԱՆ, նոր տերհպէի մը։

Այս բաշան ալ մինչև իր կեանքին վերջը բուռն հակառակորդ մը եղաւ Օսմ. կառավարութեան։

1879 ին դարձեալ ապստամբութիւն և պատերազմ. այս պատերազմը կը վարէր նոյն ինքն Զէյթունցիներու կուռքը Պապիկ բաշա։ Զէյթունի յաջորդական ապստամբութիւններու մէջ գլխաւոր տեղը կը գրաւէ 1895 ի ապստամբութիւնը։ Ինչպէս տեսանք մեր այս համառօտ նկարագրականին մէջ

մինչեւ այս թուականը լեռնականները գրեթէ իրենք իրենց վարած են ապստամբութիւնները՝ եթէ նկատողութեան չառնենք գաղափարական մէկ երկու գործիչներու առաքելութիւնը։

Իրաւ է թէ վաթսունը հինգական թուականներէ ասդին, պատրիարքարանը և Ազգ. ժողովը բարոյապէս և նիւթապէս քաջալերեցին ապստամբ լեռնականները, մինչեւ իսկ ուսուցիչներու հետ հրացանագործ վարպետներ ալ «ուստա Սինեմ, ուստա Մազսուա» ղրկեցին և սակայն կուսակցութիւնները մինչև 95 թուականը ոտք դրած չէին Զէյթուն։

Այս թուականին Զէյթուն կը հասնին Աղասի, Հրաչեայ, Ասան, Նշան, Մլէհ, Կարապետ հնչակեան գործիչներ, իրենց հետ տանելով չո՞րս հարիւր ոսկի և Եւրոպայի բարեւներն ու համակրութիւնը...

Ասոնց խօսքերուն նայելով Անգլիական տորպիդ մը իսկէնտէրունի առջև խարսխած էր և իրենց հրամանին կսպասէր ցամաք զօրք հանելու համար։

Այս անգամ Զէյթունցին չէր փափաքէր ապստամբութեան, խոհեմութեամբ կուզէր գործել, նոյն իսկ Զէյթունի կղերը որ ապստամբութիւններու պարագլուխ և դրդիչը եղած էր միշտ, յորդոր կը կարդար խոհեմութեան և սակայն հնչակեան ոճրագործները յաջողեցան վերջապէս ապստամբութեան առաջնորդել բովանդակ լեռնականները։

Բառասուն և հինգ օր տեւող այս ապստամբութիւնը շատ սուղի նստաւ լեռնականներու և վերջապէս հիւպատոսներու միջնորդութեամբ? կարելի եղաւ դադրեցնել հաշտարար լուծում մը։

Կառավարութիւնը կը պահանջէր կուսակցականները, Զէյթունցին կընդդիմանար, որոշուեցաւ հիւպատոսներու եւրաչխաւորութեամբ Եւրոպա անցնել կուսակցական հերոսները, այսպէս ալ եղաւ։

Զէյթունի հայ պատմագիրները! ապստամբութիւններու և ասպատակային կռիւներու թիւը ՔԱՌԱՍՈՒՆԸ Մէկ ցոյց

տուած են այս թիւէն դուրս են ՏԱՄՆԸ ՎԵՑ ԴԷՊԲԵՐԸ։

Ըսինք արդէն թէ առաջին ապստամբութիւնները լոկ ապստամբութիւններ էին, և սակայն յետոյ ապա անկախութեան գաղափարը ներշնչուեցաւ լեռնականներուն և կուսակցութիւնները մասնաւորապէս հրահրեցին և իրենց հաշուոյն գործադրեցին լեռնականները՝ ասոնց անունով ահագին գումարներ հաւաքեցին արտասահմանի մէջ։

Ահա Զէյթունի ապստամբութիւնները իր համառօտ գիծերուն մէջ, որոնք ուղղուած էին Օսմ կառավարութեան և թուրք ժողովուրդին դէմ, սա Դպատակով միայն. կործանում Օսմ. կառավարութեան և անկախութիւն Զէյթունի։

*
* *

Էրզրում.— Ադգ. Սահմանադրութիւնը չփայլեցուցած էր հայ մտաւորականները, գրիչի տէր եղող ամէն հայ, անպատճառ Հայաստանը կ'ողբար ու կ'երգէր։ Մանաւանդ սահմանադրութեան տարեկան հանդէսները ալ աւելի կը գրգռէին, մտաւորական և գաղափարական գործիչները՝ որոնք հին Ռէժիմի անփութութենէն օգտուելով սանձարձակ կը գործէին։

Սահմանադրութեան տարեդարձներու առթիւ արտասանուած բաժանաառները մի միայն մեծ գաղափարին իրագործումին նուիրուած էին, անկախութեան երազը յիմարեցուցած էր գաւառներէ Պոլիս խուժող ամբոխը։ Դաշտիոյ օձախին ներկայացուցիչները բեմերու վրայ ինքզինքին կը ցուցադրէին գաւառացի ազէտ ժողովուրդին որ կը ծափէր խօլարար, առանց հասկնալու։

Մէկ խօսքով Եէտի Գուլէի պարտէզները, յիմարանոցներու փոխուած էին այն օրերը։

Իսկ երգերը, այդ մասին խօսիին անգամ աւելորդ է, ահա կարկառուն նմոյշ մը։

Հրաւէր մարտի

—o—

Բանք որոտան բոմբիւնք բարձուս յԱյրարատեան դաշտն ի վայր:
Արի արանց արիւնք յեռանոն առատանան ի հրապայր:
Հրաւէր հայրենեաց հոչակ ընդհանուր
Հոգիք հայկազանց բորբոքին ի հուր
Որք երկնաւորին պատկին եք կարոս
Որք երկնաւորին փառաց երկնայորդ
Հոպօն արի արանց մանկունք
Հայրենատրեմ հայկազունք
Հապօն ի զեն գունդ ի գունդ
Յեռեալ ի պար թունդ ի թունդ
Ի զեն ի վրեժ օն անդր յառաջ
Ի զեն ի վրեժ մի ձախ մի յաջ:
Օն անդր յառաջ
Մի ձախ մի աջ
Օն անդր յառաջ
Յառաջ յառաջ
Հապօն յառաջ:

1890ի տարեդարձին ծրագրուած էր Էրզրումի ցոյցը, Եէտի-գուլէի Հիւանդանոցի հանդիպակաց պարտէզին մէջ։

Հնչակը իր առաջին գործունէութիւնը պիտի ցուցադրէր թէ հոս Պոլիս և թէ գաւառներու մէջ, այս անգամ ալ Էրզրում։

Պատրուակ մը պէտք էր. առիթ մը ստեղծել գտնելու էր.

Կառավարութիւնը լուր առած ըլլալով որ, Ռուսահպատակ հայեր զէնք կը փոխադրեն Էրզրում, հարկ կը տեսնէ նախազգուշական միջոցներ ձեռք առնել։

Այս առթիւ Առաջնորդարանի մէջ կատարուած պարզ խուզարկութիւն մը, Հնչակեաններուն համար ցոյցի միջոց մը

կ'ըլլայ։ Էրզրումի տեղական մամնաճիւղը, գլխաւորութեամբ Կէրէկցեանի կառավարութեան դէմ ցոյց մը կը պատրաստէ։

Խանութները կը գոցուին, Հնչակի համակիրները եկեղեցին բակը կը հաւաքուին և կը բողոքեն կառավարութեան դէմ, առաջնորդարանին մէջ խուզարկութիւն կատարուած ըլլալուն համար։

Տիեզերքի վրայ արդեօք ո՞ր կառավարութիւնն է որ իր գերիշխանութեան տակ ապրող ժողովուրդի մը հրահանգներուն կամ անոր քմահաճոյքներուն համաձայն կը վարուի նոյն այդ ժողովուրդին հետ։

Սէլորդ է ըսել թէ, այս ցոյցին ալ միակ նպատակն էր օտար միջամտութիւն հրաւիրել երկրին վրայ և անկախութեան գաղափարով օրօրել, պատրաստել ժողովուրդը։

Հնչակը առաջին անգամ Էրզրումի ցոյցով կ'սկսի իր չահատակութիւնները ուր յետոյ կը կազմակերպուէին նաեւ գաղտնակցութիւնները, որոնց պարագլուխները սահմանադրական Ռէժիմին Օսմ. Երեսփ. ժողովին անդամ պիտի ընտրուէին, հանդիսաւորապէս և անամօթաբար դաւելու համար զիրենք մեծարող, ուսնուցանող պետութեան դէմ։

ՍԱՍՈՒՆ.— Հայ յեղափոխական կազմակերպութիւնները միահամուռ կը մեծարեն, կ'անմահացնեն Սասունի դէպքերը, և անոր հերոսները մասնաւոր հատորներ նուիրած են այդ դէպքերուն՝ ամէնքն ալ ուռուցիկ և չափազանցեալ ոճով։

Այդ հատորները վերլուծելով կուգանք կը յանդինք դարձեալ սա եզրակացութեան թէ, կուսակցութիւնները պարզ գործիքներ սա կամ նա պետութեան ձեռքերուն մէջ, ամէն ջանք ի գործ կը դնեն օտար միջամտութիւն հրաւիրելու երկրին վրայ։

Սասունի ապստամբութեան անցեալէ առաջ, տեսնենք թէ ո՞վքեր են այդ հերոսները...

Կուսակցական թերթերու և հատորներու մէջ տեսնուած կենսագրականները բաւական են ապացուցանելու թէ, հերոս կոչուած այդ տգէտ, անուս ֆէտայիները կազմակերպութիւն-

ներու կողմէ վարձուած և չփայած գիւղացիներ են, մեծաւ մասամբ պարզ ասպատակներ։

Ասոնք են որ անմահացած են կուսակցական հատորներու մէջ իբրեւ գաղափարական գործիչներ, որոնք սակայն իրենց ըրած թողածին գիտակցութիւնը չունին։

Սասունի դէպքերու (կուսակցական) նկարագրականներուն մէջ, կուսակցութիւնները իրենք կը խոստովանին թէ, Դ. զօրաբանակի մէջ գործող, Պոլսէն աքսորուած կամ հեռացուցուած երիտասարդ թուրք սպաները մեծ ծառայութիւններ մատուցած են հայերուն բռնակալ ռէժիմին դէմ, և յետոյ մոռնալով իրենց այս հանդիսաւոր յայտարարութիւնները թուրք ժողովուրդը կը դատապարտեն...

Սասունի ապստամբութիւնն ալ ծրագրուած էր 1894ին։

Օրուան պատրիարքը Խորէն Աշրգեան, կուսակցութիւններու ատելին, վարչութեան հետ համախորհուրդ, նկատողութեան առնելով տիրող ռէժիմին մայնութիւնը, կը ջանար մեղմացնել գաւառներու վրայ սաւառնող սարսափն ու արհաւիրքը։

Աշրգեանի այս ընթացքը, խաթիյէութիւն նկատող Հնչակեանները ուզելի լայն ասպարէզի մը մէջ գործելու և մանաւանդ պատրիարքարանն ալ իրենց նեցուկ և պաշտպան ունենալու համար, կը ծրագրեն սպաննել ornեան պատրիարքը՝ Խորեն Աշրգեանը։

Պոլսոյ Հնչակեան ահաբեկիչ խումբը իր գաղտնի նիստերէն մէկուն մէջ գաղտնի քուէարկութեամբ որոշած էր Աշրգեանի սպաննիչը։ Տիարպէքիրցի Յակոբ անուն երիտասարդ մըն էր, որ պաշտօն ունէր սպաննելու Աշրգեան պատրիարքը։

1894 Մարտ 13-25ի կիրակի առաւն։ Մայր եկեղեցիի բակին մէջ՝ հնչակեան ֆէտային իր ձեռքի զարտաղը երեք անգամ քաշեց, բայց ի մեծ դժբախտութիւն հնչակեան ահաբեկիչին զէնքը կրակ չառաւ և ոստիկաններ վրայ հասնելով ձերբակալեցին միամիտ գաղափարականը։

Այս դէպքէն քիչ յետոյ հրաժարեցաւ Աշրգեան և անոր յաջորդեց Իզմիրլեան Մատթէոս եպիսկ.ը՝ որ արդէն կանխաւ ընդունած էր կուսակցութիւններու ծրագիրը։

1895ին սկսաւ Սասունի առաջին ապստամբութիւնը, որուն գլխաւոր ղեկավարներն էին Մուրատ և Տամատեան։

Իզմիրլեան կատարեալ անխոհեմութեամբ գլուխ կանգնեցաւ այս ապստամբութեան, մինչդեռ կրնար առաջքն առնել այս երկրակործան արարքին...

Այս արիւնոտ դէպքին արդիւնքը սա եղաւ որ Թուրքիոյ բոլոր ժողովուրդները երեք չորս շաբաթ օրօրուեցան Մայիսեան բարենորոգումներու խաբուսիկ խօստումներով։

Երկրորդ ապստամբութիւնը ծայր տուաւ 1905ին, այս անգամ դաշնակցութիւնն է որ կ՚ստանձնէ ամբողջ պատասխանատուութիւնը ղեկավար նշանակելով Աղբիւր Սերոբը, կամ Սերոբ բաշան։

Հոս նոյնութեամբ կ՚արտատպենք, Սասունի ասպատակներէն ծանօթ խմբապետ Անդրանիկի՝ իր ձեռքով գրած ինքնակենսագրականը։

Եթէ չեմ սխալիր յուլիս 16-ն էր (1895) երբ մենք անցանք սահմանը Ղարաուրդանի գծով (Սարիղամիշի մօտ)։ Բոլորս ալ զինուած էինք բերդանկաներով, բացի դրանից, իւրաքանչիւրս վերցրած էինք 260 փամփուշտ, խանկալ եւ հինգհարուածեան ատրճանակ։ Սահման անցածնիս գիշերը պիտի գնայինք 8 ժամուն ճանապարհ, որպէս զի հասնէինք որոշեալ դիրքը։ Բայց դիրքին չկրցանք հասնիլ, մեր տանապետներու քալել չկարենալուն պատճառով։ Արեւը բարձրացած էր, բայց մենք դեռ չէինք հասեր մեր դիրքին։ Մեր մօտերը կային վրաններ, բարեբախտաբար առանց նկատուելու բարձրացանք որոշեալ դիրքը ուր մինչեւ երեկոյ մնացինք առանց ջրի։ Փակագծի մէջ ըսել պէտք է որ մեզմէ առաջ էրզրում գացած էին Ապրօն (Մկրտիչ Սահակեան) Ջալլաթը եւ Քեաֆթառ Արշակը։ Երեկոյեան դէմ Ջալլաթը դիտակով դիտեց շրջակայքն եւ ճանապարհները ու մութ դալան ճանապարհ ընկանք։ Այդ գիշեր պիտի հասնէինք Դոմավար (արագ գնալով՝ 8 ժամ) երկու ժամ չգնացած մեր տանապետները էլի ոտքերնին կախ տւին։ Սթիպած եղանք նորէն առնել նրանց հրացանները, փամփուշտներն ու տոպրակները, Վալաղը ժամացոյցէն բան չէր հասկնար եւ անդադար կը շտապեցնէր, ըսելով թէ էլի կը լուսանայ մեր

վրան եւ մենք կը մնայինք առանց դիրքի Բասենի դաշտի վրայ։ Գացինք ճանապարհի գրեթէ կէսը եւ մեր երկու տանապետները բոլորովին դադրեցան քալելուց։ Մտածեցինք որ խումբը թողնի այդ երկու տանապետները եւ արագ քալելով առաջ անցնի, որպէս զի եթէ վնասին, թող այդ երկուքը մնասին եւ ոչ ամբողջ խումբը։ Վերցրինք նրանց զէնքերը, թողնելով միայն մի-մի ատրճանակ, 2 ժամացոյց եւ մեզ տուած 6 ոսկի փող։ Մենք սկսեցինք արագ քալել, բայց լոյսը բացուած էր, երբ մենք հասանք Արազի եզերքը։ Ուշ ըլլալու պատճառաւ սխալեցանք շորեր չի հանել եւ այնպէս անցնել ջուրը։ Դեռի եզերքէն մինչեւ Գոմավար մի ժամուայ ճանապարհ կար։ Ես եւ Խնուսի խրլրլ չաւուշցի Մարտիրոսը 200 քայլ առաջ էինք։ Նկատեցինք մի սայլ, գաղտագողի մօտեցանք, տեսանք որ սայլապանները, որոնք արտի մէջից ցորենի օրան պիտի վերցնէին հայերէն կը խօսեն։ Դուրս եկանք յանկարծակի, բռնեցինք այդ մարդկանց ըսելով «Մի՛ վախենաք, մենք հայ ենք, խումբը յետեւից կը գայ, միջոց մը ըսէք, ի՛նչ ընենք։ Էս մարդիկ վախվխելով ըսին «բերէք մեր զէնքերը բառնանք սայլի վրայ խուրձերի մէջ եւ տանինք գիւղը, հոն ալ պօսանների մէջ կը պահենք։» խումբն ալ հասաւ, բարձինք մեր զէնքերը սայլերու վրայ, թաղցնելով խուրձերու մէջ, մենք ալ մի-մի ատրճանակ պահելով բոլորնիս թաղուեցանք պօսաններու մօտ։ Մենք առաջուց իմացեր էինք որ, Գոմավար կը գտնին Ռ. եւ Ս. անուն լաւ ազաներ։ Մենք սայլապաններուն պատուիրեցինք որ դրանց կանչեն։ Ջիաւոր մը ուղարկեցինք Էրզրում Ապրօի եւ Ջալլաղի մօտ, որպէս զի էնոնք կարգադրութիւն ընեն եւ մեզ ճանապարհածախս տան։ Իսկ մենք նոյն երեկոյեան վերցնելով մեր զէնքերը՝ գոմավարէն իյանք, գացինք Իլխու (կամաց քալելով 3ու կէս ժամ) մեզ հետ եկան նաեւ Ս. եւ Ա.։ Երկու օր սպասեցինք Իլխու, այնտեղից անցանք Հարանքար։ Նոյն օրը հոն մնացինք, երկրորդ օրը Էրզրումէն եկան Ջալլաղը եւ Քեսէֆեան Արշակը, տին մեզ մի ժամացոյց 3 ոսկի ճանապարհածախս եւ ճամբայ դրին։ Առաւօտ լուսաբացին հասանք Եահեա։ Վալանդնիս գնաց լուր տաւ մի տան հայերուն, նրանք ալ եկան տարան մեզ մի Թաւլայի սխոռ) մէջ։ Այդ օրը անցկացրինք մենք մսուրներու եւ Թրիքներու վրայ, մեզ հիւրասիրեցին, կերակրեցին։ Երեկոյեան ճանապարհ ընկանք, հասանք Խնուս-Խօզլու Գասպարի գիւղ։ Այնտեղից էլ գացինք Բալիկի գիւղը, որոշուած էր, որ մենք սպասենք մի տասը օր, մինչեւ վերջ գալիք խմբերը մեզ հասնէին։ Սպասեցինք 12 օր, խմբերը չեկան։ Պ. Ս. անուն Սասունցի մը ալ կար Զաւուշ գիւղում։ Շէյխ մը կար, որը բրդերու ըսելով սուրբ էր, գնդակ չէր բաներ նրան, գիշերը կ'երթայ Մերքա եւ Մեհինա եւ նոյն գիշերը կը վերադառնար։ Այդ լուրը հայերու մէջ ալ կը պտտէր։ Պ Ս. Կրսէ. մի հատ զարկեմ, տեսնեմ գնդակս կը բռնէ թէ չէ՛։ Շէյխը ծիով կը հանդիպի հոն. Պ Ս. կը զարկէ, կ'սպաննէ։ Այդ տղան իր անցեալի մէջ Սասունում եւս շատ կրս-

ռիճ է եղած, շէյխի դիակը կը տանին, կը պահեն լճի մէջ։ Այդ օրերը եկաւ Էրզրումէն Ապրօն, խուզարկութիւնը շէյխի պատճառով սասկացած էր։ Մենք խնուսի հայաբնակ գիւղերում ցրւած էինք 2—2 մարդ։ Խնուսցիք կը խնդրեն Ապրօէն, որ խումբը հեռացնէ, ըսելով, որ 7 խնուսցի տղայ մնան, իսկ մնացածները երթան։ Ապրօն 22 օր մնալուց վերջը մեզ դրաւ ճամբայ։ Բացի 7 խնուսցի տղաներէն՝ Ալաշկերտցի Մ. եւ Բաբերդցի Ա. որոնք հեռուն մնալու պատճառով չկրցան հասնել խմբին հոն մնացին, ըսելով Ապրօին, որ եթէ հոս կռուիլ հարկ ըլլայ, մենք ալ այս 7 տղաներու հետ կը պաշտպանենք, ունենալով բաւական զէնք։ Ապրօն Վալադին իր քով պահելով, վերադարձուց նրան Կոմկան։ Նոյն օրը գացինք Բինգօլա. սարի տակը, երկրորդ օրը անցանք Կիւմիշիսի կողքէն գացինք Գեանզէր-Էմիր։ Անցնելից երրորդ օրը դուրս եկանք լուսացացին հասանք Ս. Կարապետի անտառը։ Վանքի մէջ կը գտնէին մրշ տնտենական հոն մնացող 2 ծիսաւոր ոսիկաններ։ Առանց միաբան վարդապետին իմաց տալու՝ Մ. Սարկաւագը մեզի հաց եւ ուտելիք բերաւ։ Երեկոյեան դուրս եկանք գացինք Աշոյ դաշտի Ղըզըլ-աղաճ գիւղ (հրայրի գիւղ) երկու օր հոն մնացինք։ Բերդկցի Գեորգը եւ Ապրօն ուրիշ ճանապարհով ծպտեալ շորերով՝ ցերեկով Խնուսէն եկած էին Մուշ։ Ապրօն ամիջապէս եկաւ մեր քովը, նա մեր աւելորդ փամփուշտները հաւաքարիմ մարդու յանձնեց, իսկ փամփուշտները Թողեց մեր քով։ Ղըզըլ-աղաճցիք պատճառաբանելով որ այժմ գործ չկայ, խնդրեցին Ապրօէն, որ իրենք Ղըզըլ-աղաճ մնան։ Ապրօ համաձայնեց՝ Թողնելով իրենց քով հրացաններն ու փամփուշտներ, հոն մնացին 2 տանապետ եւ 5 զինուոր, բոլորն ալ Ղըզըլ-աղաճցիք, մնացածներս որոնք զանազան եկեղեցիներից էինք, ուղարկեցանք Սասուն։

1914 թիւ 4-(209) Ապրիլ էջ 262։

Դաշնակցական հերոսներուն մէջ Դրօ, Խէչօէն եւ Նիկոլ Դուման՝ որ ռուսական զնտանին մէջ սպաննուած է 1910ին, մեծ դեր կատարած է Սասունի վերջին ապստամբութիւններուն մէջ։

Նիկոլ-Դուման Խանասորի ապստամբութեան հերոսապետն է, անոնց այս մասին դաշնակցութեան վերաբերեալ։

«Խանասորի արշաւանքի միջոցին Նիկոլ-Դուման ձայնն էր, որ հնչում էր կտրուկ ու զօրաւոր. տղերք ջան, կանանց ու երախաներին մի ձեռք տակ այժմս, տղամարդկանց անխնայ մորթոտեցէք։ 1914 Սեպտեմբեր-Դեկտեմբեր-թիւ 9-12 էջ 242 Դրօշակ։

Ապստամբութիւնը սակայն սահմանափակուած չէր միայն մէկ կեդրոնի մէջ, Սմասիա, Թօքատ, Մուշ, Վան ապստամբութեան դրօշ պարզած էին և Հայ Յեղափոխական կուսակցութիւնները կը հրճուէին իրենց գոհերուն վրայ...

Մանրամասնութիւնները աւելորդ են։

Սասունի եւ Խանասորի մառզը

Դարձեալ փայլեց Սասնոյ գլխին
Ազատութեան դրօշակ։
Կեցցէ հայրենիք գոչելով
Բարձրացրին աղաղակ։
Թնդաց որոտաց ձայներից
Ողջ աշխարհը հայկական
Խումբ, խումբ կ'գան հայ զաւակներ
Հայրենիքին օգնութեան։
Գուրգեն, Վահան, Հրայր-դժոխք
Քաջ Անդրանիկ զեկավար,
Տաշուրիկի լեռներումը
Շրջում էին անդադար։
Կրակ տեղաց հայ քաջերի
Բընակավայր դիրքերից,
Կոտրուեցին փաս թուրքերը
Սիոնի գնդակներից։

Զէյթունի ՏԱՍԹԱՆԸ, որ իր մէջ կը բովանդակէ նաեւ Հնչակեան գործիչներու խաբէութիւնները, զուրս մնաց Զէյթունի շարժումին մէջ ցոյց տուած էին։

Զէյթուն Մէրսիյէսի

Տինէյին աղալար տէսթանըմ զբսա,
Էլպէթ ալբրսընըզ զբսսէտէն հրսսա։
Բէնակեահմըզ տբր հազրէթի Իսա,
Զէյթուն մէտինի սէօյլէր տէհանի։
Էն էվվէլ ճէնկ Պէրթիզ զայբնտա օլտու,
Իքինճիտէ ասբլ զբշլա ուրուլտբ։
Իւիւնճիտէ չուզուր հիսար վուրուլտբ,
Տէօրտունճու Էնտէրին չէքտի ֆիղանի։
Պէշինճիտէ եէնի զալէ ուրուլտբ,
Ալթընճբ կէպան թիւրքիւնէ զուլմ օլտբ։
Եէտինճի պէօյիւք պէօյիւք ճէնկ օլտբ,
Ասբէր մաղլուպ օլուպ թէրբ իթտի ճանի։
Օլ Բարթուղիմ զբշլայա էնտի,
Զէբիպ զբլբճընբ էլինտէ թութտու։
Զապբթլար եէրտէն խաչբ էօբտիւ,
Միրալայ մէտո իթտի թիւմ էրմէնեանի։
Պէօրկիւ պաշընտա զբլբճ էլինտէ,
Խաչբ կէօբսիւնտէ, տուա տիլինտէ։
Ասբէր էյվալլահ թէպիմէրինտէ,
Ուպուտիյէթլերի ֆէրտ պէ ֆէրտ եանի։
Զապբթլարբն եիրմի պէշ խաթունլարբնա,
Տինիտի էմանէթ սիզ բունանիանէ։
Դօրբմայբնբզ թէսլիմ օլբն էմին ճանէ,
Խաչ կէօյսիւնտէ թամ տբր պունբն իմանի
Փէտէր Բարթուղիմէյի տիրսէն,
Աթա պինտիկինտէ մէրտիկի կէօրսէն։
Ճէնկ վազթընտա չօրճա տիւշմէն էօլտիւրսէն,
Ճէսուրլբզ վէրիր անբն ազիզ տէհանի։
Զէյթուն իկիթլերի զբշլայա կէլտի,
Պարոն Աղասիէր շատուման օլտբ։
Ասբէրտէն էյվալլահ սէսի տույբլտբ
Ասբէր թէսլիմ օլուպ պաստբ ֆիղանի։
Օլ կիւնլերտէ Զէյթունէ պիր կէօբ ինլէտի,
Գբշլանբն ասբէրի ֆիղան իյլէտի։
Էլպէթտէ թէնկրի հայ իմիշ տէնիտի,
Եէնիտէն թազէլէնտի էրմէնեան տինի։

Սօնրատան Մէրկիրեան զբշլայա կէլտի,
Իւչ եիւզ նէֆէր իլէ գօմանտան սարտը։
Հիւճում իտէն օրտընդն կիւնիւ գարարտը,
Լաշէլէրինի պրրագուպ գաչտըլար ճանի։
Զաքքը օղլը Ավազ պօղ պայբրլըտը,
Գրշլայը ալտրրան անդն ֆէնինի տիր։
Նէ մագատտա իսէ շէհիտ բէնտի տիր,
Էօլտիւկինտէ էլպէթ օլտը ֆիղանի։
Զէյթուն Թէբէոնտէ իւչ տէօրթ եիւզ բիշի,
Նազարէթ չաուշ տրր գօմանտան պաշը։
Հէր ճէնկ թիւրբլէրին սայբսբզ նաշի,
Զէրբէսլէր տէտիլէր Վալլահ էմանի։
Հէմ Պէրթիզ չայընտա տէօյիւշէն գուրտը,
Պինտի գբր աթընա գարշբյա տուրտը։
Պարոն հընչակիսթլէր պէհրէսինի կէօրտիւ,
Տիտիլէր կէօրմէտիք պէօյլէ արպանի։
Եէնի տիւնեա եղիա պիր գօլը պաստը,
Եա Սուրբ փրկիչ տէյուպ չօգ ասբէր բէստի։
Օսմանլը օրտուսընդն եէրիւնի սարստը.
Ըտիֆլէր ֆիրարրա գուրթարը ճանի։
Պաթ օղլը Սարգիսլէ հաճը Արթին Ազնբմեան.
Մահալլէճէ ճիւմէսիտէ գահրաման։
Տիշմէն իչիւն եաման տէրսէք բէք եաման,
Ճէնկլէրտէ սբտգլա տէօբտիւլէր գանի։
Մէտհ իտէլիմ Փանոս Զօրագեանի
Սալտբրտը օրտուլա գարա տիմանի։
Զէյթուն եէքիւնինին իւնվանը շանը.
Սիլահա սարբլոը սապի սիւպեանը—
Օն սէքիզ սաաթլրզ թիւմ էնտէրինի,
Ուրուպ խարապ ինթի թիւրք միւսլիմանի
Եէնի տիւնեա Նշան Փանոս Զաքրեան
Էնտէրինէ օլտը ճէնկլէրի եաման։
Հիւճիւմ զէմանընդա սարսը ասիւմանի,
Թիւֆէնբլէրէն չրման բէնկլի տիւմանի։
Աշրզ Նշան, Պետրոս, բէօր Նասի
Ալաճատը Մանուէլ օլտը պիրինճի—։
Հայ ֆէդայիլէրէն ինթիգամ ուճը,
Էնտէրին թիւրբլէրինդն այտրլար աճը։
Պարոն Թէրսմէկլէսեան բէս անը սարսը,
Տութուպ Մէհմէտի իլբ ելֆա բէսի։

Էնէրինէ Թիւրքէրի զայէթէ բուսը,
Ֆիղանլէրի չրգոը ՝արշը բահմանա։
Ֆրանսայը բահիպ օյոը զօրպաճը,
Էնէրին իլքեաս հրս իթի ամը=։
Թիւրք զրզարը թէպլիմ օյոբլար պամը,
Տէտիկէր սօղրու տրր Իսա իմանի։
Շու էնէրինէ էրմէնի մահպուս,
Իմտաս չաղբրոը Բարթուղիմէուս։
Գաթլ իթտիկէր տախի եուսուք չավուշը,
Էօլիմէն զուրթրլոը մահպուսլարն ճանը։
Բահիպ Բարթուղիմէոս Թիմ բէօյիւլէրի
Ամճախպ իթտիկէր շօլ հիւճիմէրի։
Շու էնէրին զապարճրլարը,
Տաս ու ֆէրեաս իլէ օյոը ֆիղանի—։
Գու հիւճիմէրի Թիմտէն կէօրտիլէր,
Եէնիճէ գալէյ իմտաս կէյտիկէր։
Լաթին ռուհպանլարընը տա գուրթարոբլար,
Ճիմէսի պիրլիրտէ օյոը խէնտանի։
Լաթինլէր տէ Զէյթունա կէյտիկէր,
Հայ իլէ պիրլիրտէ օլորզ տէտիկէր։
Գուրթարոբլանլար շէմմաս ռուհպան իտիկիր,
Մէտի իթտիկէր Զէյթունլրլարն իմանի։
Զէյթունէ միսաֆիր հայ չօգ վար իտի,
Ճէնկճի ազ ամմա, բէր իկիտ իտի։
Զալլաթ էսմէլեան չօր ասքէր եէտի,
Էնճամ շէհիտ տիշիպ կէօրտիւ իմանի։
Ավրաբաան մախսուս կէլէնլէր,
Շէօհրէթլէրի իսէ Հնչակ սարոնլար։
Միլլէթ նամընա ֆէտաի տիրլէր,
Հայկազեան նէսլինին հէր զահրամանի—։
Պարոն Եղիա հնչակլար պաշի,
Վալլահ շիպէլէրտէ պուլլնմազ էշի։
Պարոն Ապահ տէտի Թիւրքի զրալրմ,
Էսկի միլլիմիզէ սահիպ օլալրմ։
Ասլան կիպի մուհարէպէ գուրալրմ,
Գալտրալրմ արատան, եէրտէն տիմանի,
Պարոն Հրաչեայ իսէ բէր նէսարէթլի,
Ճէմալինէ պազսան արսլան սուրէթլի։
Միլլէթ խէլասընա զայէթ ազիմլի,
Ուրալրմ տէրտի չրզարսուն տիմանի։

Մլէհ, Նշան, Կարապետ Ֆէտաիլէր,
Էյուճէ շէճաաթ իպրազ ինթիլէր։
Խայլուճա Թիւրքլէր զուրշունա նուրտուլար,
Զօգնա աղլաթտրլար Թիւր Միւսլիմանի։
Եիւզ օն պին ասքէրէ գարշու Զէյթունքն իքի պինի,
Դըրգ պէշ կիւնտէն խիթամ վէրտի պու ճէնկի։
Փաշա մաղլուպ օլուպ տէյիշտի բէնկի,
Տէտի բէզիլ օլտրմ եազրգ պու շանի։
Հնչակ, Դրօշակ իկիթլէր վէ զայրհիւմ,
Էֆքեարլարը միլլէթէ զայրէթլէր։
Էվրօբա Թէվէճճիհիւնի կէօզէթտիլէր,
Էրմէնեան կէօրմէտի գանի։
Աշրգ Ֆէրտի պու տասթանի սէօյլէտի,
Ինուպ աշգընքն տէրեայը պուլանտը։
Թում հավատիս Էվրօբայա տուլուլտը։
Զէյթուն Ֆաթիհ օլուպ գըլտը ինվանի։

Սոյն համառօտ նկարագրականէն ետք, փաստացի կերպով հաստատելու համար մեր ըսածները, հոս խօսքը կուտանք գաշնակցական նշանաւոր! չէֆի մը՝ որ իր յեղափոխական գործերովն ու երկասիրութիւններով պաշտելի դէմք մը մնացած է դիտակից շարքերուն...

Ահա թէ ինչ կ'ըսէ իր «ՐՄԲՈՍՏԱՑՈՒՄԻ ՀՈՎԵՐ»ուն մէջ.

Բացուող բերաններ.— Ստեփան Փափազեան Ազգ. ժողովի մէջ.— Ապստամբութեան հրաւէր.— Գործիչների փաղանգը 70ական թուականներում.— Նուպար Շահնազարեան Սաները եւ «երկրագունտ».— Փորթուկալեան եւ «Ասիա».— «Դէպի Հայաստան» կարգախօսը.— Փորթուկալեան Վանում եւ Թիֆլիզում.— Ռուսահայոց աջակցութիւնը.— Ծերենց եւ վէպերը.— «Փունջ» ժամադրավայր ազատական մտաւորականութեան.— Զէյթուն.— Ցարութիւն Զաբրեան։

Բոլոր շրթունքները չէին պապանձուած։ Պատմական փոթորկալի վայրկեանը, ռուսաց յաղթական արշաւանքը, որ ամենի աչքում ազատարար հողմն էր, կոչուած վերջ տալու մի անգամ ընդ միշտ կիսապուսնի տիրապետութեան, վերջա-

պէս տասնեակ տարիներից ի վեր հնչող՝ պահանջների դիտակցութիւնը, այդ բոլորը կարող չէր չվառել Թիւրքահայ տաւորականութեան դէմ մի քանի զգայուն ներկայացուցիչներին։

Ահա Ստեփան Փափազեանը, որ կրակ է կտրում Ազգ. ժողովի մէջ, երբ լուր է գալիս, թէ Սատրազամը պաղ, և թշնամական խօսքերով է դիմաւորել և ճամբու դրել խառն ժողովի պատգամաւորութիւնը (1879ի Յունվարին)։

Ստեփան Փափազեան Ամբիոն է բարձրանում և արտասանում է դարձեալ մի ուժեղ ու յանդուգն ճառ, արհամարանքով ժխտում է նա Սատրազամի խօսքերը։

Ստեփան Փափազեանի ճառը, ապատամբութեան կոչ էր Ազգ. ժողովի բեմից։

Ստեփան Փափազեան, որ 1878ի Վեհաժողովի միջոցին պարիսաբ Վարժապետեանի կողմից Բերլին էր ղրկուած, իբր խորհրդատու հայ պատգամաւորութեան, մէկն էր ժամանակի ականաւոր դէմքերից։

70ական թուականներին տեսնում ենք Պոլսոյ մէջ երիտասարդ գործիչների մի փաղանգ, —Շահնազարեան, Փորթուկալեան, Չերազ, Արփիարեան, Տէմիրճիպաշեան են.— որ վերանորոգչական ձգտումներով տոգորուած, եռանդով արծարծում էին Ազգային մեծ գաղափարը, թէ մամուլի ու գրականութեան մէջ, և թէ դպրոցական ասպարիզում։

Շատեր այդ երիտասարդներից Նուպար Շահնազարեան դպրոցի սաներ էին։ Նրանց ջանքերով դեռ 1870ին հրատարակուեց «Երկրագունդ»ը Շահնազարեան սերունդն էր, որ ուխտել էր «ազգասիրութեան ախոյեան ըլլալ»։ Եւ կ'ուզէր դառնալ Պոլիս — կենտրոնում ազգ. քաղաքակրթութեան մի վառարան, որ պիտի ճառագայթէր դէպի ամէն կողմ։

«Ցառաջ, դէպի լոյս... Նատրբերութիւնը մահ է։ Շարժինք» և այլ նման բացագանչութիւններ։ Արծարծում են ազգի ու հայրենասիրութեան վեհ գաղափարը, երգում են հայրենիքը, դրուատում են ազատութիւնը։

Եւ մինչ երիտասարդ նորընծաները պաշարուած էին ընկերաբանական խոհերով, բանաստեղծ Ֆեղիկեան գրում է իր Եփրատայ հառաչանքը որ փոքր ինչ յիշեցնում է Պատկանեանի «Մայր Արաքսին»։

Տեսէք թէ ինչպէս Եփրատայ եզերք լոյն են տիւր,
Ալիքն են պղտոր, փրփուրք վշտածին, նուագք թափուր,
Իւր ուղուց քաղցրիկ պահած յիշատակն այպէս դարերով,
Կարօտն ի սրտին հոսի գլխակոր, կ'երթայ դեռ յուսով,
Թէ մի օր անշուշտ դառնայ նոր տարին իւր Մասեաց Սարին։

*** 1873էն ի վեր այդ երիտասարդ և հայրենասէր շարքերի մէջ մէկը առանձնապէս գրաւեց հանրային ուշադրութիւնը, իր տաք յեղափոխական խառնուածքով։

Մկրտիչ Փորթուկալեանն էր, որի վիճակուած էր յետագայում հիմնել առաջին հայ յեղափոխական կուսակցութիւնը և դառնալ ռահվիրայ հայ նորագոյն շարժման։ 1873ից նա սկսեց հրատարակել Պոլսում իր թերթը Ասիա որ մի քանի տարի կեանք ունեցաւ։ Փորթուկալեան չափազանց ըմբոստ երևաց իր շրջապատին և վերջինը դաւեց նրա դէմ ու խափանել աւեց թերթը։

Բայց շուտով վրայ հասաւ գործնէութեան աւելի հրապուրիչ մի շրջան ազատասէր երիտասարդի համար, հիմնուեց Սուրատեան միութիւնը։

Բարեգործական և կրթական անուան տակ հիմնուած ընկերութիւնները թրքահայերի մէջ նշանաւոր դեր են կատարել ազգ. ինքնագիտակցութեան տեսակէտից։ 60ական թուականներին կազմուեց «Անձնուէր» ընկերութիւնը։ Երկրորդ խոշոր ընկերութիւնն էր «Բարեգործականը» նրա նպատակն էր ԿԻԼԻԿԵԱՆ ՋԱՐԳԱՑՆԵԼ։

Արփիարեան վկայում էր, որ այդ ընկերութիւնները ազատական ծրագիր ունէին, որ նրանց վարիչները ուշք չէին դարձնի դաւանական խարդախութիւնների վրայ։ Բարեգործական կամ Կիլիկեան ընկերութեան ակումբի մէջ խօսել է Միքայէլ Նարբանտեանը. կաթոլիկ Մերենցը բաւականաչափ

դրամ հաւաքելով Կիլիկիա էր գնացել, ազարակ գնելու և երկրագործական վարժարան հիմնելու։

Երեք ընկերութիւններ կազմեցին. Արարատեանը, դպրաց-սիրաց-Արեւելեանը և Կիլիկեանը։ Նշանաւորը Արարատեան ընկերութիւնն էր, որին յաջողուեց բաւական սերտ կապ հաստատել Թիւրքահայերի Ռուսահայերի միջեւ, չնորհիւ այն կենդանի յարաբերութեան, որ ստեղծուեց Գրիգոր Արծրունուն և այդ ընկերութեան երկու գլխաւոր վարիչների, — Փորթուկալեանի և Արփիարի — միջեւ։

Արփիար — որ ըստ Փորթուկալեանի նոյն ինքը յաղագողն է ընկերութեան գաղափարի— պատմում է այն օրերի ժողովներն ու խորհրդակցութիւնները «Նոր կեանք»ի մէջ։ Հինգ վեց հոգի են ընկերութիւնը հիմնողները, մեծ մասամբ Մուրաա Փափայէլեան վարժարանի նախկին սաներ։ Ոմանք առաջարկում են Նարպանեան անունը տալ նրան, ի յիշատակ Ռուսահայ մեծ յեղափոխական նահատակին... Ըմբռոտներ էին այդ երիտասարդներ տիրող կացութեան հանդէպ և կրթական-դաստիարակչական նպատակներ հետապնդելով, Սրտի խորհում Հայաստանի ազատութեան գաղափարն էին փայփայում ու երազում։

Փորթուգալեան յանձն առաւ գնալ Հայաստան, իբրեւ նորակազմ ընկերութեան գործակալ։ Հայրենասէր երիտասարդը զարթ սրտով յանձն առաւ ամէն զրկանք, դիմեց դէպի հայաստանի սիրտը - լուսաւորութեան ուսումնասիրելի իր պաշտօնով։ Գնաց Վան 1876 ին չրջադայեց երկար, ուսումնասիրեց հողը կրթական հաստատութիւններ հիմնելու համար։ Նրա օրինակը բարի նախանձ և մրցում առաջադրեց միւս պօլսական ընկերութիւնների մէջ «դէպի Հայաստան» կոչը դարձաւ կարգախօս։ Արարատեան ընկերութիւնը կամաց կամաց մեծացաւ անդամների թիւն աճեց, պակասում էր սակայն ամենակարեւորը - դրամը, Ռուս - թրքական պատերազմի միջոցին Փորթուգալեան ուղեւորեց դէպի Կովկաս, Գրիգոր Արծրունուն, աշխատակցեց նրա թերթին և ձգտեց

ռուսահայ մտաւորականութեան ուշադրութիւնը ուղղել դէպի Պոլսի և հեռաւոր Հայաստանի մէջ սկսող գործը։ Փորթուգալեանի այցը ռուսահայերին, բերեց չուտով իր պտուղները։ Արծրունին ուժեղ կերպով հատաքրքրեց և խոստացաւ նպաստ հաւաքել «Արարատեանի» համար։ Արծրունու թելադրութեամբ թրքահայ երիտասարդ առաքեալը ներկայացաւ Կովկասեան իշխանութեան և թոյլտուութիւն ստացաւ հանդանակութիւն բանալու։

Հանդանակութիւնը սկսուեց ի նպաստ Արարատեանի,— և պոլսեցիների համար մեծ, ուրախալի մանակնկալ էր, երբ ռուսահայերը առաջին անգամ Արծրունու միջոցով փոխադրեցին նոր ընկերութեան համար հազար ռուբլի։ Փորթուգալեան վերադառնում է Վան, քաջալերուած գաղաՀ Արծրունու հեղինակաւոր աջակցութեամբ, մշակուած նրա փարներով։ Եւ հիմնած է Վանի՝ մէջ 1878 ի աշնան, իր համբաւաւոր վարժապետանոցը։ Վարժապետանոցը անկրօնութիւն կը քարոզէ – ձայնում էին սեւազգեստ դաւադիրներ։ Մի վարդապետ եկեղեցու բեմից ամենացած ձեւով գրգռում էր ժողովուրդը «անհաւատութիւն սորվեցնող» վարժապետանոցի դէմ։ Խռովութիւն, յուզմունք Վանի մէջ։ Լուր տարածեցին, վերջապէս թէ՝ Փորթուգալեան կուլտուրականութեան վարագոյրի տակ իրօք ըմբոստ յեղափոխական գաղափարներն էր սերմանում Վասպուրականի հայ երիտասարդութեան շրջանակներում։ Ճշմարտութեան բաժինը կար անշուշտ, այդ դաւաճան ոլորմի մէջ։ Եւ համակրելի ձեռնարկը խափանուեց, Փորթուգալեանին արգիլուեց մնալ Վասպուրականում, նա նորէն դարձաւ աքսորական, վերադարձաւ պոլիս։ Սակայն այնտեղ էլ մթնոլորտը չափազանց նեղող էր՝ ազատասէր քարոզչի համար և մի քանի տարի յետոյ նա ինքզինքը նետեց Եւրոպա, հաստատուեց ընդմիշտ իր յեղափոխական դատարանով Մարսէյլի մէջ։ Վարժապետանոցը իր կարճատեւ գոյութեամբ իսկ չափազանց արդիւնաւոր եղաւ։ Փորթուգալեան պատրաստեց սարկութեան որ-

բանի մէջ մի նոր սերունդ, ազատասէր և մարտական նոր դրութեամբ։ Աւետիսեանների սերունդը, որ գրկեց խանդավառութեամբ հայաստանի ազատութեան դրօշը և գնաց դէպի բանտ և կախաղան։ «Փորթուգալեանը ազատութեան շունչ մը փչեց ամբողջ Վանի վրայ, ասում է Արփիար, առանց Յեղափոխութիւն բառը արտասանելու պատրաստեց յեղափոխական սերունդ։

*
* *

Շարունակենք թիւրքահայ բոզոքի պատմութիւնը։ 70-ական թուականներին ենք։ Ըմբոստացման քարոզը- մերթ թոյլ և երկչոտ, մերթ զօրաւոր և յանդուգն - չարունակում էր հնչել թիւրքահայոց մամուլի և գրականութեան մէջ։ Ծերենց—Շիշմանեանը, հակառակ իր խիստ չափաւոր յեղափոխական խառնուածքին, լոյս է տալիս մի շարք վէպեր, որոնք Աբովեանի և Ռաֆֆիի երկերի հետ դալիս են հարստացնելու մեր «հերոսական» վիպագրութիւնը։ «Թորոս Լեւոն, Թէոտորոս Ոչտունի» կոթողներ են մեր ազգային գիտակցութեան արթնաձումի շրջանի, զարկ են տալիս իրենց ներքին հայ ռազմական ինքնաճանաչութեան, արծարծում են կռուի, ըմբոստացման անհրաժեշտութիւնը, նկարագրելով, վերարտադրելով գեղարուեստական հուժկու էջերի մէջ մեր պատմութեան հազւագիւտ, դիւցազնական դրուագները, ուր առաւելապէս փայլել է հայ ցեղի կենսական կորովը։ Պարբերական մամուլի մէջ 70 ական թուականների Փունջն էր ժամանակրավայրը հայ մարտական երիտասարդութեան։ «Պարտ և մարտ» խորագրի տակ Տէմիրճիպաշեան գրում էր ազատաչունչ այլաբանութիւն, սէր։ Քսաներորդ դարը - ասում է նա միլիոնաւոր ուրուականի բերնով, պիտի բերէ ի չարս այլ ազատութիւնների, նաեւ հայոց ազատութիւնը, նա պիտի լինի դարերի մեծագոյնը։

Այն բարոյական սկզբունքներ, որ կ'ոսնահարեն, այսօր պիտի վերապրեն այն վեհագոյն դարին մէջ, այն ժողովուրդներ, որ մի անմիտ խնամակալութիւնների տակ են այժմ, չափահաս պիտի լինին եւ ինքնա-

գլուխ պիտի վառեն իւրեանց ճակատագիր. այն ժողովուրդներ, որք կը հեծեն լուծի տակ, պիտի փշրեն իւրեանց շղթաներ — ։ Ձեռ նշմարեր այն արշալոյս, որ կը ճառագայթէ Մասիսի գագաթին վրայ:

Ապա յիշենք վերջին Այվազեան վարդապետի խրոխտ և ցասկոտ հրաւէրը Փունջի մէջ։

Հայոց ազգի անմիս երկչոտութիւնը մինչեւ այն աստիճան հասած է որ, իւր թշնամի վիճակին վրայ խրովելու նշան անգամ չի յայտներ:

Երբ իւր յոյսերը սահմանադրութեան վրայ դրած էր, այսօր ալ իր բոլոր ակնկալութեանը կեդրոն դրած է դպրոցները եւ կ'սպասէ որ գտնէ ազատութիւն։ Բայց միթէ դպրոցին մէջ կը սորվի հայը, արիւնռուշ թուրը ջախջախել, պաշտպանել պէտք է ազգութիւնը՝ ինչ միջոցով ալ ալլայ, եթէ բարոյական ազդեցութեամբ, եթէ բռնութեամբ, եթէ յեղափոխութեամբ, միայն թէ հայրենիքը փրկուի։

*
* *

Եւ կարծես ի պատասխան այդ խուլ կոչերի ըմբոստացման յորդորների, յուր եկաւ 1878 – ի վերջերին – թէ Զէյթունցիք ապստամբել են։ Ընդհանուր զօրաշարժ չէր հայ հերոսական լեռնավայրում, ինչպէս 1862 ի յիշատակելի օրերին։ Փոքրիկ խլրտումն էր։

Բայց անգամ այդ փոքրիկ, խմբական ընդվզումը տեսնելն չփոթութիւն և իրարանցում առաջ բերեց Թրքական շրջաններում, ուր լաւ գիտէին որ Զէյթունը մեծ հայաստանը չէր, որ նրա հետ չէ կարելի կատակ անել։ Փունջի վկայութեամբ, հարիւրաւոր հայ խռովարարներ ապաստանել էին բարձր լեռներ և երկար ժամանակ թիւրք կառավարութիւնը փնտռում էր և ան չէր գտնում նրանց։ Երբ խլրտումից յետոյ Մարաշի միթէսարրիֆը զօրքի և քրիստոնեայ համայնքների 1 – ական ներկայացուցիչների հետ Կիլիկիոյ Մկրտիչ կաթողիկոսին միջնորդ են ձգում, որպէսզի հնազանդութեան հրաւիրէ Զէյթունցիները, վերջինները մերժում են։

Հալէպի վալին, մանրամասն տեղեկագիր զրկելով Բ. Դուռ, Զէյթունի անցքերի մասին, յորդորում էր զին. դատի յանձնել խռովարարներին, ապա թէ ոչ ասում էր «զէշ օրինակ» պիտի լինին և ապագայում հայկական նոր, աւելի մեծ ապըս-

տամբութիւններ պիտի ծագին: Այսու ամենայնիւ, կառավարութիւնը, վախենալով թերեւս ապատամբութեան ծաւալումից, չհամաձայնուեց իր սովորական տրակօնեան միջոցներով պատժել հայ լեռնականների այդ նոր թռիչքը: Զօրաք վարժապետը, որ ըստ երեւոյթին կարեւոր դեր էր խաղացել զէյթունեան այդ խռովութիւնների մէջ, Յարութիւն Զաքրեանն էր որ 90ական թուերի սկզբում, Զէյթունցի իշխան անունով դուրս էլ եկել Կովկասեան մեր շրջաններում: Ապա տարիներ յետոյ 90ական թուերին, նա հաստատուեց Բոլգարիայի Վառնա քաղաքում, ուր պարապում էր օրագրութեամբ: Այնտեղ էլ մեռաւ:

ՄԻՔ. ՎԱՐԱՆԴԵԱՆ

Դրօշակ Նօ. 2-3 Փետր—Մարտ 1914

Կուսակցութիւնները Պոլսոյ եւ գաւառներու մէջ

908 Յուլիս 10—904 Յուլիս 10

Օսմ. Սահմանադրութեան հռչակումէն ետք, պէտք էր որ դադրէր հայ կուսակցութիւններու քաղ. գործունէութիւնը:

Արդարեւ կուսակցութիւնները այս մտքով յայտարարութիւններ ալ ըրին:

Սապահ Գիւլ հնչակեաններու leaderը հրապարակաւ կը յայտարարէր Բերայի հայոց երրորդութիւն եկեղեցիին մէջ, իր առաջին ճառախօսութեան ատեն, թէ մենք հնչակեաններս կը դադրինք այլ եւս յեղափոխական գործունեութենէ եւ կը նուիրուինք բոլորաւուտ երկրին զարգացման ու յառաջդիմութեան»:

Նոյն յայտարարութիւնը նաեւ դաշնակցական չէֆ Ակնունիի կողմէ:

«Դաշնակցութեան գերագոյն նպատակներից մէկն էլ պիտի լինի, Օսմ. սահմանադրութեան պաշտպանութիւնը, տարրերի համերաշխութիւնը, ԻԹԹԻՀԱԴԻ հետ համերաշխ գործակցութիւնը»:

Նախորդ Ռէժիմի քաղաքական բոլոր դատապարտեալ-ները նոյն իսկ հայասպան ոճրագործներ, ազատ համարձակ կը շրջէին Պոլսոյ և դաւառներուն մէջ։

Իթթիհատական կառավարութիւնը պետական կարեւոր պաշտօններու կը կոչէր հայ մտաւորականութեան մէջ անուն ունեցող դէմքերը։

Երբէ՛ք տեղի չկար այլեւս քաղաքական— յեղափոխական գործունէութեան, քանի որ ազատ էր հայը, և մանաւանդ բոլոր միւս տարրերու մէջ յայտնի առաջնութիւն մը կը վայելէր։

Հայ ազգային բարենպատակ հանդէսներուն մէջ, ամենէն առաջ Իթթիհատի է՛ն կարկառուն դէմքերը կը տեսնուէին։

Շիշլի Գերեզմանատան մէջ կատարուած սգահանդէսին Երիտասարդ Թուրքերը իրենց կարող և կարեւոր անդամները ունէին, որոնք ազատութեան համար իրենց անձը զոհող անկեղծ հայ յեղափոխականները կ'ողբային հայուն հետ՝ եւ անկե առեղի։ Հայ բարենպատակ հաստատութիւններու համար սարքուած հանդէսներու նախագահութիւնը ստանձնողները, Կայսերական դերդաստանի և Իթթիհատի կարեւոր ներկայացուցիչներն էին միշտ։

Իզմիրլեան, Նախորդ Ռէժիմին իր անջատողական գաղափարներով ծանօթ ադսոնրեալը պօլիս կը դառնար։

Նմանապէս յարգանքի մասնաւոր արտայայտութիւններ կ'ըլլային Անոր՝ Օսմ. կառավարութեան և իթթիհատի կողմէ։ Կառավարութիւնը Օսմ. խորհրդարանին մէջ պատուոյ տեղը տուաւ հայերուն։

Իրաց այս վիճակին մէջ հայ քաղաքական կուսակցութիւն մը ոչ միայն բացարձակապէս տեղորդ, այլնաեւ վտանգաւոր էր ազգային և պետական կրկնակ տեսակէտներով։

Հայ կուսակցութիւններու համերաշխութիւնը շատ կարճ տեւեց։ Իզմիրլեանի Բ. պատրիարքութեան օրով կուսակցական ներքին վէճերը ծայր տալ սկսան և հետզհետէ անանկ սուր հանգամանք մը առին որ, կուսակցութիւնները սկսան զիրար բղկտել և սպաննել։

ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆ, ՀՆՁԱԿ, ՎԵՐԱԿԱԶՄԵԱԼ ՀՆՁԱԿ և յետոյ ապա ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՌԱՄԿԱՎԱՐ կուսակցութիւնները ձեռնարկեցին նոր կազմակերպութիւններու։

Երաքանչիւր կուսակցութիւն ազգ. շրջանակի մէջ բացարձակ առաջնութիւն մը, տիրապետող ձայն մը, դիրք մը կուզէր ապահովել։

Ամէն բանէ առաջ իրենց ձեռքերուն մէջ առին պատրիարքարանը և առաջնորդութիւնները։

ԱԶԳ. ԵՐԵՍԻԹԵՍԱՆԱԿԱՆ ժողովը քաղաքական դաւադրութիւններու կեդրոն մը դարձա էր, հոն այդ ժողովին մէջ, ժողովասրահի նրբանցքներուն մէջ կը դարբնուէին հրէշային ծրագիրները։

Այդ ժողովը չատոնց կորսնցուցած էր իր զուտ ազգային հանգամանքը, և բոլոր կուսակցականներու կեդրոնը եղած էր։

Հայ ազգային երեսփ. ժողովին մէջ պատուոյ աթոռը ունէին Ռուսիայէն վտարուած, Եւրոպայի զանազան անկիւններէն Պոլիս քշուած դիւանագէտները՝ որոնք իրենց ճառախօսութիւններուն մէջ Թուրքիան պետութիւններու շարքերէն չէին ճանչնար...

Հոն յղացուած էր Թուրքիոյ հայոց բաղձանքները յոտս ուսեալն հայոց կաթողիկոսին մատուցանելու բանաձեւը?։

Հոն՝ այդ ժողովին մէջ պատրաստուած էր բարեկորոգումներու խնդրոյն մէջ հայերու պահանջներուն ծրագիրը?։

Եւրոպայի մը մայրաքաղաքին մէջ տեսնուած է այսքան լայն իրաւասութիւններով ապրող ժողովուրդ մը։

Կուսակցութիւնները իրենց թաքուն նպատակին հասնելու համար, պէտք էին ձայն ունենալ նաև թաղերու մէջ, դպրոցներու մէջ։ Ասանկով միայն կարելի էր իրագործել իրենց կործանարար ծրագիրը։

Կուսակցութիւններն առ երեսս համերաշխութիւն կը քարոզէին, իրենք զիրենք Օսմ. կառավարութեան և Իթթիհատի բարեկամ կը ձեւացնէին, բայց ներքնապէս անկախութեան կը ձգտէին։ Կը դաւէին Սահմադրութեան դէմ, Պետութեան դէմ։

Յառաջ տարին իրենց կազմակերպութիւնները Պոլսոյ և գաւառներու մէջ։

ԳԼԻԽՊՆԵՐ հաստատեցին թաղերու մէջ։

Գլխպներու նպատակը պիտի ըլլար կրթութիւն և դաստիարակութիւն ջամբել նորահասներուն, մատենադարաններ, գիտական դասախօսութիւններ հաստատել։ Երեւութապէս այս էր նպատակը. բայց գործնականին մէջ, ասոր բոլորովին հակառակը։

Գիւլիւպները՝ որոնց անուններն այնքան անպատճառ հայ. յեղափոխական կեանքէ առնուած պէտք է ըլլային, ինչպէս. Ռաֆֆի, Ահարոնեան՝ Աբովեան, Մասիս, Արարատ, Վասպուրական, Տարօն, Ասպարէզ, ևն. նեռուեցան քաղաքական-յեղափոխական ասպարէզի մէջ։

Ընտրութիւններու ատեն, ջանք չինայեցին թաղային մատակարարութիւնները իրենց ձեռքը անցնելու՝ հեռաւոր նպատակներով...

Մատենադարանները զուրկ էին չինիչ հատորներէ, գիտական, ընկերական հատորներու թիւը շատ աննշան էր, ասոնց փոխարէն յեղափոխական գաղափարը ծաւալելու յատուկ գիրքերով լեցուն էին մատենադարանները, այսպէս, հայը ինչո՞ւ հայդուկ եղաւ, ինչ է սոցիալիզմը, յեղափոխութիւնը, բարեկորգումներուն հարցը, Երզրգին-Սասուն, Բանիսի բանիս, Արիւնոս ձմեռան, Բողոքի ձայներ, Շիրվանզատի և տակաւին խել մը գրգռիչ գիրքեր...

Գիտական դասախօսութիւններու տեղ յեղափոխական քարոզութիւններ կ'ըլլային, Հայաստանի անցեալը, Հայաստանի հին աշխարհագրոյցը, իմիւնարութիւնը ևն. հրապարակային դասախօսութիւններու հիմերը կը կազմէին...

ԹԱՂԱՅԻՆ ՄԱՏԱԿԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ձեռք անցնելէ ետք մտան դպրոցներէ ներս և յեղափոխական գաղափարը ներշնչել սկսան մատաղ սերունդին։

Դպրոցական բոլոր դասագրքերը յեղափոխական դրոշմ կը կրէին և մեծաւ մասամբ կուսակցականներու կողմէ յո-

ինուած գործեր էին։ Բոլոր դասագրքերը ազգայնականութեան, անկախութեան սկզբունքներուն վրայ պատրաստուած էին։ Եղածը պարզ Ամբոխավարութիւն մըն էր։ Հրապարակային դասախօսութիւններու առթիւ տեղի ունեցած վիճաբանութիւնները, խիստ շատ անդամ կռուի և ծեծի կը փոխուէին, մինչեւ իսկ սպանութիւններ կ'ըլլային։

Մասնաւոր ընտրութիւն մը կար երգերու մասին, յեղափոխական ապստամբական երգեր, շատերն ալ նախատական ոճով գրուած, կ'ուսուցուէին մատաղ սերունդին, տեսքանի մը նմոյշներ...

Հնչակեան մարշ՝

Հեռաւոր երկիր նստած դու նժ ։հն
Հայրենեաց բախտին մօտուս ես տեղեակ
Քարոզ քաջարի նոր սկզբանց վեհ
Յեղափոխութեան ձայնատու Հնչակ։
Նոր գաղափարի քո ցանած սերմանն
Ազնիւ պտուղներ հասուցնցան արագ
Կարին եւ Պոլիս որոտման նման
Անդրանիկ շարժման ձայնատու Հնչակ
Կոչնակ հնչեցուր հնչեցուր արագ
Թող հայք ոտք ելլեն ծագք մինչեւ ծագ
Փարի ծանր շղթան ծագք նոր արեգ
Ազատ ենք հնչէ ոսկեզօծ Հնչակ։

Դաշնակցական մարշ՝

Դաշնակցական խումբ զինեալ վեհիլ Սասուն,
Մեր քաջ եղբայրներ մեզ են սպասում,
Անդրանիկը քաջ իր ընկերներով,
Կ'ուզէ պատերազմ կ'սպասէ զարնան։

Խնբապետներդ հոգով են երդուած,
Ցեղայի ուժով զինում են առաջ.
Առաջ է կանգնած Անդրանիկը քաջ,
Գոռում է Գոչում, կ'ուզէ պատերազմ:

Հերիք եղբայրներ, մենք շատ ընկցինք,
Բաւական չէ՞ մեզ այսպան հատներնիք,
Մայր Հայաստանը ձեռքից հանեցինք,
Հիմա ուժ ունինք դարձեալ ետ կ'առնենք:

Ազատութեան հրաւէր

Ի զէն հայե՛ր, ի սո՛ւր եւ ի հրացան
Տաճկահայաստանից գոչում է մի ձայն
Լեռից ցեռ բնդում է անեղ հրաւան,
Թոռեր հայեր, թոռեր դէպ ի Հայաստան:

Տաճկահայաստանը ոտքի է կանգնում,
Սոխծաբար վրէ՛ժ, վրէ՛ժ է կանչում,
Արիւնով ներկում են բոլոր դա՛շտերը,
Արիւն է ոռոգում, բոլոր գետերը:

Թշնամին զարհուրած փախուստ է դիմում
Անիրաւ աւար ու գանձ հայերին բոլորում.
Յաղթութի՛ւն, յաղթութի՛ւն գոչենք մեծաձայն
Թշնամին յաղթուած է. ԿԵՑՑԷ ՀԱՅԱՍՏԱՆ:

Խանի երգը

Լուսին չիար մութ գիշեր էր,
Մի խումբ կերթար արագ արագ,
Տեսանք որ քաջ Խանի խումբն էր,
Զինուած էին բոլոր կրանք:

Երբ քաջ Խանը եկաւ Բասեն,
Թնդանօթներ արձակեցին,
Հայ քաջերի մօտիններից,
Գնդակները զոռզոռացին:

Հայաստանի հողի վրայ
Քաջը թափեց իւր արիւնը,
Մի քար, յիշէ չը մոռանաս
Կտրիճ խանի քաջ անունը:

Մենք անկեղծ զինուոր ենք

Մենք անկեղծ զինուոր ենք առանց ի վինակ
Ուխտել ենք ծառայել երկար ժամանակ
Պարսկաստանի խորքից եկել է նամակ
Գնում ենք բարով, կ'ուշանանք տարով
Արիւն, սուր ու նուր պատերազմի դաշտ կըսպասեն մեզի:

Ստամպօլը պիտի լինի արեան ծով
Ամէն կողմից կռիւ կը սկսի շուտով
Կոտրենք Բաշզպան, անցնինք հեշտ կերպով
Աջից Վարդանը, ձախից իշխանը
Գրաւենք Աղբարք տարածենք սարսափ, փառք դաշնակցութեան:

Քայլերգ Խանասորի

Կռուեցէք տղերք կռուեցէք քաջ քաջ
Անվեներ կանգնած բշնամուն յառաջ
Ցանկալի է մեզ միշտ ազնիւ մահը
Հեռու մեզանից ոսոխին անը,
Ցառաջ խիզախենք իբրեւ նահատակ
Ի զուր թող չ'անցնի մեզնից մի գնդակ:

Անա քիւրտերը փախչին սարսափած
Անա դիակներ արեամբ շաղախուած
Կրակ տեղացէք, անդադար կրակ
Փառք Դաշնակցութեան առաս է զնդակ
Այս անգամին ալ ցոյց տանք թշնամւոյն
Թէ ի՞նչ է հայուն ոյժն ու քաջութիւնն:

Հառաչանք Հայաստանի

Նպատակիս հասնիմ միայն
Թող զիս հանեն կախաղան
Սախատանեն խեղդուկ ձայնով
Պիտի գոչեմ ախ Հայաստան:
Ա՛խ Հայաստան սիրտս ու հոգիս
Քեզ նուիրեմ ընդունեա
Թէ կարելի թող ես մեռնիմ
Վերականգնի հեզ Հայաստան:
Ե՞րբ պիտի գոյ իմ բազուռ
Որ ես հասնիմ իմ ուխտին
Դրօշս ունիս ծածան ծածան
Ականակուռ թագ ի գլխին:

Մենք պէտք է կռուենք

Մենք պէտք է կռուենք եւ ոչ լաց լինենք
զգին կորուստը զենքով յետ խլենք
Այսքան դար լացինք, ո՛վ էր ըսողը
Մեզ ի՞նչ շան բերեց արցունքի ծովը:
Անէծք այն հօրը, չի մղում որդին
Իր ազգի սիրուն նա թափէ արիւն,
Ամո՛թ այն հային եւ բիւր նախատինք
Իր ազգի սիրուն չի գործում բարիք:

Մայր Հայաստան

Գերեզմանիս քով, արձանիս վրայ
Դրէ՛ք յաղթական թէ կորոգէ սա.
Թող տեսնէ Հայաստան, թող կարդան հայ քաջեր
Տեսնեն զիրենց ընկեր նահատակ է պառկեր

Մայր Հայաստանը:

Երբ կանգնած էի զինուորաց առաջ
Կ'ըսէի, կ'երգէի օ՛ն յառա՛ջ, յառա՛ջ.
Թէ կռուիմ հայ քաջեր ընդդէմ մեր թշնամեաց
Յոյց տանիմ մեր քաջութիւն հայ յեղափոխութիւն

Լակոնս բնաւոյն

Հանգչին ոսկորներ մեջը տապանին
Յոյց տանիմ գերեզման մայր Հայաստանին.
Այն ատեն թող կնիքեն իմ գերեզմանիս մեջ
Ազատ դրօշակներով, հայու զինուորներով

Ֆեդայիներով:



Կուսակցական-յեղափոխական այս երգերը, դպրոցներէ դուրս թատերական բեմերու վրայ ազատ համարձակ կ'երգուէին, առանց աչքի առջեւ ունենալու այդ երգերու անարգական, անջատողական ոճը:

Այս ալ իրր թէ բաւական չըլլար, փօնօկրաֆներու բլաքներուն մէջ ալ անցուցեցան այդ չինիչ! երգերը...

Եւրոպայի ո՞ր ազատական կառավարութիւնը պիտի համբերէր, պիտի ներէր այս ասոնցան անպատկառութեան, ո՞ւր, աշխարհի ո՞ր անկիւնը տեսնուած է այսքան անհերեսութիւն ո՞ր երկրին մէջ դպրոցները եղած են այսքան ազատ, ո՞ւր են հայ կուսակցութիւնները պաշտպանող Եւրոպայի ազատականները...

ԲՐՕԲԱԿԱՆՏԸ մանաւոր կարեւորութիւն մը ունէր կուսակցութիւններուն համար։

Վարձուած խօսողներ կային որոնք, թաղէ թաղ կը շրջէին ժողովուրդը կը պատրաստէին...

Ասոնք անպայման հնչեալարութիւն և կամ անկախութիւն կը քարոզէին։(*)

ԳԱՒԱՌՆԵՐՈՒ մէջ ալ միեւնոյն կազմակերպութիւնները՝ աւելի ընդարձակ սահմաններու վրայ։

Կուսակցական երիտասարդ առաջնորդներ քաղաքացի և շինական ժողովուրդը կը պատրաստէին, իրենց դիրքէն օգտուելով ամէն կերպ օժանդակութիւն կ'ընծայէին կուսակցապետներուն։

Առաջնորդարաններու մ ջէն վերցուած էր Օան. Թուղրան և Օան. Դրօշը, ասոնց տեղ պատերէն կախուած էին, Մայր Հայաստանը, Հայկ. զինանշանը կուսակցութիւններու յատուկ զինանշաններ և դրօշներ։

Մարիին և Մաւզեր զիրար խաչաձեւուած էին առաջնորդարաններու պատերուն վրայ։

ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ԹԵՐԹԵՐԸ գլխաւոր միջոցները եղան թէ հոս և թէ ներքին գաւառներու մէջ հրապարակով թելադրելու, պատրաստելու համար ժողովուրդը։

Օգտուելով մանաւանդ մամուլի ազատութենէն, կուսակցական օրկանները Պոլսոյ և գաւառներու մէջ իրենց անպատկառ յայտարարութիւններով ժողովուրդը կը գրգռէին կառավարութեան դէմ, երկիրը ոնկարդ և անիշխանական? ցոյց կուտային, օրէնքները կը քննադատէին, մէկ խօսքով արգելք հանդիսանալ կ'ուզէին կառավարութեան երկրաչէն քաղաքականութեան։

Արտասահմանի հայ թերթերը միշտ նախատական բան մը

(*) Սահմանադրութեան յաջորդով տարիներուն մէջ հայ մտաւորականութիւնը յեղափոխական երկասիրութիւններէ դուրս, զրեթէ զուտ գիտական կամ գրական ո՛ եւ է գործ չէ արտադրած, գիտիները յեղափոխութեան նուիրուած էին։

ունէին Օսմ. մայր հայրենիքին և զայն վարող ձեռքերուն դէմ։

Գրական և գիտական պարբերութիւններու նիւթը մի միայն հայկական հին կեանքն էր։

Բոլոր այս թերթերը, օրաթերթ թէ պարբերաթերթ վիճաբերը դեպի անկախութիւն կը պատրաստէին ՄԻԱՑՆ ԵՒ ՄԻԱՑՆ...

*** Ինչո՞ւ այսքան իրարանցում, ինչ էր անոնց նպատակը, Պոլսոյ մէջ Պատրիարքարանը, բաղդային մարմինները, իսկ գաւառներու մէջ առաջնորդութիւններ ձեռք անցնելով իրենց տարանդրութեան տակ պիտի ունենային նիւթական եւ բարոյական ոյժ մը, ի պահանջել հարկին ընդհանուր ապստամբութեան մը համար։

ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐԸ իրենց հրապարակային խօսքերուն հակառակ, դարձեալ մտան յեղափոխական ասպարէզի մէջ։

Անտեղի պահանջներով սկսան գաւառի ժողովուրդը յայտնապէս ապստամբութեան մղել։ Հողային խնդիրը, դաւակարգային հարցը կուսակցական օրկաններու վիճաբանութեան գլխաւոր նիւթերն եղան։

Սահմանադրութենէն ետք Ա. գլխաւոր դէպքը եղաւ Ատանայի խնդիրը։

Տարերի հաւասարաշխութեան, լեկաղ աշխատանքի նուիրող կուսակցութիւնները 1905ի Բարիզի գօնկրէսին մէջ որոշած էին ամէն գնով անկախութիւն պահանջել Կիլիկիոյ! այս դպատակին համար մեծամեծ պատրաստութիւններ ալ տեսած էին։

Թէև պահ մը մէկ կողմ նետուած էր այդ ծրագիրը և սակայն Մարտ 31ի յեղաշրջական դէպքը յարմար առիթ մը ստեղծած էր այդ մէկ կողմ դրուած ծրագրին գործադրութեանը համար։

Պէտք է ըսել թէ Ատանայի մէջ հայ եկեղեցականներէն ոմանք գլխաւոր առաջնորդները եղան այս ցաւաւոր դէպքին։ Ատանայի առաջնորդը վշտակիր եպիսկ. հրապարակով

ապատամբութիւն կը քարոզէր եկեղեցիներու մէջ, Դանիէլ-եան Ներսէս եպիսկ. խոնկի տեղ վառօդ կը ծխէր եկեղեցի-ներու մէջ, և ասոնք Օսմ. սահմանադրական կառավարու-թեան դէմ բացէ ի բաց անարգական և ապստամբական դիրք-մը բռնած էին։

ԻՐԵՐԱՍՊԱՆ կոխիները ծայր տուած էին. Օսմ. կառա-վարութեան հաւատարիմ քաղաքացիներ կ'սպաննուէին։ Այս-պէս Վանայ մէջ ոնարեւոյթ ձեռքերու կողմէ կ'սպաննուէր Գարամանեան էֆ. կուսակցութիւններու պրաֆօրոն քննա-դատած և ասոնց երկրակործան դաղափարներուն դէմ դրած ըլլալուն համար...

Եւ սակայն ԻԹԹԻՀատական կառավարութիւնը այս խնդ-դիրներուն մէջ անհատական հանդամանք մը տեսնել ձեւա-ցնելով տարբեր եղանակով մը կ'ուզէր կարգի բերել ըմբոստ կուսակցութիւնները։

ԻԹԹԻՀԱԴԸ ամէն բանէ առաջ վարձատրուած տեսնել կ'ուզէր բռնակալ ռէժիմին դէմ պոյքարողները՝ ասիկա գործ-ով ալ ցոյց տուաւ։

Թէ հոս և թէ զաւառներու մէջ կուսակցական հին գոր-ծիչները, մասնաւոր յարգանքի տարկայ էին, ԻԹԹԻՀատը ամէն տեղ գործ և պաշտօն կը հայթայթէր անոնց, իբրեւ զրկեալներ, իբր բռնակալ Ռէժի ի անիրաւեալներ։

Միւս կողմէ սակայն, նոյն այդ մինչոցին Պոլսոյ և գա-ւառներու մէջ հրատարակուող կուսակցական թերթերը, ինչպէս Վանեցոյ, Աշխատանք և Յառաջ կը շարու-նակէին խոովիլ, անկերսարան ցոյց տալ երկիրը, և երբ դիտողութիւն կ'ըլլար այս թերթերուն դէմ, ապերախտ-ները անպատկառօրէն կը յայտարարէին թէ՝ արտասահմանի, մասնաւորապէս Սուերիայի մեր մասնաճիւղերը սիրաշահելու, զանոնք արդուն! պահելու համար ստիպուած ենք այսպէս վար-ուիլ, դուք ազատ եք հերքելու եւ մենք ձեր հերքմանագիրը կը տը-պենք նոյնութեամբ։

Ինչ լիրբ և չնական արտայայտութիւն։

ԶԷՆԲԻ ԽՆԴԻՐԸ մեծապէս կ'զբաղեցնէր առ հասարակ բոլոր կուսակցութիւնները։

1910 Երզնկայի մէջ, պօմպանէրու պայթումը դիպուածի վերագրող կուսակցական թերթերը երկու տարի ետք արտասահմանի մէջ հրապարակով հաստատեցին թէ, պօմպանէրու պատրաստութիւնը ունէր իր մասնաւոր և հեռաւոր նպատակը։

Սահմանադրութեան լայն ազատութենէն օգտուելով կուսակցութիւնները առ հասարակ, մեծ քանակութեամբ զէնք ներմուծեցին թէ հոս և թէ մասնաւորապէս գաւառներու մէջ։ Ահա թէ ի՞նչ կը գրէ այս մասին Սապահ-Դիւլի օրկան Սենրախ Հայաստանը։

«Պահ մը բուրերի բիրուբենեն օգտուելով որոշեցին զինեալ ամբողջ ժողովուրդը, այս նպատակի համար որոշեցին նաեւ զինափաճառանոցներ բանալ գիւղաւոր կենտրոններու մէջ, կես գնով ու նոյն իսկ ձրի զենք հայթայթելու համար ժողովուրդի բոլոր խաւերին։ Իրրիւսը ամայն կոռաներով այս պարագան, ի վերջոյ արգելք հանդիսացաւ զենք ներմուծելու գործին, այն ատեն մենք ստիպուեցանք տարբեր ճանապարհով գործել։

Հոս պահ մը ընդհատելով դէպքերու շարունակութիւնը կ'ուզենք անդրադառնալ ուրիշ ոչ նուազ կարեւոր յայտնութեան մը Ռուսական հաշաժանին, որուն մասին խօսած էինք մեր համառօտ նկարագրականին մէջ։

Դաշնակցութիւնը Զարիզմին դէմ

1906ին բովանդակ Ռուսիոյ մէջ հայերու հանդէպ հալածանքը ծայրայեղօրէն կը շարունակուէր։

Զուլումի ու զուլումի քաղաքականութիւնը կէտ առ կէտ կը գործադրուէր մանաւանդ Կովկասի բոլոր հայաբնակ շրջանակներու մէջ։

Դաշնակցութեան, հնչակին, վերակազմեալներու պաշտ-

պանին, Խրիմեանի օրով սկսուած Զուրմի քաղաքականութիւնը գործադրութեան դրուած էր։

1903 Յունիս 21ին Զարական ուխտ մը կը հրամայէր Հայ Լուսաւորչական եկեղեցիներու բոլոր կալուածները յանձնել պատկանեալ նախարարութիւններու տեսչութեան ու վարչութեանը։

Այդ միւնոյն ուքազը —կը պարտադրէր պարտաւորիչ ընել ռուսերէնը բոլոր տարրական երկրորդական և բարձրագոյն վարժարաններու մէջ—։

Ռուսիա սկսած էր սահմանափակել կաթողիկոսին իրաւունքները, Սինոդի անդամներու ընտրութեան մէջ կաթողիկոսին իրաւունքները սահմանափակուեցան, ամուսնական խնդիրներու մէջ վճիռներ տալու իրաւասութիւնը կրճատուեցաւ։

Այս դէպքերէն երկու երեք տարի ետք վերատին սկսաւ հալածանքը՝ ամենաբուռն սատակութեամբ։

Հոս խօսքը կուտանք դաշնակցութեան էն՝ նշանաւոր մէկ չէ՛ին։

«Ու ահա 1903ի Յունիս 21ին բարձրագոյն հրաման եկաւ՝ գրաւել հայոց եկեղեցւոյ կալուածներն ու գոյքերը և յանձնել կառավարութեան» ոչ մի բողոք և աղերսանք, ոչ հայոց կաթողիկոսինը և ոչ հայոց ժողովուրդինը չօգնեց։

Բռնապետը մնաց անդրդուելի։

Չօրք կանչուեց այդ անարդ կարգադրութիւնը գործադրելու։ Կոտրեցին դռները անպաշտպան եկեղեցիներին։ Նոյն իսկ կրօնական կենտրոնավայրին մէջ, Էջմիածին, փչրեցին վանքին դրամարկղը։ Բանտերը նետեցին երէցփոխներ։

Արիւնը հոսեց։ Դիակներ դիզուեցին աղօթատեղիներու շուրջ։

Երկու տարի անցաւ։

Ու ահա մի խաղաղ օր, նման բոլոր օրերին, Բաքու քաղաքի մէջ, ամբոխը հրահրուած, առանց պատճառի և առի-

ֆի յարձակում գործեց հայոց թաղի և փողոցներում պտտող հայերի վրայ։

1905ի փետրվար 6ին էր այդ։

Ապշութիւն ու սարսափը ընդհանուր էր. հակառակ հայերի դիմումներին և թախանձանքին. ոստիկանութիւնը մընաց անշարժ և անտարբեր։

Բագուից յետոյ Երեւան, Նախիջեւան, Շուշի, Գանձակ, եղան տխուր թատերաբեմեր անկրեւակայելի դժբաղդութեան։

Ու դարձեալ հոսեց արիւնը։ Այդ կոտորածների պատճառով վնասուեցին ու աւերուեցին 148 հայաբնակ գիւղեր և 14,760 ընտանիք։ Քաղաքների մէջ վնասուածների թիւը՝ նոյնպէս անազին է։

Ահա դաշնակցութեան հոյակապ շիֆին հառաչանքները։

Կը թողունք որ չարունակէ ան իր խօսքերը.

Պետերբուրգի բանարանը, լի անծայր ու թունաւոր ատելութեամբ. բացագանչում է վայրագ կատաղութեամբ «ՊԼՏՔ Է ԱՄԲՈՂՋ ԲՈՒՆԸ ՔԱՆԴԵԼ ԵՒ ԱՆՀԵՏՔ ԴԱՐՁՆԵԼ»։

Ուզում է կործանել, փոշի դարձնել ողջ մի ազգ։

*
* *

Դաշնակցական գործիչը մոռցած է սակայն իր այս բողոքի ձայնին մէջ, յառաջ բերել 1898ի գարնան Կովկասի փոխարքայ Կալիցինի Զարին մատուցած տեղեկագիրը, որ Կովկասի վերերուն մէջ մանաւոր տեղ մը կը գրաւէ։

Մենք հոս նոյնութեամբ յառաջ կը բերենք այդ հշակաւոր տեղեկագրին հայոց յատուկ եղող մասը։

Կալիցինի գաղտնի տեղեկագիրը

Հայոց ձգտումները. — Հայկական շարժումին նպատակն է երկրին նախկին անկախութիւնը վերահաստատել։ Այս շարժումը սահմանափակուած է քաղաքներու բնակչութեան զարգացեալ մասին և կղերին մէջ։ Գիւղացիները դեռ վա-

բակուած չեն։ Շարժումին դրդիչները եղան նախ կղերը, Հայ մամուլը և արտասահմանի յեղափոխական fոմիրէները։ Իրերու այս վիճակը կառավարութեան կը պարտադրէ աւելի կանոնաւոր կացութիւն մը ստեղծել, որպէս զի բնակչութեան մնացեալ մասը պահպանուի Հայոց վտանգաւոր տրամադրութիւններուն և ձգտումներուն դէմ։

Կաթողիկոսը եւ Էջմիածնի Սինոդը. — «Անցեալ Սեպտեմբերին Էջմիածին գացի այցելելու համար Կաթողիկոսին՝ որ նոյն տարուան դեկտեմբերին պիտի փոխադրուէր այցելութիւնս Թիֆլիզի մէջ։ Այս երկու տեսակցութիւններն ալ զիս համոզեցին որ Կաթողիկոսը իր յառաջացեալ տարիքին բերմամբ պէտք եղած անկախ դատողութիւնը չունի և իր յեղափոխական խորհրդականներուն ազդեցութեան տակ կը գտնուի, որոնք իրենց անձնական ծրագիրներուն կ'անսան։ Առնց դաղափարականը միայնակ անկախութիւնն է։

«Խնդիրը մօտէն ուսումնասիրելով, յանդեցայ այն եզրակացութեան թէ կառավարական հեղինակութենէն զատ Կաթողիկոսին այս տեսակ դիրք մը տալու համար թափուած ջանքերը ժողովուրդին կարծեցնել պիտի տան թէ Կաթողիկոսը բացառիկ հանգամանք մը ունի։

«Ուստի իմ կարծիքս այն է որ Ռուս կառավարութիւնը պէտք է պնդէ սա կէտին վրայ՝ Էջմիածնի Կաթողիկոսը և Սինոդը օրէնքին յարմարելու պարտաւորուած են։ [Բացարձակապէս] (*)

«Իրրև զեկոյց և որպէս զի Սինոդին մէջ պատահելիք անկանոնութիւնները կանխեմ, հրամայեցի որ Սինոդին երկու վարդապետ անդամները պատժուին, այսինքն՝ Վահան Վարդապետ Տէր Գրիգորեանց և Նահապետ Վ. Նահապետեանց. այս վերջինը Կաթողիկոսին անձնական քարտուղարն էր։ Խորհուրդ տուի զանոնք հեռացնել Կովկասէն և Ձեր Վեհափառութիւնը հաստատեց այս միջոցը։»

(*) Հոս ստորագծուած եւ [ ] նշանակուած բառերը տեղեկագիրը կարդացած ատեն Նիբոլա Բ. Ձարը իր ձեռքովը գրած է։ Ծ. Հ.

Հայ նախակրթարանները. — Հայ վարժարաններու կրթական նախարարութեան յանձնուիլը, ինչպէս կը տրամադրէ Ձեր Վեհափառութեան 1897 Յունիս 14ի հրովարտակը, շատ կարեւոր է և միակ միջոցն է նոր սերունդը կղերին վնասակար ազդեցութենէն ձերբազատելու համար։ Բայց Հայ եկեղեցականները չեն ուզած այս նոր ձեւին հպատակիլ, այս պատճառաւ Կովկասի կառավարութեան հրամանով 1897ի 320 հայ վարժարաններ փակուեցան։ Անհասկանալի թէ ինչո՞ւ դպրոցական կալուածները կրթական նախարարութեան յանձնելու խնդրոյն մէջ Ն. Վեհափառութեան հաստատութիւնը խնդրեցի և այս մասին կը սպասեմ նոր հրամաններու. [կը հաւանիմ]։

Կովկասի Հայ վանքերը. — Թիֆլիզ լոյս տեսնող պարբերական հրատարակութիւնները փոխանակ ՌՈՒՍԱՑ ՀԵՏ ՀԱՑԵՐՈՒՆ ՁՈՒԼՄԱՆ ԳՈՐԾԻՆ ԱՇԽԱՏԵԼՈՒ, ընդհակառակը փորձած են զանոնք բաժնող անդունդը պեղելու։

Բարեգործական ընկերութիւններ. — «Հայ Բարեգործական ընկերութիւնները բարեգործութենէ աւելի քաղաքականութեամբ կը զբաղին։

Տեղական իշխանութիւնները փրաւունք ունենան զանոնք անմիջապէս լուծելու այն պահուն իսկ երբ փոքր ինչ անգամ չեղին իրենց կանոնադիրներէն։

Քանի մը տարիներ առաջ այդ ընկերութիւնը մասնակցեցաւ մտաւորական երիտասարդութեան կողմէ պատրաստուած անջատողական շարժումին՝ որուն համար Երեւանի բարձրագոյն վարժարանին տնօրէնը Հայու մը կողմէ նախատուեցաւ։ Վատահելի տեղեկութիւններ կ'ապացուցանեն որ այդ խլրտումին կուսակիցներէն շատերը վերոյիշեալ ընկերութեան անդամներ էին։

Կ'առաջարկեմ Կայսեր որպէս զի բարեհաճի արտօնել զիս Հայ բարեգործական ընկերութիւնները խաբանելու»։ [Խնդիրը չրջարեն մնալ]։

Տեղական վարչութիւնները

Պաթումի, Կարսի և Արդուինի մէջ տեղական վարչութիւն գոյութիւն չունի և տեղական սովորութիւններու պատկանող կարգ մը բոռոքներ և ձանձրացուցիչ խնդիրներ կը սպասեն իրենց լուծումին։ Կը խնդրեմ որ արտօնէք զիս այս խնդիրները Թիֆլիզի մէջ իմ ժողովովս լուծել, վասն զի եթէ անոնք Բեռլերապուրկի ծերակոյտին առջեւ ելլեն, պէտք պիտի ըլլայ երկար սպասել անոնց լուծումին։— [Ո՛ւր եւ է առարկութիւն չունիմ ասոր]:

Քաղաքապետական ժողովները.— (Տումա).— «Քաղաքապետական ժողովներուն մէջ Հայերը առանձնաշնորհեալ դիրք մը ունին, քանի որ 1892ի օրէնքը առաւելութիւն մը կ'ընծայէ կալուածատէրերուն։ Պէտք է դարմանել ասիկա։ Կ'առաջարկեմ որ կառավարութիւնը անուանէ քաղաքապետները և որոշէ անոնց թոյակը։ Իսկ ժողովին անդամները կառավարութեան հսկողութեան տակ ընտրուին նոր կանոնադրութեան մը համաձայն։ Կ'առաջարկեմ նոյնպէս որ կառավարիչին տրուի գոնացուցիչ կերպով իրենց պարտականութիւնը չկատարող անդամները հրաժարեցնելու իրաւունքը։» (Այս միջոցները կարծեմ բաղձալի են. սակայն պէտք է քաւ ուսումնասիրուին):

Այսպէս անարդանդակ Ռուսիոյ մէջ դէպքերը իրարու կը յաջորդեն։

Հայածանքը հետզհետէ կը սաստկանայ, պատասխանատու ոճրագործները իրարու հետեւ կը փախչին, ազատ երկիրներ կ'ապաստանին։

Թիֆլիսի արքեպսկոպոսութեան, լռիկ և խաղաղ գործունէութեան չնորհիւ ազատութիւնը հաչակուած էր Թուրքիոյ մէջ, Սահմանադրութիւնը վերահաստատուած և հայը ազատ էր՝ Թուրքին հետ։

Դարձեալ խօսքը կուտանք դաշնակցական չէֆին...

«Մ՛բաիսի փոփոխութիւն դերերի!

Թիւրքիայում, երէկուան հայրենիքը զնտաններին՝ չկայ քաղաքական կալանաւոր, իսկ Ռուսաստանում և ո՛չ մի բանտ, որ ազատ տեղ ունենայ։— Կովկասահայը= դաշնակցականը Պոլիս և Թիւրքիա է ապաստանում, զերծ մնալու համար բանտից և տանջանքից, աքսորից ու Սիբիրից։

Այժմ բիւզանդիոնէ դարձել բողոքավայրը ընդդէմ ռուս բռնակալին որ տանջանք է հային, հալածանք է հային համար։»

Կովկասի մէջ ջարդերը պահ մը կը դադրին, և մինչ Օսմ. պետութեան մէկ ծայրէն միւսը Սահմանադրութեան ընծայած ազատութենէն արբչիւ հայը կը վայելէ բացարձակ ազատութիւն. անդին Կովկասի մէջ 1908 Դեկտեմբերին կ'սկսի «կալանաւորումը»։

Խօսքը միշտ կուտանք դաշնակցական մեծափառ գործիչին! ահա թէ ինչ կ'ըսէ 1908ի ԿԱԼԱՆԱՒՈՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ.

«Առաջին նշանը ուշց 1908 դեկտ. ին Թիֆլիսում և 1909ի սկզբին հասաւ իր խստագոյն աստիճանին։ Խուզարկումներ թիւը քանի մը հազարից անցան։ Կալանաւորուեցան աւելի քան 5000 հոգի, և փակուեցան այլ և այլ բանտերի մէջ Կովկաս թէ՛ Կովկասի սահմաններից դուրս։

Բանտարկեալների մէջ կային, ի միջի այլոց՝ գրողներ 8, բժիշկներ, փաստաբաններ և այլ մասնագէտներ 32, պրոֆէսորներ 24, պաշտօնեաներ 30, վաճառականներ 45, արհեստաւորներ 70, մեծ թիւով գործաւորներ, ինչպէս նաև հոգեւորականներ, կանայք և նոյն իսկ աշակերտներ...

Կասկածի տակ տրուեցան աւելի քան 3000 հոգի, և հէնց կասկածի տակ տրուած ու խուզարկութեան ցուցակների մէջ մտցրած չատ անձինք կ'չտապէին խուսափիլ այդ խելագար հալածանքից։

Ահա Կովկասի կալաւորումների խստութիւնը, ահա նաև ձերբակալումների պարագաները, թէ ինչպէս և ինչ կերպով կը ձերբակալէին։»

Փաստերը կը խօսին։

Ոստիկանութիւնը որոնում էր «Իշխան» կեղծ անունով մի «Յեղափոխական»։ Եւ ահա կալանաւորում են Իշխան Առղութեանին։ Վան ապաստանող եւ Վանի քաղաքական-հասարակական գործիչ Իշխանն էր փնտռուածը։

Վահան Փափազեանի —Օսմ. Բարլամէնտի անդամ—փոխարէն բանտարկուած էր, Տրապիզոնցի Վահանեան Վռամ։

Դարեգին Փաստրմաճեանի Առմեն-Կարս —Օսմ. Պարլամէնտի անդամ— փոխարէն բանտարկուած էր Դարեգին Գէորգեան։»

Կալանաւորների ցանկին երկարութեան պատճառով, զանց կ'ընենք չարունակութիւնը։

Դաշնակցական եւ Հնչակեան գործիչները սարսափահար Պոլիս կը խուժէին ազատութիւնը վայելելու համար։ Հալածանքի այս սարսափներու ատեն, ծիծաղելի հակադրութիւնով մը կաթողիկոսական ընտրութեան հրահանգ արուած էր ամէն կողմ։ Մրիմեան վախճանած էր 907 Հոկտ. 29ին, մէկ տարի ետք 1908 Նոյ. 1ին Մատթէոս Իզմիրլեան երկաթէ Պատրիարքը կաթողիկոս կ'ընտրուէր։

Սարսափներու այդ թուականին Զարը կը փութացնէր Իզմիրլեանի ընտրութիւնը և Կ. Պոլսոյ Ռուս. դեսպանը պաշտօնապէս Իզմիրլեանի կը հաղորդէր ընտրութեան վաւերացումը։

Իզմիրլեան 909 Մայիս 29ին ճամբայ կ'ելլէր Պոլիսէն Օտէսա, անկէ Բէթէրսպուրգ Զարին ներկայանալու։ Սէլորդ կը նկատենք հոս աքսորական կաթողիկոսին եղած հրաժեշտի ցոյցերու եւ իր պերճախօս քարոզին ու հրաժեշտի ողջոյններուն նկարագրութիւնը, եւ դարձեալ խօսքը կուտանք դաշնակցական մեծ գործիչին։

«1909ի Յուլիսին, երբ Իզմիրլեան Պոլիսէն Պետերբուրգ գնաց և Զարին ներկայացաւ, իր պաշտօնական ճառին մէջ ասաց.

«Եթէ կամենում էք, Ձերդ մեծութիւն, որ Կովկաս

հանելով, կարողանամ ազդել եւ խաղաղեցնել մտքերը, ԿԱՊԵԼ ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ ԳԱՀԻ ՀԵՏ, բարեհաճեցէք կատարել իմ ամենահպատակ խնդիրը, հայ կալանաւորների արձակման հրամանը տուէք, որով ինձ էլ ոյժ տուած կը լինիք՝ ՕԳՏԱԿԱՐ ԿԵՐՊՈՎ ԾԱՌԱՑԵԼՈՒ ՊԵՏՈՒԹԵԱՆ։»

Նիքոլա I ողորմութեամբն Աստուծոյ կայսր համայն Ռուսաստանի, ընդմիջեց կաթողիկոսի ճառը և արտասանեց այս խօսքերը.

— «Ձերդ բարձրութիւնը դեռ Կովկաս չհասած, նրանք ազատված կը լինին—։

Ցուսադրված կաթողիկոսը գնաց Կովկաս, անցաւ քաղաքից քաղաք, հպարտ՝ իրան տրված կայսերական խոստումով- սակայն բանտարկեալները ո՛չ միայն ազատ չ'արձակվեցան, այլ նրանց թիւը կրկնապատկվեց...»

Դաշնակցութեան կուռքը խորտակուած, ջարդ ու փշուր եղած, իսկ անոր կողքին գործող դաշնակցական բանակը բնաջինջ եղած էր։ Հոս Պոլսոյ մէջ ազատականները! Զարիզմը տապալելու ծրագիրներ կը մշակէին եւ Օսմ. կառավարութիւնը, Օսմ. մամուլն իսկ, հրապարակով ցաւ կը յայտնէր արտասահմանի մէջ հայերու հանդէպ եղած այս հալածանքին, պաշտօնապէս կը միջամտէր և Գարեգին Փաստրմաճեանը Ռուսական մահաստուեր դնտաններէն առնելով Պոլիս կը բերէր, ու կը բազմեցնէր երեսփոխանի ամբոնին վրայ։

Զարական հալածանքի սարսափը, ռուսական մահսիւռ բանտերը սարսափեցուցած էին հայ յեղափ. կուսակցութիւնները, որոնք սակայն հոս ազատ համարձակ կը պտտէին և Օսմ. կառավարութիւնը կը խնկարկէին...

Սարսափը կ'աւելնար եւ կաճէր, բովանդակ Կովկաս բոցերու մէջ էր կարծես, ձերբակալութիւններ, աքսորներ կը շարունակուէին, իսկ մեր հայ յեղափոխական կուսակցութիւնները, հոս Պոլսոյ մէջ, Սահմանադրութեան առաջին տարիներուն մէջ, Օսմ, կառավարութենէն գթութիւն և օգնութիւն կը հայցէին։

Երիտասարդ Թուրքիոյ էն նշանաւոր դէմքերը Ռուս-հայկական դատին համար բան մը չէին խնայեր։

Այն ատեն կուսակցութիւններու միակ նպատակն էր ազատել Կովկասի իրենց եղբայրները Ռուսական սարսափեն։

Ահա այս տոթիւ նաեւ դաշնակցութեան մէկ թռուցիկ յայտարարութիւնը.

Հայրենակիցներ

Տասնեակ տարիներ շարունակ Հայ. Յեղափոխութեան որբանը հանդիսացող Կովկասը, այսօր ցաւագինօրէն կը արնքայ բռնապետական բիրտ ուժին տակ։

Հայ ժողովուրդի լաւագոյն մէկ սերունդը, երկրորդ տարին է որ կը տառապի այնտեղ Զարին հրէշաւոր բանտերուն մէջ։ Ռուսական յեղափոխութեան շարժումներէն յետոյ տապարէզն այժմ անդուսպ Բէաքցիային է մնացել, որ շլացած իր արիւնոտ յաղթանակներէն՝ կ'ուռենայ և անողոք կը հարուածէ ու կ'արօրէ հայ ժողովուրդի լաւագոյն սերունդը, և ուսուցիչ թէ բանաստեղծ, վաճառական թէ արհեստաւոր, մտաւորական թէ բանւոր, յեղափոխական թէ խաղաղ քաղաքացի ու բոլորը, բոլորը կը տառապին բանտերու մութ կամարներուն տակ։

Հայրենակիցնե՛ր, մեր ցաւի ու կսկիծի օրերուն՝ մեր կողքին ապրող, մեր ցաւով տանջուող հարազատներն են անոնք...

Սահմանի այս կողմը՝ Օսմանեան հողի վրայ ազատութիւն կայ այսօր, բայց սահմանի միւս կողմը, Ցարիզմի խեղճացնոր կառավարութիւնն է իշխողը...

Սահմանադրութեան ազատութիւններն վայելող տաճկահայ ժողովուրդը երբեք չկրնար անտարբեր մնալ, ի տես ռուսիկանական այն բիրտ ճնշումներուն, որոնց ենթակայ են իր հարազատները օր ու գիշեր։ Այս խորունկ հաւատով ու այս գիտակցութեամբ է ահա, որ Հ. Յ. Դաշնակցութեան Արեւելեան շրջանի Ռայոնական ժողովը, կոչ կ'ընէ Թրքա-

հայ ժողովուրդի բոլոր խաւերուն անխտիր, որ անոնցմէ ամէն մէկը փութայ հասցնել նիւթական օգնութիւն Կովկասահայ քաղաքական բանտարկեալներուն, անոնց անխնամ մնացած ընտանիքներուն եւ սիրելիներուն: Շուտափոյթ օգնութիւն անհրաժեշտ է...

Հայրենակիցներ, ուղղելով ձեզ ներկայ կոչը, Հ. Յ. Դ. Արեւելեան շրջանի Ռայ. ժողովը միանգամայն ներկայ է որ թուրքահայ ժողովուրդը պիտի չտապի անմիջապէս պատասխանել անոր, իր ունեցածէն առատ մաս հանել իր տանջուող եղբօրը...

Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆ
Արեւել. Շրջ. Ռայ. Ժողով

Կարելի չէ անանց մնալ անցնել 1909 Վառնայի մէջ դումարուած գօնկրէսի վրայէն, այսպէս:

«Դաշնակցութիւնը իր բոլոր համակիրներով, ինչպէս նաեւ միւս կուսակցութիւնները, ռուսական հալածանքին դէմ բողոքի ահեղ! ցոյց մը կը կազմակերպէին, Ամերիկայի, Եգիպտոսի, Ռումանիայի, Բարիզի ժանտաճիւղերը եւ Ջուիցերիոյ կեդրոնը հեռագիրներ կը տեղացնէին բողոքելով ռուս կառավարութեան հայաջինջ քաղաքականութեան դեմ:»

Տարի մը ետք սակայն դերերը կը փոխուին եւ կուսակցութիւնները մէկ ոտտումով դարձեալ կ'իյնան ռուսական բաղուկներուն մէջ...

Դաւադրութեան սկիզբը

ՀՍՑ ՑԵՂԱՓՈԽԱԿԱՆ կուսակցութիւնները ազատ համարձակ կը շարունակէին իրենց առաքելական պաշտօնը, քաղաքական շրջանակներ կազմած էին իրենց համար, քաղաքական բոլոր ընտրութիւններու մէջ տակնուվրայութիւն մը յառաջ բերելու ակզբունքին հիմերը դրուած էին արդէն:

Ա. անդամ հնչակն էր որ՝ հակառակ իր խոստումներուն կը դաւէր երկրին եւ պետութեան դէմ ու կ'երթար միանալ

ընդդիմադիր և յեռադիմական կուսակցութեան մը՝ և քաղաքական մեծ չփոթութիւն մը կը ծրագրէր...

Նոր Աշխարհ Սապահ գիւլի ձեռքերուն մէջ իր դրգռիչ յայտարարութիւններով հրապարակ կ'ելնէր։ Հնչակեաններու նախագահը սերտ յարաբերութեան էր յեռադիմական կուսակցութեան շեֆերուն հետ...

Խստումներ եղած էին իրեն, ներքին գործերու խորհրդական պիտի ըլլար և երկիրը պիտի փրկէր վաղահաս կործանումէ։

Անկախ պիտի ըլլար Հայաստանը և Սապահ-գիւլ ի ղրուելի իր բաղձանաց, արտաքին գործերի մինիստրի պարբ-քիօյլը պիտի ստանձներ։

Յեռադիմականները յաջողած էին պահ մը, բաղդախընդիրներու խուժանը հին ռէժիմի բեկորներուն հետ համերաշխաբար կը գործէր։

Այս միջոցին ծայր տուաւ Պալքանեան պատերազմը... ժամրամանութիւնները ծանօթ են։

Օրուան դահլիճը չկրցաւ բանակ մը անդամ սպառազինել և հետեւանքը ան եղաւ որ, Օսմ. բանակը վրայ տուաւ իր դարաւոր կուռողի պատիւը՝ շնորհիւ նոր ազատական կուսակցութեան...։

Երկիրը դէպի անկում կ'երթար գահավէժօրէն, երիտասարդ թուրքերը անդամ մը ալ ցոյց տուին իրենց հայրենասիրութիւնը, և, փրկուած էր հայրենիքը։

Մեր նպատակէն դուրս է խօսիլ պատերազմը յառաջ բերող ազդակներուն վրայ. միայն պիտի ջանանք վաւերական փաստերով ցոյց տալ հայ յեղ. կուսակցութիւններու բռնած ընթացքը պալքանեան պատերազմի տեւողութեան միջոցին։

*
* *

Դաշնակցութիւնը իր օրկանին միջոցաւ կը խրախուսէր հայ զինուորները երթալ միանալ Օսմ. բանակին, մինչ միւս կողմէն իր կուռքը և ապստամբապետը Անդրանիկ իր չէ-

թէյով թուրք կիները և երախաները սրախողող կ'ըներ Բուլմէլիի մէջ, մզկիթները եկեղեցիներու կը փոխէր, յայտարարութիւններ կը հրատարակուէին արտասահմանի մէջ, բանակցութիւնները սկսած էին մէկ կողմէ դաշնակցութեան և ռուս դեսպանատան!, միւս կողմէ պատրիարքարանի և այս առաջիններուն միջև։

Եւ ասոնք կ'ըլլային Օսմ. պետութեան և Իթթիհատին դէմ...

Ահա Դաշնակցութեան թռուցիկ յայտարարութիւնը։

ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆ

Հայ Յեղ. Դաշնակցութեան Ամերիկայի կեդր. կոմիտէի
Կոմիտէներուն համար Խիստ գաղտնի

Ընկերնե՛ր

Պալքանեան պատերազմի վերսկսումով՝ քաղաքական շրջանակը կրկին շփոթեցաւ, ու Հայկական Դատի այժմէութիւնն կարծես մեղմացաւ։ Իրականին մէջ սակայն, այնպէս չէ, որովհետեւ որոշ մարդիկ, մարմիններ և մեր կուսակցութիւնը մանաւորապէս, քաղաքական դիմումներով կը ձգտին հող պատրաստել, Հայկական Դատը յառաջիկայի ամէն գընով դնելու համար դիւանագիտական սեղանին վրայ և պահանջել անոր նպաստաւոր լուծումը։ Այդ մասին բիւրօյէն եկած նամակներէն կ'քաղենք հետեւեալ կարեւոր տեղեկութիւնները։ Հայկական Դատի մասին կարող ենք ձեզի հաղորդել երեք որոշ կէտեր.

Ա. Որ մեր հարցը այս դեսպանախորհուրդին չիպիտի դրուի.

Բ. երեք պետութիւններ Ֆրանսա, Անգլիա և Ռուսիա, որոշեր մեր են խնդիրը ձեռք առնել խաղաղութեան վերջնական հաստատումէն յետոյ.

Պ. Յ պետութիւններն ալ տրամադիր են Հայկ. Նահանգներուն մէջ յատուկ վարչութիւն հաստատելու, ուրիշ խօսքով, ապահովելու բէֆէօրմների գործադրութիւնն։

Թէ՛ Բուանդարէ՝ Փարիզ և թէ Սբր Էտուարդ Կրէյ Լօնտոն, և թէ՛ Սաղանօֆ՝ Բեթերսպուրգ, ինչպէս և ասոնց դեսպաններբը Պոլիս՝ այդ տրամադրութիւններն են յայտներ, խորհուրդ տալով՝ այժմ փոքր ինչ սպասողական դիրք բռնել։

Լօնտոնի մէջ Անգլօ-Հայկական գօմիտէն, որուն մէջ կ'մրտնեն նախկին Պալքանեան գօմիտէի ազդեցիկ անդամներ, լուկեան բաւական գործունէութիւն ունի։ Անոնք յիշատակագիր մը ներկայացուցին վեց մեծ պետութեանց վեհապետներուն և նախարարութիւններուն շատ եռանդուն կերպով, յիշատակագիրը ուղարկուած է նաև անոնց կողմէ Մ. Նահանգներուն նախագահին՝ Թաֆթի։ Հաստատ տեղեկութիւններ ունինք որ, ֆրանսական, անգլիական և ռուսական դեսպաններ հրահանգ են ստացել զբաղիլ մեր դատով։ Զանգեր կը թափենք որ միւս մեծ պետութիւնները, եթէ ոչ կողմնակից գոնէ չհակառակին։ Այժմ ստոյգ կնկատուի, որ հայոց հարցը չպիտի դրուի այս դեսպանախորհուրդին, ինչ որ պէտք չէ հիասթափութիւն պատճառէ մեր հասարակութեան, որովհետև վրճռուած է Փոքր Ասիոյ խնդիրը յարուցանել այն ատեն, երբ ռուս-էլիի խնդիրը վճռուած ըլլայ, Ֆրանս. դեսպանատունը և կառավարութիւնը շատ ջերմ համակրութեամբ կվերաբերին մեր դատին։ Յոյս կայ, որ-եւ աս ամենակարևոր հիւսն ի-Անգլիոյ և ռուսաստանի մէջ մեր հարցի մասին անտարամաձայնութիւն չի ծագիր, որ շատ վտանգաւոր կրնայ ըլլալ։ Բեթերսպուրգի մէջ Հայկ. գաղութին կողմէ դիմում եղած է վարչապետին և արտ. գործ. նախարարին, որոնց վերաբերմունքը եղած է համակրական, և խոստացեր են հրահանգներ տալ Պոլսոյ դեսպանին և խորհուրդ են տուեր նաև - ինչ որ տարբերնակ կթուի - բրօփականտ ընել Անգլիոյ և Ֆրանսայի մէջ։ Ինչպէս արդէն ձեզի գրած ենք, ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆԸ գրեթէ նոյնութեամբ որդեգրեց մեր պահանջումները։ Այժմ կ'սպասուի

որ ամէն մէկ կէտ պատճառաբանեալ և մանրամասն ներկայացուի: Այս աշխատանքն է որ կզբաղեցնէ մեզ այժմ, և յոյս ունինք շուտով ուղարկել աւելի մանրամասն ուրուագիծը: Բեթերսպուրկէն հոս եկած են երկու հայ ներկայացուցիչներ ծանոթանալու պօլսահայ շրջանակներու տրամադրութեան և արդէն վերադարձան բաւական տեղեկութիւններով: Վանէն կ'գրեն, որ մեր խումբերու դիմադրութիւնները բաւական ազդեր են Քիւրդերու վրայ: Ինքը, վալին, սկսեր է նահանջել, և կիսրձէ մօտենալ մեր այն տեղի մարմիններուն: Դիւանագիտական հարցին հետ անմիջապէս կուգայ երկրի պաշտպանութեան ամենակենսական հարցը: Երկրի դրութիւնն, մանաւանդ մոտնաւոր շրջաններու մէջ, սկսած է դառնալ բոլորովին անտանելի հայ տարրին համար, և այս անգամ եւս, քաղաքական այս փոթորիկը անցնելու և վերապրելու համար անհրաժեշտ է, որ մեր բոլանդակ ուշադրութիւնը դարձնենք դէպի հոն:

Ընկերնե՛ր, նկատի ունենալով հրամայողական պահանջը ստիպուած ենք կոմիտէներէն խնդրել որ՝

Ա. Կարելիութեան սահմանին մէջ 1913ի անդամական տուրքերը ջանան գանձել և փութացնել մեզ միանուագ.

Բ. Գաղութների մէջ գործող Հ. Յ. Դ. Կարմրը Խաչի, Դերասանական, Երաժշտական և այլ Խումբերուն թելադրել որ, իրենց գործունէութիւնն ուղղեն ի նպաստ պաշտպանութեան գործին,

Գ. Շարունակել փրօփականտի և հանդանակութեան ժողովները, յուսալով որ հասարակութեան լաւագոյն տարրը գործի պահուն դարձեալ մեզի հետ է,

Դ. Այժ տալ ՀԱՅՐԵՆԻՔԻ բացած «ապրելու հատար», հանդանակութեան,

Ե. Դրամ հանդանակել պաշտպանութեան համար, խընջոյքներու, հարսանիքներու առեն: Պաշտպանութեան տոթիւձեզ կ'հաղորդենք հետեւեալ կարեւոր լուրերը: Պիւրսն մեզ կ'գրէ՝— Ստացանք ձեր փոխադրած վերջին գումարը և

համաձայն ձեր փափագին դրամական բաժանումի գործը կատարեցինք ձեր յիշատակած վայրերու մէջ։

Ա.	Իշիկեանի	100	ոսկի
Լեռնասարի	«	100	«
Խորաձորի	«	100	«
Դուրանի	«	100	«
Համի	«	100	«
Վիշապաձորի	«	100	«

*
* *

Բարենորոգումներու հարցը Իթթիհատի սեղանին վրայ էր, երիտասարդ Թուրք նախարարներ ճամբորդութիւններ կը կատարէին տեղւոյն վրայ ուսումնասիրութիւններ կատարելու, պէտքերը ստուգելու համար, հրաւէր կ'ըլլար պատրիարքարանին և կուսակցութիւններուն՝ աջակցիլ Իթթիհատի այս գերազանցապէս բարենորոգչական գործին, ձեռք ձեռքի երկիրը ազատելու օտար ոտնձգութիւններէն։

Իրերու այս վիճակին մէջ պատրիարքարան և կուսակցութիւններ, փոխանակ համակերպելու, փոխանակ միասնաբար գործելու, ընդհակառակը օտար միջամտութիւններ կը հրաւիրէին բարենորոգումներու այս գործին մէջ։ Կուսակցութիւնները վարագոյրին ետին կեցած պատրիարքը յառաջ կը քշէին։

Անհեռատես պատրիարքներ, ռուս դեսպանին ետեւէն Բ. Դուռ կը մտնեն և անտեղի առաջարկներով գործերը յետաձգելու պատճառ կը հանդիսանան։ Թուրք կարող պաշտօնեայ մը հրաժարեցնել՝ և անոր տեղ քրիստոնեայ! մը նշանակել տալու համար երկու անգամ ռուս դեսպանին հետ, Բ. Դուռ կ'երթան, մինչ անդին պաշտօնատարը իր ճամբու պարտաստութիւններն անգամ լրացուցած էր...

Այս միջոցին դաշնակցութիւնը թէ հրապարակով և թէ գաղտնի հրահանգներ կուտար գաւառի իր ճիւղերուն յայտնապէս գիմադրելու համար։ Գաւառներու կեդրոնները իրենք իրենց դլխուն ծրագիրներ կը յօրինէին և պահանջներ կը դնէին, հայ կուսակալներու, կառավարիչներու, ևն. թիւ-

ը կը ճշդէին, գոհացում կ'ուզէին ապա թէ ոչ կ'սպառնային...

Անդին Սապահ-գիւլ առտու մը յանկարծ կ'անհետանար։ Եգիպտոս հասածէր և միացած յեսադիմականներու բեկորներուն։ Դաւադրութիւնը սակարկուած էր, դահլիճին անդամները տեսօրի պիտի ենթարկուէին, 5000 ոսկիի սակարկութեան փոխարէն...

Քանի մը տէսօրխաթներ Պոլիս հասած էին գործադրելու համար դաւադրութեան ծրագիրը... Սապահգիւլ խոստում առած էր լայն ապակեդրոնացման։

Կառավարութիւնը ժամանակին լուր առած ըլլալով, գըլեթէ ամբողջութեամբ ձերբակալեց ոճրագործներու խումբը եւ անոնց համախոհները։

Սապահգիւլ կործանած էր, բայց չէր ամչնար, վանդի ոճրագործի դէմքը կարմրիլ չէր գիտեր, տուներ, տեղերու կործանումի պատճառ կ'ըլլար եւ յետոյ կը ծիծաղէր...

Երկու տարի առաջ երախտաւորեալ կուսակցութիւնները, Օսմ. կայսրութեան եւ Իթթիհատին թշնամիները դարձաց էին։

Օսմ. Բարբամէնթի հայ անդամները Ռուսիոյ հաշուոյն լրտեսութիւն կընէին, դաղտնիքներ կը ծախէին եւ տակաւին ինչ՞ը...

Բարենորոգումներու խնդիրը լրջօրէն ձեռք առնուած էր, երբ անդին 1913 Սեպ. 17 հնչակեան կուսակցութիւնը իր պատգամաւորական ժողովը կը գումարէր Քէօսթէնճէի մէջ։

Առանց այս մասին մեր կողմէ բան մը ըսելու, նոյնութեամբ կարտատպենք Գոնկրէի որոշումը, վճիռը միշտ թողլով հանրութեան դատաստանին։

Ս. Դ. Հ. կուսակցութեան Է.րդ ընդհ. պատգամաւորական ժողովը

1913 Սեպտ. 17 ՔԷՕՍԹԷՆՃԷ

Ս. Դ. Հնչ. կուսակցութեան դիրքը Թուրքիայում

Ի նկատի ունենալով 1908 Յուլիս 10ի զինուորական ընդհանուր ապստամբութեան հետեւանքով մեջտեղ դրուած Օսմ. Սահմանադրութիւնը:

Իրենց սկզբունքների իրականացման հետապնդելու ինչպէս որ նա յայտարարում էր թէ Թուրքիայի բոլոր բաղկացուցիչ ազգութիւնները լիակատար իրաւունք պիտի ունենային իրենց ազգային գոյութիւնը պահելու, զարգացնելու և յառաջդիմութեան ամէն միջոցներ ունենալու, զերծ պետական ամէն կաշկանդումից:

Ի նկատի ունենալով որ 62 տարիներից ի վեր յեղ. ա ընդհատ պայքար մղող հայ ազգը սպառման էր ենթարկւել և կարօտ էր զէթ ժամանակաւոր հանդիստի, իր ոյժերը վերակազմուելու և նոր թափով երեւան գալու:

Ի նկատի ունենալով որ եղած սահմանադրական խոստումները մի որոշ աստիճանի հող էին ներկայացնում երբ կուսակցութիւնս կայող էր իր գաղափարներին ծնունդ տալ և այդպէսով զէթ առժամապէս, մի յայտնի աստիճան օգտուիլ տրուած օրինական պայմաններից:

Կուսակցութեանս Զ.րդ ընդհ. պատգամաւորական ժողովը որոշել էր, որ Սոցիալ դեմոկրատ հնչակեան կուսակցութիւնը՝ Սահմանադրական Թիւրքիայի հանդէպ անջատողական չի լինէ և կանգնէր օրինական (լեգալ) հողի վրայ ուայդպիսով յառաջ տանէր իր կուսակցական գործունէութիւնը:

Տեսնելով որ այս 4-5 տարուայ ընթացքում Օսմ. Սահմանադրութեան խոստումները մնացին լոկ բառեր, առանց իրական նշանակութեան և պետական օրէնքները հետզհետէ բացարձակ արգելիչ ընելու սեղմիչ և կաշկանդիչ պայմաններ յառաջացրին բոլոր քաղաքական կուսակցութեանց համար

ընդհանրապէս և ձախակողմեան ու ծայրագոյն ձախակողմեան դրօշ ունեցողների համար մանաւորապէս։

Պարտ լինելով, որ Օսմանեան պետական ամբողջ կազմը և նրա պետական հասկացողութիւնը որոշապէս ուղղուած է ձուլելու, բնաջնջելու բաղկացուցիչ ազգութիւնները, և «տիրող ազգը» անընդունակ հանդիսացաւ մինչեւ ցարդ յառաջ բերելու նորագոյն պետութիւն։

Նկատելով որ Տաճկաստանի մէջ տիրապետում է մի Օլիկարխիա, որին ղեկավարիչ ոյժն է «Իթթիհատ վէ Թէրաքգը» կուսակցութիւնը։

Որոշ լինելով որ այդ կուսակցութեան հիմնական սկզբունքներն են պահել Թրքական պիւրօկրատեան, թոյլ չտալ որ նորագոյն պետութիւն յառաջանայ և նրա ակնյայտի դիտաւորութիւնն է բաղկացուցիչ ազգութիւնները ձուլել ի հարկին և կոտորել։

Անվիճելի համարելով որ իշխանութիւնը իր ձեռքում ունեցող տիրող դասակարգը իր հայակործան քաղաքականութիւնը սիստեմաթիկ և անողոք կերպով յառաջ է տանում։

Տեսնելով որ հայ ժողովուրդը գործադրուող ուժերով չարունակական ներքին քաղաքականութեան չնորհիւ քայքայման և կործանման չէ՛քին վրայ է կանգնուել։

Հոմոզուած լինելով որ քաղաքական մի այնպիսի կուսակցութիւն. Օսմանեան պետութեան տուած երկայն պայմաններով, այլ եւս կարող չէ իր սկզբունքների իրականացմանը հետապնդելու, և հայ ազգին դլխին կախուած մահաբեր սուրը յետ հրելու ու Թուրքիայում տիրող դասակարգը տապալելու՝ մի միայն տեւական հողի վրայ կանգնելով։

Ս. Դ. Հնչ. կուսակցութեան Է-րդ պատգամաւորական ժողովը միաձայնութեամբ, բացի մէկից, որոշեց յանուն պրոլէտարական շահի մարդկային և ազգային անձեռնմխելի իրաւունքների այսուհետեւ կանգնիլ իրական հողի վրայ և

այդպիսով մղել իր կուսակցական պայքարը մինչեւ որ աւելի յարմարաւոր քաղաքական ու տնտեսական նոր պայմաններ յառաջ գան։

Լիկպիզմից՝ իրիկպիզմ անցնելու ձեւափոխութեան եղանակը

Ի նկատի ունենալով որ Է. Դ. ընդհ. պատգամաւորական ժողովից առաջ Տաճկաստանի մէջ կուսակցութեան մասնաճիւղերը, խմբերը և այլ մարմինները կազմուել և կանգնել են լէգալ հողի վրայ։

Ի նկատի ունենալով որ այդ հանգամանքով յառաջացել է նաեւ տաճկ. կեդր. վարիչ մարմինը։

Ս. Դ. Հնչ. կուսակցութեան Է. Դ. ընդհ. պատգամաւորական ժողովը որոշում է.

Ա. Լուծել ներկայ տաճկ. վարիչ մարմինը, ի նկատի ունենալով որ նա արդեն չի վայելում տաճկ. մասնաճիւղերի վստահութիւնը, անընդունակ է կուսակցական ներկայ պահանջներին բաւարարութիւն տալ՝ մանաւանդ իլլէկալ գործունէութեան եղանակի նկատմամբ, և նրա տեղ նշանակել նոր վարիչ մարմին։

Բ. Փոխանակ կեդր. վարիչ մարմնի Տաճկաստանի բարձրագոյն գործադիր իշխանութիւնը այսուհետեւ անուանել միայն «Տաճկաստանի վարիչ մարմին»։

Գ. Այսուհետեւ վարիչ մարմինը, բղխեցնել Տաճկ. ճիւղերից և նա կեդրոնական վարչութեան հանդէպ վայելէ աւելի կամ նուազ իրաւասութեամբ գործադիր յանձնախումբի իրաւունք և ենթարկուի կեդր. վարչութեան վաւերացմանը։

Դ. Արդէն գոյութիւն ունեցող Մասնաճիւղերը են. լէկալ գոյութեան արտաքին երեւոյթը պահելով հանդերձ՝ ձեռքի տակից աստիճանաբար յառաջ բերելնոր մասնաճիւղերու կազմակերպութիւններ «իլլէկալ» ուղղութեամբ գործելու որոնց ուղղութիւն տուողը պիտի լինի տաճկ. վարիչ մարմինը, համաձայն կեդր. վարչութեան հրահանգներին, կուսակցու-

թեանս ունեցած զանազան հաստատութիւնների, գործիչների, և ներկայացուցիչների միջոցով ինչ որ գծագրուած է իլլէկալ բնաւորութիւն ունեցող կազմական կանոնագրի մէջ։

Ե. Վերտին կեանքի կանչել ժամանակակից յարմարաւոր փոփոխութիւններ ներմուծելով, նախկին ներքին կազմական կանոնագիրը, մարտական այն բոլոր գործոններն ու հաստատութիւնները, որոնք նպատակ ունին գոյութիւն ունեցող տնտեսական ու քաղաքական ու տնտեսական հասարակակարգը կործանելու և նրա տեղը բերելու նորը՝ համաձայն կուսակցութեանս ընդդրկած նպատակին և սկզբունքներին։

Ընդհ. եւ մասնակի բարեՆորոգումներ Ինքնավար Հայաստան

Ի նկատի ունենալով որ Թուրք կառավարութեան, ինչպէս և մասնակի Իթթիհատական կուսակցութեան համապետական ընդհ. բարենորոգչական խօստումները լոկ դիւանագիտական հնարիմացութիւններ են, ժամանակ չտալու և ներքին բմբոստումները անդամալուծելու։ Պատմականապէս ճշդուած ըլլալով, որ Թուրքիոյ ղեկավարիչ դասակարգին միշտ այդպիսի կապերի մէջ է մտնել երբ բաղկացուցիչ ազգութիւններից որ և է մէկի խնդիրը սպառնական հանգամանք է ստացել, տեսնելով եւրոպական կապիտալիստական պետութիւններու հակատամարտութիւնները և նրանց շահագիտական ընթացքը արեւելեան խնդրի մէջ։

Հիմունք ունենալով ազգերի ինքնորոշման իրաւունքի և Թիւրքիայի մարմնի մէջ ազգերի օտարասիրութիւնը կուլտուրական տարբեր աստիճաններով։

Ս. Դ. Հնչ. Կուսակցութեան Էրզ պատգ. ժողովը դէմ չդնելով հանդերձ Թիւրքիայի ընդհ. և մասնակի բարենորոգչական գործին, որոշում է, պաշտպանել ինքնավար Հայաստանի գաղափարը որպէս միակ միջոց Հայաստանի մէջ ապրող թէ՛ հայ և թէ՛ միւս տարբերի հետ հաշտ, խաղաղ, անվնաս-

դով զարգացմանը և յառաջդիմութեանը համոզուած լինելով որ դա այն անհրաժեշտ պայման է որով հայ ազգը կարող է իր ազգային անհատական գոյութիւնը ապահովել ներքին և արտաքին ոսնձգութիւնների դէմ, և որովհետև թուրք տիրող ազգի և նրա զեկավարիչ դասակարգերի պատմական անընդունակութիւնը և տգիտութիւնը այլ ևս անվիճելի է ինչպէս և որոշ է նաև արտաքին ոյժերի յարաբերութիւնները և քաղաքական ձգտումները, պաշտպանել՝ հնգնաւոր Հայաստանի գաղափարը, եւրոպական զօնտրոլով:

Միջ կուսակցական յարաբերութիւններ

Ի նկատի ունենալով որ Իթթիհատ և Թէրաքզը կուսակցութիւնը իր մէջ մարմնացնում է թուրք յարձակողական սոցիալիզմը իր բոլոր ստորաբաժիններով, որ նա հանդիսանում է վտանգաւոր և վնասակար թէ՛ քաղաքական կուսակցութիւնների և թէ՛ մասնաւորապէս բաղկացուցիչ ազգութիւնների համար:

Ս. Դ. Հնչ. կուսակցութեան Էրդ ընդհ. պատգամ. ժողովը խստիւ արգիլում է իր բոլոր գործադիր մարմիններին որ և է գործակցութիւն ունենալու նրա հետ և որոշում է կուսակցական անողոք պայքար մղել նրա դէմ և ջանալ նրա թուլացումը, նրա քայքայումը ու տապալումը առաջ բերել:

Ի նկատի ունենալով որ ներկայացում թիւրքիայում տիրող դասակարգը պարտութեան մատնելու համար զանազան կուսակցութիւնների համագործակցութիւնը անհրաժեշտ պայման է ներկայանում.

Ս. Դ. Հնչակեան կուսակցութեան Էրդ ընդհանուր պատգամաւորական ժողովը որոշում է իրաւունք տալ կեդր. վարչութեան և կուսակցական մարմիններուն տեղական և ժամանակաւոր խայթ ունեցող համաձայնութիւններ կնքել՝ որոշեալ խնդիրների շուրջ, ընդդիմադիր՝ ձախակողմեան և ծայրագոյն ձախակողմեան կուսակցութիւնների հետ, առանց վնասելու կուսակցութիւններու ընդդրկած սկզբունքներին,

ամբողջութեանը և հիմնական տակտիկային, ընդունելով միանգամայն որ տեղական մարմինները միշտ պիտի վարուին կեդր. վարչութեան այդ մասին տուած հրահանգների համաձայն։

Կուսակցական շրջանային փոխ-յարաբերութիւններ

Ի նկատի ունենալով, որ կուսակցութիւնս իր բոլոր շրջանների մէջ կանգնած է և գործում է Ս. դէմոկրատական հողի վրայ, իւրաքանչիւր շրջան իր տեղական պայմաններին յատուկ տակտիկայով՝ յենլով կուսակցութեան ամբողջականութեան սկզբունքի վրայ, է.րդ պատգամ. ժողովը որոշում է, տաճկահայ ժողովրդի և հայկ. հարցի ներկայ ճգնաժամային վիճակը աչքի առաջ ունենալով Ռուսաստանի և Կովկասի, Բուլկարիայի, Ռումանիայի ինչպէս նաև Ամերիկայի իր բոլոր կազմակերպութիւններէն պարտաւորեցնել, որ այ օրերում նրանք՝ իրենց գործունէութեան արտայայտութեան մէջ, ֆիզիքապէս, բարոյապէս և նիւթապէս նախապատուութիւն տան տաճկահայաստանի և տաճկահայ դատին։

Կեդրոնավայրի փոփոխութիւն

Տաճկահայաստանի մօտիկ լինելու եւայլ մի կարգ յարմարութիւններ աչքի առաջ ունենալով, Ս. Դ. հնչ. կուսակցութեան է.րդ ընդհ. պատգ. ժողովը որոշում է որ քաղաքական առաջին փոփոխութեան առթիւ կուսակցութեան կեդրոնավայրը Բարիզէն Սոֆիա փոխադրուի և կեդր. օրգան հնչակը այնտեղ հրատարակուի։

Ընտրութիւն կեդրոնի

Կեդր. Վարչութեան անդամներ ընտրուեցան ընկ. ընկ. Սապահդիլեան (Սահակեանց), Փարամազ և Վարազդատ (Արշակունի), փոխ անդամներ ընկ. Գ. Օզանեան և Սիւնիք։ ընդհ. տաճկաստանի վարիչ մարմնի անդամներ ընտրուեցան ընկերներ Դոկէտ, Պէնէ, Գ. Եղիկեան և Արծրունի, փոխ անդամներ Ռ. Կարապետեան և Ս. Վահագն։

Ընդհ. Պատգ. Ժողովը

Ս. Դ. Հնչ. կուսակցութեան Է. դպ. պատգ. ժողովը որոշում է, որ յաջորդ ընդհ. պատգ — ժողովը գումարուի առնուազն մէկ առատաւէն երկու տարուոյ յետոյ։ Ժողովատեղիի ընտրութեան գործը թողնել կեդրոնական վարչութեան բարեհայեցողութեանը։

Կեդրոնի պէտքերը	ԳՐԱՆՔ
Կեդրոն. վարչութեան. անդամներին տարեկան	20,000
Հնչակի հրատարակութեան	10,000
Կեդր. գործիչների օթեւի և ճանապարհածախս	4,000
Պոստի, հեռագրի	1,000
Օֆիսի ծախս	1,000
Պրոչիբների հրատարակութեան	1,500
Տան վարձքի	2,000
Թարգմանութիւնների	500
Ֆոնտէրի	5,000
Այլեւ այլքի	2,000
	47,000

Ս. Դ. Հնչ. գոնկրէսի այս որոշումէն ետք աւելորդ կը նկատենք ո՛ և է դիտողութիւն։

Մինչ միապետական Ռուսիա իր երկրին մէջ գործող հայ յեղափոխական կուսակցութիւնները մահու պատիժով կը սարսափեցնէր, սաղին Թուրքիոյ մէջ ազատ ապաստան գտնող նոյն կուսակցութիւնները Օսմ. պետութեան դէմ դաւադրութիւններ, պետական հարուածներ կը սարքէին։

Ինչ պիտի ընէին համաձայնականները և կամ ո՛ և է պետութիւն նմանօրինակ ակնյայտնի և ապացուցուած դաւադրութեան մը հանդէպ...

Ահա նաեւ Դաշնակցութեան օրգանին յայտարարութիւնը։

Բարեբաղդաբար, Պօղոս Նուպարը յայտնեց մի խոշոր, և տաղանդաւոր գործիչ և մէն-մինակ արեց աւելին, քան ամբողջ հայ բուրժուազիան։ Մէկու կէս տարուան իր անդուլ, հայրենասէր գործունէութեամբ, նա գրաւեց մի էջ հայ նորագոյն պատմութեան մէջ։ Տեղը և ժամանակը չէ ի յայտ բերելու այդ գործունէութեան մանրամասնները, յիշատակելու այն խոչերը, որ Նուպար հարթեց եւրոպական մի քանի դահլիճներում, իր կարող ու համոզիչ տրամաբանութեամբ՝ հայկական խնդրի կանոնաւոր ընթացքը ապահովելու համար։ Դեռ հեռու ենք, անշուշտ, այդ ընթացքը կատարելապէս ապահովելուց, դեռ չկարողացանք յօգուտ մեզ տրամադրել գերմանական դիւանագիտութիւնը, որ ունի իր որոշ գործելակերպը, բայց այնու ամենայնիւ, Նուպարի աշխատանքը Պերլինում ապարդիւն չպիտի անցնէ։ Զենք բնաւ յիշատակում նոյն դիւանագիտական ասպարէզի վրայ, Դաշնակցութեան ձեռքով կատարուած նոյնքան յամառ ու առայժմ յաջող փորձերը, որոնցմով նա ձգտեց լուսաւորել դիւանագիտութեան ղեկավարներին հայկական խնդրի ու Պահանջների վերաբերմամբ և փարատել մի շարք վնասակար նախապաշարումներ։ Մենք պատրաստ ենք գոհունակութեամբ և նոյն իսկ խանդավառութեամբ արձանագրել և դրուատել մանաւանդ այն գործերն ու դէմքերը որոնք հրապարակ են գալիս մեր շարքերից դուրս և դրուում են ի նպաստ մեր բազմաչարչար ժողովրդի

Այս կազէդօրային է պատկանում Պօղոս Նուպարի անձնաւորութիւնը, որ չենք կարող չողջունել, իբրեւ մի երեւոյթ մեր ազգային իրականութեան մէջ, թէպէտեւ տարակարծութիւնը մեծ է նրա և մեր հայեացքների միջեւ, թո՛ղ լինին մեզ հակառակ, թո՛ղ պայքարին չիտակօրէն մեր գաղափարների և տակտիկի դէմ, փո՛յթ չէ, որքան շատ լինին նրանք, այնքան լաւ. որովհետեւ իրօք յուսահատական է մարդկանց սովը, զարհուրելի է կարող ձեռնհաս գործիչների

պակասութիւնը մեր հայրենի բուրժուազիայի մէջ... : Հակառակորդ մեր քաղաքական ու ընկերային գաղափարներով, մեզ միշտ յամենայն դէպս պիտի կապէ : Նրանց հետ չիտակ, անկեղծ հայրենասիրութիւնը, ազնիւ ու անձնուէր աշխատանքը յօգուտ հարազատ ժողովրդի բարօրութեան և ընդհանուր գիտակցութիւնը ազգային տարբական չահերի և իրաւունքների : Զմոռնանք և մեր Ֆրանսացի բարեկամների և անոնց հիմնած Pro-Armeniaի մատուցած ծառայութիւնները :

Զենք չափազանցում նման օրգաններէ և առ հասարակ «Եւրոպական պրօպականդ»ի արժէքը, չենք էլ կարող սակայն, ուրանալ նրանց որոշ կարեւորութիւնը, ի նկատի ունենալով թէկուզ միայն այն հանգամանքը որ թիւր կառավարական շրջանները վերին աստիճանի զգայուն և ուշադիր են դէպի այն բոլոր քննադատութիւնները որ գալիս են Պարիզից, դէպի այն բոլոր փաստերը ու մերկացումները որ լոյս են տեսնում ֆրանսիական օրգանի մէջ Հայաստանի կացութեան և Օսմ. քաղաքականութեան մասին : Եւս առաւել, այդպիսի օրկանը անհրաժեշտ է այսուհետեւ, քանի որ զուցէ շուտով պիտի սկսին գործադրել հայկական ռէֆորմների նախագիծը : Անհրաժեշտ է ամենաարթուն հսկողութիւն երկրի մէջ, ամենախնամոտ արթնամտութիւն կատարելիք դէպքերի և զեղծումների : Ի՞նչ չափով և որքան ժամանակով կը գործադրուին ռէֆորմները, ի՞նչ է սպասում Հայաստանի մէջ սահմանուած երկու վայրերին, ի՞նչ ծրագիրներ են որոճում ռուս և գերման դիւանագէտները, ի՞նչ կը լինի առաջիկայ գարնան, ի՞նչ նոր աղէտ կը պայթի Թուրքիոյ գլխուն— ո՞վ կարող է գուշակել : Առանց երկար տանջելու մեր ուղեղները ապարդիւն ժամանումներով և մարդարէութիւններով, կատարենք մեր պարտականութիւնը, մնանք ամէն վայրկեան գործի հրապարակի վրայ, և որ ամենից անհրաժեշտն է՝ սիրտ ու թեւ տանք երկրի ժողովրդին, տանք նրան միջոց, հարստութիւն ինքզինքը պաշտպանելու և այդպիսով առաջն առ-

նելու լքումի և յուսահատութեան, որի անխուսափելի հետեւանքն է կործանարար, հայրենասպան գաղթը...։

ԴՐՕՇԱԿ թիւ 1 (237) 1914 Յունվար

ԿՈՉ ՄԸ

Հայրենակիցնե՛ր,

Պարտք կը սեպեմ սրտագին շնորհակալութիւն յայտնել նախ և առաջ բոլոր հանգանակիչ մասնախումբերուն, որ ամէն կողմէ մինչեւ իսկ հեռաւոր երկիրներէ պատասխանեցին մեր կոչին, ի նպաստ Կովկաս գաղթող մեր ազգայիններուն, և որ փութացին Հ. Բ. Ը. միութեան զրկելու հաւաքուած նպաստները, որոնց համագումարը մեր ակնկալութիւնը գրած է Արդէն։ Յարդ ստացանք և հետզհետէ Տփղիս և Էջմիածին փոխադրեցինք 60,000 բուպլի (շուրջ 60000 ոսկի և միւս կողմէ զանազան առաքումներ եւս ծանուցուած են մեզի, որ նոյնպէս պիտի գան աւելնալ յիշեալ գումարին վրայ, միւնոյն նպատակին յատկացուելու համար։ բայց այս գեղեցիկ արդիւնքին առջեւ, որոշուեցաւ փակել միութեան կողմէ բացուած սոյն հանգանակութիւնը, նկատի առնելով որ ներկայ ծանր իրադարձութիւնները, որոնց հանդէպ հայութիւնը կարող չէ անտարբեր մնալ պիտի հարկադրէ նորանոր զոհողութիւններ եւս։ Մանաւանդ որ բազմաթիւ նուիրատուներ ինծի զրկելով իրենց նպաստները, ցաւ յայտնած էին որ բացուած հանգանակութիւնը միայն Կովկասի գաղթականներուն սահմանուած է, և այդ առթիւ աւելի ընդհանրական հանգամանք ունեցող հանգանակութիւն մը բանալու գաղափարը կը թելադրէին ինծի։ Այդ նպատակով է որ իմ նախագահութեանս ներքեւ նոր յանձնախումբ մը կազմուեցաւ տեղս, ազգային շահերու պաշտպանութեան գործին յատուկ հանգանակութեան ձեռնարկելու համար, հայկական ընդհ. միութենէն դուրս, — որովհետեւ հետապնդելիք նպատակը այս բարեգործական ընկերութեան գործունէութեան սահմաններէն դուրս կը մնայ, այնպէս ինչպէս որ իր հիմնական կանոնագրին մէջ նախագծուած է։ Նորակազմ հանգանակիչ

յանձնաժողովը, որուն հաճեցան նաեւ Եգիպտոսի հայ հասարակութեանց երեք հոգեւոր պետերը, իր ներկայ կազմութեամբ կը կարծէ պատասխանել պէտքի մը որ ծնած է քաղաքական ներկայ կացութենէն և որ կը պահանջէ անխտրապէս բոլոր հայերու համագործակցութիւնը այս բաղդորոշ բոպէին, երբ մեր ազգին ապագան խնդրոյ նիւթ է և իր ճակատագիրն պիտի վճռուի։ Երբէք մեր պատմութեան մէջ ասկէ աւելի նպաստաւոր պատեհութիւն մը չէ ներկայացած, և երբէք մեր ազգային ցանկութիւններն իրենց իրականացումէն աւելի մօտ չեն գտնուած։ Բայց անհրաժեշտ է ասոր համար որ ամէն մասնաւոր նախաձեռնութիւններ կեդրոնացուին ազգային շահերու պաշտպանութեան համար, որպէսզի կարելի ըլլայ անոնք համերաշխել և այսպէսով ապահովել գործողութեանց միութիւնը։ Յորմէ հետէ ամենայն հայոց կաթողիկոսի վստահութեամբ հրաւիրեցայ ազգային հարցով զբաղելու, իմ պատուական հայրենակիցներս ինձի նկատմամբ իրենց համերաշխութեան ոգին և ազգասիրութեան ապացոյցները այնքան ազնուօրէն տուին, որ հիմա չեմ կրնար կասկածիլ թէ՝ աւելի սրտանց պիտի չ'աշխատին անխախտ և սերտ պահելու միութիւնը, որուն ապացոյցները արդէն տուին Բարենորոգումներու համար բանակցութիւններ կատարած միջոցին, ամէն տարբերու և կուսակցութեանց միութիւնը, աւելի երբէք անհրաժեշտ՝ մեր դատին վերջնական յաջողութեան համար։ Ներքին համոզումը ունիմ որ ամենքն ալ ինձի նման կզգան ծանրութիւնը, ինչպէս և կենսական բաղդորոշ կարեւորութիւնը մեր պատմութեան ներկայ ժամուն, ուր իրաւունք ունինք յուսալու թէ՝ մեր ազգային արդար ցանկութիւնները պիտի ունենան ընդհուպ այն լուծումը որուն ամէն հայ կը բաղձայ։

ՊՕՂՈՍ ՆՈՒՊԱՐ

Հայրենիք թիւ նոյն



⁂ Երբ 15-28 Յուլիսին Աւստրև-Հունգարիա վերջնագիրը կուտար Սերպիոյ, երբ պատերազմի յայտարարութիւնը կ'ըլլար երեքշաբթի կէս օրէն երկու ժամ ետք, ԴԱՇՆԱԿ. ԵՒ ՀՆՉԱԿ. կուսակցութիւնները այդ թուականէն ճիշդ տարի մը առաջ արդէն պայմանաւորուած էին Ռուս կառավարութեան հետ, դաւադրութիւն մը սարքելու համար Օսմ. կառավարութեան դէմ, եւ բանակցութիւններն ալ բաւական յառաջ գացած էին։

Միւս կողմէ, Անգլիա եւ Ֆրանսա ալ պիտի օժանդակէին Հայ-յեղափոխական կուսակցութիւններուն, ճիշդ ինչպէս որ խոստացած էին քսան եւ հինգ տարիներ առաջ։ Քիչ մը անդին տեսանք արդէն դաշնակցութեան մէկ թռուցիկ ապստամբական յայտարարութիւնը։ Տեսնենք թէ ի՞նչ հիմամբ. վրայ չարունակեցին իրենց գործունէութիւնը!։

914 Յուլիս 21 երկուշաբթի Օսմ. զօրշարժի յայտարարութիւնը կ'ըլլար, այդ օրն էր որ, ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ Պոլսոյ կեդրոնին մէջ արտասովոր եւ տենդոտ գործունէութիւն մը կը տեսնուէր։

Դաշնակցական չէֆերը քովնտի սենեակի մը մէջ դանփակ, դաղտնի եւ ծածկագիր հրահանգներ կը տեղացնէին դաւառի մասնաճիւղերուն, նոյնը կընէր նաեւ ՀՆՉԱԿԸ։

Ռուսական բանակը դեպի Օսմ. սահմանագլուխը յառաջանալու սպառազային շարժուեցեր։ Ահա կեդրոնի հրահանգը։

Մինչ հոս, Պոլսոյ մէջ, դաշնակցութիւնը Ռուս. դեսպանին համահաճ հաւանութեամբը գործելու կը պատրաստուի, անդին Վանայ մէջ դաշնակցական եւ հնչակեան չէֆերը, սահմանագլխին վրայ պալքանեան գոմիթէի անդլիացի պատուիրակներուն հետ դաւաճանութեան սակարկութիւնը կընէին...

Ահա այս առթիւ յեզոք անձնաւորութեան մը յայտարարութիւնը

Անցեալ տարի երբ պատերազմը սկսաւ, մինչեւ անգամ դեռ Թիւրքիա պատերազմի մէջ չմտած, հայ. յեղ. կուսակցութիւնները որոնք անկախ Հայաստան մը կ'երազէին, համոզուած էին թէ, վեց շաբաթուան մէջ

Գերմանիա Եւրոպայի քարէսէն պիտի ջնջուի, եւ ասոր արդիւնքներէն մէկը պիտի ըլլայ դաշնակիցներու միջեւ Թուրքիոյ հողին բաժանումը, եւ ասով մէկտեղ անկախ Հայաստանի մը ստեղծումը Թիւրքիոյ մէկ մասը կազմող գաւառներուն մէջ, Պրբրսթը եղբայրներէն մին, Լոնտօնի պալքանեան յանձնախմբի նախագահը, գաղտնի այցելութիւն տուաւ Վանի յեղափոխական հայերու առաջնորդներուն։ Անիկա Թիֆլիսէն եկաւ, նախապէս Կովկասի հայ յանձնախումբերուն հետ տեսակցելէ եւ անոնց հետ ծրագիրներ մշակելէ վերջ, որպէս զի Կովկասի եւ Թիւրքիոյ հայեր միասնական շարժում մը ընէին Թիւրքիոյ դէմ։ Յեղափոխական կուսակցութիւնները շարժեցան, Ռուսիայէն զէնք ընդունելով, եւ իրենց կարգին օգնեցին անոր։ Անկէ անմիջապէս վերջ, Ռուսիոյ հովանաւորութեամբ Վանի մէջ հայ ինքնավարական կառավարութիւն մը պիտի հաստատուէր եւ Արամ անուն մարդ մը վարչութեան գլուխը պիտի անցնէր։ Ասեն մը առաջ Նիւ Եորքի թերթերը կոչ մը հրատարակեցին, Ամերիկայէն Ցդրամական օգնութիւն խնդրելու, որ սոյն ապստամբին (որ ինքզինքը կոչած էր Վանի կառավարիչ տիզրոսով) եւ տեղւոյն եպիսկոպոսին ստորագրութիւնները կը կրէր։

Կոչնակ թիւ 27

Անդին Էջմիածնի ամենայն հայոց Կաթողիկոս սրբազանը իր բարձր հովանաւորութեան ներքեւ կ'առնէր Թուրքիոյ մէջ գործող Հայ-Յեղ. կուսակցութիւնները, ինչպէս նաեւ 'ի սփիւռս աշխարհի գործող Հայ-Յեղ. մարմինները՝ կրօնական թէ՝ աշխարհական։

Այս վասին պիտի խօսիմ արդեն իր մասնաւոր տեղը։

Համաձայնական արքունիքներուն մօտ Հայաստանի անկախութեան գործին համար, համաձայնութեան եզր մը գոյացընելու նպատակով, դարձեալ ամենայն հայոց Կաթողիկոսին նախագահութեան տակ մասնաւոր պատուիրակութիւն մը կը կազմուէր նախագահ ստենապետութեամբ Պօղոս Նուպար փաշայի...

Ահա տրուած հրահանգը.—

Կաթողիկոսին հրահանգով Պօղոս փաշա Նուպար վերակսած է իր պաշտամաւորութիւնը շարունակել Եւրոպայի մէջ հայկական հարցի մասին բանակցութիւններ վարելու համար։

Հայրենիք թիւ 1009 1914 Մարտ 5

Վահան Թէքէեան, Երուսաղէմի Կ. Պոլսոյ Ներկայացուցիչը, Ազգ. ժողովի Գահիրէի-Աղէքսանդրիոյ երեսփոխանը՝ Եգիպտոս կը փութար, և քանի մը օր առաջ լոյս կը տեսնէր «Արեւ»ը Օսմ կառավարութեան դէմ թունաւոր ապստամբական լպրիչ յայտարարութիւններով։

Հանրածանօթ Սուպահ-Գիւլ Եգիպտոսի մէջ իր ապստամբական բանախօսութիւններէն ետք, Հնչակեան կուսակցութեան կենտրոնական օրկան Հնչակին մէջ կը հրատարակէր հետեւեալ յայտարարութիւնը՝ և կ'անցնէր Ռումանիա, հոն հիմնելու համար Իճիւանար Հայասան անունով թերթ մը...

Սօցիալ դեմօքրաս Հնչակեան կուսակցութեան շարքերին

Ընկերնե՛ր,

Ս. Դ. Հնչակեան կուսակցութիւնը, որ ծնունդ է հայ իրականութեան անցեալական պայմանների, որ նրա իրաւազուրկ եւ հարստահարւող դասակարգերի իդէալների ներկայացուցիչն եղած է, եւ է, որ յանուն Թրքահայ ազատագրութեան, աւելի քան մի քառորդ դար, արեան ճանապարհով, դիմում է դէպի ազատութեան հանգրուան, այսօր խոնարհելով քաղաքական ժամէնտի հրամայական հանգամանքներին, իր ունեցած պատմական առաքելութեան խոր գիտակցութեամբ՝ կ'իջնէ քաղաքական կռիւի դաշտը յեղափոխութեան մարտագոյն շեփորը հնչեցնելու Տաւրոսի լեռներում եւ Հայկական Բարձրավանդակում, Օսմանեան բռնապետութեան արիւնոտ լուծը թօթափելու արդարն ուխտով։

Ս. Դ. Հնչակեան կազմակերպութիւնը, ազգերի գոյութեան այս մեծ պայքարում, իր մարտական եւ բարոյական ոյժերը ասպարէզ բերելով, յեղափոխական արդարամարտ սուրը պիտի նետէ ընդհանուր կռիւի կշռի նժարը, իբրեւ բաժին Ապստամբ Հայութեան։ Երեակ համաձայնութեան։ մասնաւորապէս ռուսական զէնքի բարոյական դաշնակիցը եւ խնամանորդը լինելով ներկայ ռազմում, իր տրամադրութեան տակ գտնուած բոլոր միջոցներով, իր յեղափոխական-քաղաքական-կազմակերպուած կարողութեամբ, նպաստելով Հայաստանում եւ Կիլիկեայում, Կովկասում եւ Ասիական Թուրքիայում Դաշնակից բանակի յաղթանակին, կատարած կը լինի իր սեպուհ պարտականութիւնը թէ՛ հանդէպ Հայաստանի եւ թէ հանդէպ քաղաքակրթութեան, ակէսիվ ձգտումներից զերծ, մաքուր հայրենասիրութեան գաղափարի տեսակետից, հայկական ազատագրութեան վերջ դնելու ուխտած ազնիւ բաջերը Թող հրապարակ գան իրենց բարոյական եւ նիւթական ոյժերով ծառայելու ընդհանրական Ս. Գործին, որ վաղը բազմաչարչար Հայ ժողովուրդը զինուած իր պատմական անցեա-

լով, հանդէս գայ Միջազգային Գոնկրէսում հայաrs եւ անվեհե՛ր առաջադրելու իր քաղաքական ազատութեան փոսթիւլատները, իր անյողդողթ կամքը ապրելու եւ իր արիւնաթաթաւ Հայրենիքի, երբեակ Համաձայնութեան հովանաւորութեամբ ապահովուած ինքնքնավարութեան իրաւունքով, բարձրանայ ազատութեան Գողգոթան, որ տեղից պիտի ծագէ՝ Իրաւունքի եւ Արդարութեան, Ազատութեան եւ եղբայրութեան արբազան արշալոյսը:

Օ՜ն, ուրեմն, ընկերնե՛ր, դէ՛պի գործ, մեր մահով ոտնահարենք Հայրենիքին սպառնացող մահը, որ ապրէ՛, ապրէ՛, յաւերժ ապրէ՛ Հայաստան-

Սոց-Դէմոկրատ Հնչ. կուսակցութեան

Կեդրոնական վարչութիւն

ՀՆՉԱԿ. 27ը Նօ. Դեկտեմբեր 1914

Կարելի՞ է նոյն իսկ երեւակայել այսքան անպատկառ յայտարարութիւն մը։

Գաբեգին Բաստրմաճեան Օսմ. խորհրդարանի հայ անդամը, որ Օսմ. կառավարութեան միջամտութեամբ միայն ռուսական հալածանքէն մազապուր ճողոպրած էր դաշնակցութեան որոշումովը Պուլկարիա կ'անցնի և անմիջապէս կը կազմէ կամաւորներու Ս. խումբը Կովկասի սահմանագլուխին վրայ, Ռուսերու կողքին Օսմ. բանակին դէմ կռուելու համար...

Հնչակեան կուսակցութիւնը չէր կրնար անմասն մնալ, ա՛ն ալ նոյն հետայն կը կազմէ կամաւորներու խումբեր, որոնք նոյնպէս պիտի կռուէին Օսմ. բանակին դէմ...

Դաշնակցական խումբերը Անդրանիկի հրամանատարութեան տակ էին, որ իր կարգին Կովկասի ռուս բանակի ընդհանուր հրամանատարէն պիտի ստանար իր հրահանգները։

Հնչակեան խումբերը Համազասպի հրամանատարութեան տակ պիտի գործէին, որ նմանապէս ենթակայ պիտի ըլլար ռուս բանակի ընդհ. հրամանատարի հրահանգներուն։

Արտասահմանի մէջ այս դաւադրական կազմակերպութիւններուն ատեն, անդին Վանայ մէջ Օսմ. Խորհրդարանի նորընտիր անդամը Ս. Վռամեան, յայտարարոթիւններ կը հրատարակէր Ամերիկայի դաշնակցական օրգան Հայրենիքի

մէջ և պահանջներ կը դնէր Վանի կուսակալին վրայ, և անոնց գործադրութիւնը կը պահանջէր հայերէն շարքերէն զինուոր տալու համար։

Օսմ. բարքամէնթի միւս մէկ անդամը, Վահան Փափազեան՝ Կոմս, իրեն հետ ունենալով դաշնակցութեան իշխանը! և և Արամ փաշան! քննական պատմութիւնը կը կատարէին հայաբընակ վայրերու մէջ և յայտնապէս ապստամբութեան կը հրաւիրէին ժողովուրդը։

Ասոնք կ'ըլլային երբ տակաւին Օսմ. կառավարութիւնը պաշտօնապէս պատերազմի յայտարարութիւն չէր բրած։

Կ. Պոլսոյ բիւրօն անպատկառ յայտարարութիւն մը կը հրատարակէր Ամերիկայի օրկաններէն Ասպարէզի մէջ, ստորագրութեամբ Է. Ակնունիի։

Ահա այդ յօդուածը նոյնութեամբ.

Ամերիկահայ գաղութին

Քաղաքական մարդիկն է սխրած, մարդիկը հանաշխահային, որից ամենին հին դողում նրա պատկերացումի առջև, եւ որը այսօր, այլ եւս հնուառոր երկիր չէ, այլ դաժան իրողութիւն։ Եւ այդ մահաբեր մարդի մի ծայրը՝ Հայաստանի մէջ, մեր հողի վրայ, այն թափուր վայրերում, ուր կիսաթաց մարդիկ հազիւ ոյժ ունեին ոտի վրայ կանգնելու, ուր խարխուլ խրճիթներ տնում էին նոյն իսկ երեկոյեան թերեւ հոգմերի առջև։

Հայաստան եւ Լէհաստան, երկու հսկայ սարդկներ, երկուսն էլ սգաւոր, բաժնուած երեք հաստուածի, երկուսն էլ բորբոքուած ազատութեան յոյսով, — այսօր բաներարեմ են անաւոր կռուի, որը երկու «աշխատանքի» միաժամանակ կը կատարէ, — կը ենեն կուռոնները, ու ամայութեան կը վերածեն այն հողը, որ մեղ չունի, սպառազինումի յանցանք չի գործած, բայց առանց յանցանքի իսկ՝ ոտի տակ կ'երթայ, կը խանդուի, ու կենսատու ցոլի փոխան արիւն կը ծծէ, արիւն կը խմէ.....։

Այդ սոսկումների հանդէպ ամերիկահայ եղբայրներ, գիտեմ, ձեր միտքն ու սիրտը փոքրացած է, եւ հնուառոր ձայներն անորոշութեան մէջ դուք տանջուում էք հայրենիքի ցաւերով, եւ ցուցի յուսահատ էք՝ հանդէպ այդ բացառիկ ողբերգութեան։ Իրաւունք ունիք։ Երբէ՞, այո՛, երբէ հայութեան պատմութիւնը այնքան երկիւղալի չի եղած, ինչքան այս անաւոր ընդհարումների մէջ, բայց եւ երբէ. այո՛ երբէ այնքան յոյսերի հետ չի եղել կապուած, որքան այժմ, միջազգային մեծ կնճիռների լուծման այս բացառիկ օրերին։ Երկիւղներ շատ տեսանք։ Բայց յոյսեր՝ ոչ։ Մեր կեանքը, մեր միտքը, մեր կա-

չին վարժեցան երկիւղներին, բայց յոյսերին՝ մնին միշտ կարոս մնացին, միշտ զրկած նոցանից Դիմաւորենք առաջինին մեզ յատուկ ամրութեամբ, եւ զրկենք երկրորդը՝

Նոր խանդով, նոր եռանդով, նոր բարով։

Յոյսերի իրականացման շրջանն է։

Յոյսերի երկուքի առջեւ լիներանք։

Ամուր մնանք այս մեծ վտանգի, ունենի՝ այս մեծ զոհաբերութեան հանդէպ։ Եւ մանաւանդ դուք, դուք հայեր, դարիբական հայեր, բարեցիք ուժգնօրեն ձեր ուշքը, նայեցիք տանջաւայր ռազմադաշտը, ուր ձեր մայր երկիրն է, նրան ցեղ ձեր սիրտը, ձեր բազուկը, ձեր դրամը, ձեր ոգեւորութեան բոլոր պտուղները, ու ամեն վայրկեան, բաշխելութիւն ուղարկեցէք ձեր ծնողներին, ձեր ընտանիքին ձեր զիւղերին —ամբողջ հայ— հայրենիքին, որը այս արիւնոտ օրերին մանաւանդ, կարոտ է եւ ծարաւ իր բոլոր որդոց բազուկին ու սիրոյն, ուրտին ու խրախուսանքին։

Ամո՛ւր կացէք, հայեր։ Դասն ու սեր բուերից ընկնելու ժամանակ չէ։ Անհոգ նրանց, որոնք հեռուից ու մօտիկից՝ ուրտեր կը կոտրեն, յոյսի փոխարեն բուքութիւն կը տարածեն։ Ընդոստացէք բոլոր այն բուերի դեմ, որոնք շմուռն կը տարածեն եւ ասացէք ամեն տեղ եւ ամեն օր, ձեր տների մէջ, ձեր ժողովներում, ձեր ծանօթ օտարներին՝ ուր հայը պիտի ապրի, պիտի յարատեւի, որպես զի տեսնի ազատութեան վարդ օրեր, որոնց համար նահատակեց իր զաւակները երեկ։ Ազատագրութեան շրջանի ժամանակ, զոհւում է այսօր, ընդհանուր ռազմադաշտի վրայ, իր պարտականութեան ճանապարհին...։

Ու այս մեծ զոհերի անցեալով եւ ներկայով է, որ պիտի կանգնիք Միջագգային Ատեանի առջեւ, ընդհանուր հաշտեցարարութեան ժամանակ, պահանջելու այն որ մերն է, այն կեանքը, որ մարդկային է, եւ այն իրաւունքները, որ ուրիշներ ունին բաց մեզ զրացան այսքա՛ն ձիգ տարիներ...։

Եւրոպան մեզանից արիւն ուզեց— տեցինք։ Մեզանից կուռ պահանջեցինք— տեցինք։ Կուռ, իբրեւ փէտայի, կուռ՝ իբրեւ զինուոր, կուռ՝ իբրեւ կամաւոր, բոլորն էլ արիւնով արբացուցած ազատութեան աւազանից դուրս եկած...։

Մեծ են, այո՛, մեր գաւառն ու տանջանքները։ Բայց մեծ են եւ պիտի լինին մեր յոյսերն ու ակնկալները։ Օրեան գաւառի եւ բուերի դա՝ նայեցէք գալիք օրերին,— լայն ուրտով, ու անսահման հաւատով։

Մարդի վտանգաւոր օրերն են։ Դեռ շատ անակնկալներ ունինք, անաւոր ու ասրոնիչ, բայց նոցա հետ եւ նոցանից վեր, շատ յոյսեր, բնութեամբ ժողովուրդին վայել մեծ սպասելիքներ։

Ամուր կացէք, դարիբ հայեր։

Է. ԱԿԵՆԻՆԵՐ

Կ. Պոլիս, 1 Յունվար 1914
Ասպարեզ թիւ 350

Դաշնակցութեան կեդրոնին կողմէ գաւառները տրուած հրահանգները իրենց ազդեցութիւնը ունեցած էին։ Վան, Սըվազ, Տիարպէքիր, Պիթլիս, Մամուրէթ-իւլ-Ազիզ, Ուրֆա Էնկիւրիւ, Դոնիա, Իզմիթ իրենց շրջականներով կազմ ու պատրաստ էին առաջին առթիւ ապստամբութեան։ Զէնք, տինամիթ, պօմպա ևն. ևն. ամէն բան պատրաստ էր, խումբերը կազմուած էին։

Ապստամբական շարժումներուն անցնելէ առաջ, անգամ մը ևս կ'անդրադառնանք զէնքերու և խումբերու կազմութեան խնդիրներուն և մեր կողմէ առանց ո՛և է դիտողութեան նոյնութեամբ կը ներկայացնենք այս խնդիրներու մասին փոխանակուած թղթակցութիւնները։

Իզմիթ Ապր. 14

Սիրելի ընկերներ

Դրաբերս իզմիթի գիւղական խմբերի խմբապետն է կարող էք ծանօթանալ իրան եւ նարկ եղած ծանօթութիւնները տալ, խմբերը աւելի կանոնաւոր վիճակի դնելու համար։

Անունն է Գուլբանգ, իսկ ես մեկնեցի Պարտիզակ, անոգ եղէք.

ՄԻՔԱՅԷԼ ՊԱՆԴՈՒԽՏ

Կարին Մարս 1

Ս. Դ. Հ. Կուսակցութեան
Պօլսոյ մասնաճիւղի

. . . . 92 խումբերու

(308 անցեռէ բաղկացեալ) ձայներու մեծամասնութեամբ Կարնեցի փասաբան Բ. պատգամաւորական ժողովին ներկայացուցիչ նշանակեցինք։

Զէնքերու խնդիրը մի մոռնաք.

Ի դիմաց

Ատենապետ — Ատենադպիր
ՄԱՐՏԻԿ — ՀԱՍՏԱՏԱՄԵԱՆՑ

Ատափազար, 21 Մարտ

Ընկեր Մուրաս

Սիրելի ընկեր,

. . . Պարտիզակի մասնաճիւղին կազմակերպած գիւղերու մասին տակաւին դիմում եղած չէ մեզի:

Չէնք հայթայթող մասնախումբի գործելակերպի մասին յանախ գանգատներ կը լսուին: Կը փափաքինք գիտնալ թէ այդ մասնախումբը ի՞նչ հանգամանքով կը գործէ:

ի Դիմաց

ԱՏԵՆԱԴՊԻՐ — ԱՏԵՆԱՊԵՏ

Մ. Թէրզեան — Գրող

Հոկտ. 18, Արմաւ

Համար 2.

Պոլսոյ ճնշակեան մասնաճիւղին,

. . . : Մեր ընկերներ կը փափաքին Ձեր հրամանին համաձայն եւ Ձեր ընտրութեամբ եւ միջոցաւ գնել գէնքերը-

Կը փափաքինք գիտնալ նաեւ գէնքերու արժէքը. Ա. Եիւնանի 3 պիլէզիկլի մարքին. Բ. Մաւզէր ատրճանակ, Գ. Գրմա չիմբէ բամ չագմագ, Դ. Ամերիկեան Ըմիք զրմա ատրճանակ, Ե. Պրաունինկ ամէնքն ալ (200 հատ) փամփուշտներով:

Դաշնակցական բարոգիչներ եկան հոս, մինչդեռ մեր ճնշակեան ընկերներէն ոչ ոք չերեւաց տակաւին . . .

ի Դիմաց . . . .

Ատենապետ — Ատենադպիր

Յ. ՄԵԼԻՏՈՍԵԱՆ — ՊՕՂՈՍ ՍԱՐԿ. ԳԱԼԷՄԵԱՆ

909 Յունիս 3

ՊԱՐՏԻԶԱԿ

Յարգելի ընկեր Ճանկիւլեան

Կողմդ եկող ընկեր Արտաշես Գըմբլոեան լաւագոյն գէնք մը գնելու համար Ձեզ պիտի դիմէ, կը խնդրենք որ պէտք եղած օժանդակութիւնը չզլանաք:

Ինքը տեղւոյս մարտիկ խումբերու խմբապետներէն մին

ըլլալով, կը փափաքի լաւագոյն զգեցքը ունենալ։ Դրամը տոկոսով առած է։

Ի դիմաց մասնաճիւղի
Պարտիզակի

Ատենապետ — *ԲՈՅ*
Ատենադպիր — *ՅԱՐՀԱՏ*

ՊԱՐՏԻԶԱԿ 19 Մարտ

Հնչակեան կուսակցութեան Կ. Պոլսոյ մասնաճիւղին

Կողմդ եկող ընկեր Ատոմ Ամատունի զգեցքերու մասին պիտի խօսի Ձեզ, կը խնդրենք հարկ եղած դիւրութիւնը տայիք իրեն։

Մեր յիշեալ ընկերոջ յանձնած ենք 8 ուրբ Օսմ, ոսկի, պիտի զգե՛ք երեք հատ ՀԷՆՐԻ ՄԱՐԹԻՆ։ Կը յուսանք թէ մնացորդ դրամին համար պէտք եղած պայմանաժամը կ'ստանաք։

Հնչակեան կուսակցութեան
Վարչութիւն Պարտիզակի

6 Դեկտ. Դերչան

Հնչ. կուսակցութեան ղեպոր վարչութիւն, Պոլիս

Ընկերներ

Ընկ. Ս. Երեցեան (*Շիրվան*) որ Ձեր վկայականով դրկուած էր հոս, եկաւ ու մեր բոլոր կազմակերպական կէտերը քննեց, ու մեր նիւթական եւ բարոյական կարողութեան տեղեկացաւ։

Մասնաճիւղիս գոյքերն են առ այժմ 6 ՄԵԾ ՄՕՍԻՆ, ԵՐԿՈՒ ՌՈՒՍԱԿԱՆ ՍԻՐՄԷԼԻ, ԵՐԵՔ ՀԱՏ ԱՏՐՃԱՆԱԿ

Ի դիմաց . . . . .

Ատենադպիր — *Դ. ՏԱՃԱՏ*
Ատենապետ — *Դ. ՍԼԱՔ*

Աղեմա 25 *Դեկտ.*

Հ. Ս. Դ, Պոլսոյ մասնաճիւղին

Ընկերներ,

. . . . , Գալով զէնքի մասին՝ մխիթարուելու միջոցը կը պակսի:

ԵՐԲ ԵՐԿՐԱԳՈՐԾԱԿԱՆ ՊԱՆԲԱՆ ՍԵՐՄՆՅՈՒ ՏՈՒԱԾ ԸԼԼԱՐ, ՀԱՍՏԱՏ ՄՏԱԴՐՈՒԹԻՒՆ ՈՒՆԷԻՆՔ ԳՈՆԸ 1-3 ՄԱՍԸ ՆՈՅՆ ՆՊԱՏԱԿԻՆ ՑԱՏԿԱՅՆԵԼ:

Թիւրք գիւղերէ շրջապատուած ըլլալով անհրաժեշտ է որ զինուինք: Եթէ կարելի է մասնավնարով հայթայթուի մեր զէնքեր:

Ի Դիմաց . . . .

ՆԱԽԱԳԱՀ	ԱՏԵՆԱԴՊԻՐ	ԱՏԵՆԱՊԵՏ
Վ. Ճանան Քինյ. Մկրտիչեան	Մերկէր Փորուզալեան	Ե. Պագրեան

Կեսարիա, 28 Յունվար

Պատուարժան կուսակցութեան

Կ. Պոլսոյ մասնաճիւղին

Սիրելիներ ընկերներ,

. . . . . մեր մասնաճիւղի անդամներէն գրաբեր 115 թիւ ընկեր Ռ. Սիսլեան եւ 116 թիւ ընկեր Յ. Ժամկոչեանը հապնեպ կերպով եւ 150 Օսմ. ոսկւոյ չափ գումարով մը նամբորդել տալ յաջողեցանք:

Գործի գալիք զէնքեր եւ ուժանակներ ամէն տեսակէն պիտի գնեն: Երկար բարակ գրել հարկ չկայ, դուք կրնաք զարժանն տեսնել:

Կրկին կը խնդրենք կարող գործիչ ընկեր մը, զէնքեր եւ ուժանակներ փութով ղրկեցէք մեր ընկերներու հետ։

Ատենապետ	Ատենադպիր
ԳԼԻՇԷ	ԱՍՈՒՊ

Գայսերի, Մարտ 14

Պարոն Կ. Զիյէմեան

Ցարգելի ընկեր,

. . . . . Թէքիրտ իսէրիմ զէնք իսի իլէ գործիչ իսի էն չօք մեծ պան էրն իլ հաճքասը, եախոս տանա էվվել պուրատա պալրնմալը տր. գիրա ԴԱՇՆԱԿՑԱԿԱՆԼԱՐԸՆ հէմ զէնքէրի հէմ տէ գործիչլէրի կելտի, պիզէն զիյատէ հազըր տրլար:

Օրատան ուսքա կէքիրմէզ իսէն մուրլազա պիր քայ տանէ պօք տիճամիք կէքիր, պուրատա եափան էրպապրնը պուլսում, ազտան չօզ անլա,

պուրատա էնցի հիւնէրի իլէ եափան ուսպար վար տրս, էփէյինէ հազրլանմրը տր:

Խումբա ալտրմ թէնրիւպէ օլունտր, եէրլի պարուրը էյի օլուր, թէրթիպլի էնգա իլէ եափիլրրսա էմսալսրզ օլանազ տր: ԱՍՈՒՊ

Յ. Գ. Թարիխէն 30 կիւն էվվէլ Խրպանպօլա կէլմէֆ իւզրէ Գայսէրիյէտէն իրի ընկեր եօլա չրզտրզ. Խրպանպօլտաֆի մալլէրին ուսուլիմիզէ կէլմէզ օյտուղրնը անլատրզ, շիմտիլիֆ Գօնեատան պիր մրզտար ալտրզ. լուրմէն պէօյիւֆ գունտագլը մաւզերլէրին վէ սահրէնին ֆիյաթլարրնը պիզէ պիլտիրին:

ԱՏՐԷՍ

Գօնեատա Մէնիտիյէ խանրնտա Կ. Թաշնեան Վասպասրլա Ռ. Սիսլիեան տէյիւ եազրնրզ:

Հայկայ Մարս 30

Ընկեր Ճանկիւլեան

Ամսէ մ'իվեր է որ նոս բացուեցաւ արաբական գլիւպ մը զուս արաբներու համար: Քրիստոնեաներու համար ալ բաց են դուները:

Մի բան որ երեւան կուգա օրէ օր, այն ալ սա է թէ՝ արաբական կուսակցութիւնը դուրս կուգայ թիւրքին դեմ:

Թերթերու, գրքերու, եւ Զէնքերու խնդիրները մի մոռանամ:

Ի դիմաց

Ատենապետ ՎԱՐԴ — Ատենադպիր ԱՄՊ

Քոլ - Գասապա Յունվ. 23

Պաշտելի հերոս Մուրատ

. . . . . Զէնքի խնդիրը ամենէն շատ զբաղեցնող խնդիրն է, բոլոր տրջանին մէջ հնչակեան զինուորներէն իյչերը զէնք կը կրեն: Առանց գործնականն քայլերու սոսկ գաղափարով յեղափոխական գործնեութիւնը շատ մեծ բան չարժեր ըստ իս . . . . .

Ի դիմաց Ս. Լաստ Գնդի

Ատենապետ ՎԱՀԱՆ ԶԷՅԹՈՒՆՅԵԱՆ — Ատենադպիր Գ. ՓՕՍԹԱՃԵԱՆ

Քրի, Յունվար 31

Պոլսոյ Հնչակեան մասնաճիւղի պատեցի ընկերներու.

. . . . բողուցի խչոյին օձիր առնենք վարդապետը, այս հրատալի մա. կաբոյծը, Դաշնակցութեան հրամանատարն է, Քառակուսի Անդրանիկը:

Մենք չենք ուզեր չափուիլ ատանկ պոռոտախօսներու հետ:

Չենքի աննիրաժեշտ պէտք ունինք, դրամը պատրաստ է, զենքը միչեւ տեղս հասցնելն է կարեւոր խնդիրը, որ Ձեր ուշադրութեան կը յանձնեմ...:

Ի դիմաց . . .

Վ. Նախագահ

Լ. ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ

ԶԷՆՔԻ ԽՆԴԻՐԸ Հայ. Յեղ. կուսակցութիւններու համար ո՛չ միայն սկզբունքի խնդիր մը, այլ միեւնոյն ատեն ապրուստի միջոց մըն ալ էր: Գաւառներու մէջ ուրեք ուրեք նոյն իսկ բռնի եւ իր իսկական գինէն աւելի դրամ կը գանձէին միամիտ ժողովուրդէն:

Մանմանադրութեան առաջին տարին իսկ, ԶԷՆՔԻ ԽՆԴԻՐԸ դրուած էր յեղափոխականներու սեղանին վրայ, որ հետզհետէ մեծ ծաւալ մը ստացած է. մանաւանդ ՀՆՉԱԿԵԱՆՆԵՐՈՒ ծանօթ Քէօսքէնճէի Դօնկրէէն ետ:

Ի՞նչ հարկ կար այնքան ծանր զէնքերով սպառազինուելու, որո՞ւ դէմ արդեօք, ի՞նչ բանի համար, իբր Օսմ. Բարձրագոյն բաւական չէ՞ր պարզ, սովորական եւ օրէնքով ընդունուած ձեռքի ատրճանակ մը, բայց պէտք էր զինուիլ ի հարկին . . . .

Խումբերու կազմութեան մասին զաղափար մը տալու համար, այս անգամ ալ խօսքը կուտանք կուսակցական օրկանին:

Ներկայիս մեր կազմակերպութիւնը Թուրքիոյ զանազան քաղաքներուն և նահանգներուն մէջ բաղկացած է.—

1.— *Քաղաքական և մարտական խմբերէ.*

2.— *Դիւղացիական միութիւններէ.*

3.— *Արհեստակցական միութիւններէ.*

4.— *Բօսկերթիւ-գործակցական միութիւններէ. «Սպասողական-Բօսկերդիւներէ»:*

5.— *Մտաւորականներու միութիւններէ:*

Քաղաքական խումբերը մարդուած թէ պաշտպանողական և թէ յարձակողականի համար։ Իւրաքանչիւր գիւղի մէջ 5-8 վստահելի անձեր, փորձ և յանդուգն 45-50 տարեկան։ Ասոնք ստանձնած են վերին հսկողութիւնը, շարժուն կամ թռուցիկ խումբ, պաշտօնին է հասնիլ փեշայիներու քաղմազան կարիքներուն, զանոնք տեղափոխել մէկ վայրէն միւսը, ապահովել անոնց փախուստը, և։

Այս շարժուն խումբերէն զատ, իւրաքանչիւր գիւղի մէջ կը գտնուին.

1. Մարտական խումբ, 30-50 մարդէ բաղկացած։

2. Օժանդակ կամ դրամական խումբեր, պաշտօնին է գտնել նիւթական աղբիւրներ։

3. Զինական խումբեր, հայթայթելու համար զէնքեր։

4. Կանանց խմբեր, մասնաւորաբար ապահովելու համար նամակներու փոխանակութիւնը և զանազան վայրերու հաղորդակցութիւնը։

* * *

Ահա նաեւ պատերազմի յայտարարութենէ քիչ առաջ Դաշնակցական ուրիշ շէֆի մը անպատկառ մէկ յայտարարութիւնը.

«Վերջացա՞ւ արդեօք արիւնալի մարտական շրջանը Հ. Յ. Դաշնակցութեան համար, Թուրքիոյ Սահմանադրութեան հրատարակութիւնը, պարլամէնդի բացումը, Համիտի գահընկեցութիւնը և Պոլսի վերջին դրաւումը ազատական բանակի կողմից արդեօք վերջ տուին կարմիր ռէժիմի օրերին, ո՛չ. արիւնալի շրջանը չէ վերջացած, ներկայ բոպէն հինի և նորի փոխանցման շրջանն է հաստատուն և որոշ ոչինչ չկայ. ուստի ամէն յեղափոխական կուսակցութեան պարտքն է զգուշաւոր, խոհեմ և ՊԱՏՐԱՍՏ ԼԻՆԵԼ. չտարուիլ խաբեպատիր երեւոյթների խլիւզիայով և ձեռնթափ չլինել»։

Ոսման-Բարիզ-թիւ 14 էջ 325

ՄԻՋԿՈՒՍԱԿՑԱԿԱՆԸ որ իր բանակցութիւնները ու խորհրդակցութիւնները պահ մը ընդհատած էր, ձեռք կ'առնէր վերսին ազգային անկախութեան հարցը։ Ցայտնի կուսակցականներ միսիոնարի տարազին տակ սպրդած էին դաւառներու մէջ։

ԲԱՐԵԴՈՐԾԱԿԱՆԸ իր բոլոր տրամադրելի նիւթական ուժը ԳԵՐԱԴՈՅՆ ԳԱՂԱՓԱՐԻՆ յատկացուցած էր։

Ամերիկա, Ռուսիա, Եգիպտոս, Ռումանիա, Բարիզ, Լոնտոն հանգանակիչ մասնախումբեր կազմուած էին կղերին նախագահութեան տակ, բոլոր այն կեդրոններուն մէջ հայ մարտական խումբեր, այսինքն չէթէներ կազմուած էին Կովկասի և Տարտանէլի ճակատները թուրքերուն դէմ կռուելու համար...

Համաձայնական մամուլը իր կեղծ և սեթեւեթեալ յայտարարութիւններով կը փայփայէր, կը շողոքորթէր այս կազմակերպութիւնները՝ ո՛չ թէ անոնց ուժէն բան մը սպասելուն, այլ ներքին խռովութիւն մը յարուցանել տալու նպատակով։ Համաձայնականները այնպէս կը կարծէին թէ, հայ. յեղ. կուսակցութիւնները բան մը կ'արժէն, ուժ մըն են, բայց որչա՜փ մեծ եղաւ իրենց պատրանքը, երբ տեսան այդ մեծ ուժին արդիւնքը...

Ահա այս մասին համաձայնական թերթի մը կարծիքը։

Անգլիոյ 7 rդ դաշնակիցը

Այսպիսի գրուածքներուն մէջ մասնաւոր յիշատակութեան արժանի է **Տէյլի Գրաֆիքի** Սեպտ. 23 ին **մեր եօթներորդ դաշնակիցը** վերնագրին տակ հրատարակած նկատելի մէկ յօդուածը, զոր հոս կը ներկայացնենք Ծարգմանաբար։ «Բառեակ համանայնութիւնը Սերպիոյ եւ Պելճիքայի հետ դաշնակցելով վեց պետութիւններու յանգեցաւ. Ո՞վ է ուրեմն անոր եօթերորդ դաշնակիցը զոր մենք ճանչցած չենք։ հասարակութիւնը այսպէս պիտի հարցնէ, բանզի այս եօթերորդ դաշնակցին վերաբերեալ իրողութիւնները ըստ արժանոյն իրեն ներկայացուցուած չեն անգլ. մամուլին միջոցաւ։ եւ սակայն այս պատերազմիժամանակ այս փոքրիկ դաշնակիցը կը կռուէր դաշնակցած կողմէն եւ իր զոհաբերութիւնները ներկայ պատերազմիկ ազգերուն ամենէն աւելին են, բաղտատարար։ Այս դաշնակիցը իր բոլոր ունեցածը, ինչքը, ընտանիքը, կեանքը, հայրենիք եւ ազգային զո-

յութիւն-վտանգի ենթարկած է դաշնակցայ սուրբ դատին համար։ Կրնայ հասկցուիլ թէ մատնանշած այս եօթերորդ դաշնակիցը ՀԱՅԵՐՆ են։ Հայը դաշնակցած կողմէն կռիւին մասնակցեցան սկիզբէն։ Անոնք հրաւերի չ'սպասեցին, **պազարլըխի** չիմտան, փոքր ազգերու դատը, ազգայնութեան սկզբունքը, որուն համար համաձայնութեան պետութիւնը սուրը քաշած են, հայոց սրտին անչափ մօտ էր, իրենց դարաւոր իղձերուն այնչափ լաւ կը համապատասխանէր, որ իսկոյն ընդգրկեցին զայն, եւ նշանը տրուելուն պէս մէկէն հոգւով սրտով կրկէսը նետուեցան։ Պալքանեան ազգերը այսօր շահամոլութեան տխուր տեսարան մը կը պարզեն։ Անոնք կեցած կ'սպասէն որ որ կողմը զօրաւոր է որ անոր յարին, հայերը այդպէս չըրին։ Երրեակ համաձայնութեան սկսած պատերազմին օրինաւորութիւնը սկիզբէն հրապուրեց զիրենք, եւ դաշնակից պետութեանց վրայ իրենց ունեցած լիակատար վստահութիւնը զիրենք կռիւ մղեց եւ անա սկսան կռիւ։ Անոնցմէ 100 հազարէ աւելի ռուս բանակին մէջ կը կռուին եւ 20,000 է աւելի հայ կամաւորներ ալ կը կռուին կովկասի բանակի կողքին, հայ կամաւորք կը գտնուին նաեւ դաշնակցած շարքին մէջ ի Ֆրանսա։ Մինչեւ իսկ կըսուի թէ Զօր. Ալէքսիէֆ, ռուս բանակին ներկայ հրամանատարը, ծագմամբ հայ մըն է։

Իսֆնահար Հայաստան թիւ 14 1914

Վերջապէս Օսմ. կառավարութիւնը իր գոյութիւնը պահպանելու համար, զէնքով կը միջամտէր պատերազմին՝ դաշնակից բանակներու կողքին կռուելով համաձայնութեան դէմ...

Համաձայնութեան հայեացքը ծանօթ ըլլալով Օսմ. երիտասարդ պետութեան, բնականաբար չէր կրնար երթալ իյնալ անոր ճիրանները մէջ, որովհետեւ աչքի առջեւ ունէր մանաւանդ Ռուսիոյ կեղծ և անարդ քաղաքականութիւնը։

Օսմ. կառավարութիւնը երբեք չէր կրնար վստահիլ համաձայնական քաղաքականութեան, երբ մանաւանդ աչքի առջեւ ունէր գերման բանակին ուժն ու կորովը, Պելճիքայի վիճակը և հետեւաբար չէր ուզէր իր դարաւոր թշնամիին գերին իյնալ...

Ռուսական բանակը Կովկասէն կը յառաջանար Սահմանագլուխը, թուրք բանակը պատնէշին վրայ պատրաստ էր դիմաւորելու Օսմ. մայր հայրենիքի ուխտեալ թշնամին, բայց եկու տես որ հերթը աւելի անարկու թշնամի մը կար որ դա-

բանակալ կ'սպասէր, իր հայրովը Ջուրովը մնած, մեծցած իր երախտաւորեաներեր ներսէն, այո, ներսէն կը դաւէին։

Վանայ մէջ կազմակերպուած կուսակցական չէթէները, այդ անիծապարտ խմբակցութիւնները կը դաւէին պետութեան և հայրենիքին դէմ։ Ռուսական բանակին յառաջապահի պաշտօնը կը կատարէին, և ներսէն ալ զէնք կը պարպէին թուրք զինուորին և ժողովուրդին վրայ... Նոյն իսկ Ռուսիոյ դէմ պատերազմի հրատարակութենէն ալ առաջ։

Թողուին որ դաւադիրները խօսին

Գաբեգին Բաստրմաճեանի, Համազասպի չէթէները սահմանագլուխ հասած էին, Վռամեան, կամ, իշխան Սրամփաչա քաղաքամիջի ֆէտայիները կ'առաջնորդէին և ռուս բանակը կը մտնէր Վան...

Կամաւորների մեկնումը Էջմիածնում

Հրաման եր եկել Ապրիլ 15ին անպայման մեկնելու։ Հրաժեշտի ողջոյն տալով հայկական զնդին, որ բաւական երկար ատեն ապրեց Երեւանում, Բանաֆեռում եւ Զարնափնի գիւղում, ես հաճոյով սկսէ է վկայել, որ ինձ յանձնուած շրջանում ապրած ժամանակամիջոցում, բոլոր խմբերը ջանասիրութեամբ սպասպում էին զին. նախապատրաստութեամբ եւ իրենք հատակերպում էին առանց ո եւ է դժգոհութեան առիթ տալու։ Գնդի հրամանատար Պ. Վարդանի եւ խմբերի հրամանատարներ Պ. Պ. Դրօի, Համազասպի, Բեռիի եւ Խեչօի վարպետ ու ամուր ղեկավարութիւնը այն արդիւնքը ունեցաւ որ շատ լաւ հետեւանքներ ստացին։ Այս ամենը դրդում է ինձ անկեղծ շնորհակալութիւն յայտնել կրթութեան եւ դաստիարակութեան գործի բոլոր ղեկավարներին եւ ցանկալ նրանց մարտական յաջողութիւններ եւ բարեկեցութիւն բոլոր քաջարի կամաւորներին։ Շնորհակալութիւն եւ բարի ճանապարհ Աստուծոյ հետ։ Կամաւորները տեղաւորուեցին ճեմարանի եւ յարակից բնակարաններում։ Հրամանատար մասը եւ եկած հիւրերը կաթողիկոսին ներկայանալուց յետոյ, ընթրիքով հիւրասիրեցան ճեմարանի սեղանատունը, միաբաններից շատերի ներկայու-

թեամբ: Ինչ խօսք, որ այսեղ խօսեցին աւուր պաշտաման հաւատք եւ ոգեւորութիւնը չափ ու սահմանի չունէր: Կեռ գիշերին բոլորը գնացին հանգստանալու: Վաղուց էր Էջմիածինը չէր ունեցել իր մէջ այդպիսի թանկագին հիւրեր: Վանքի հնադարեան պարիսպները վաղուց է արձագանգ չէին տալ այդպիսի ռազմական գոչերի: Այդ գիշեր մի խորհրդաւոր ոգի իջաւ մեհեանների վրա եւ խօսում էր ուրիշ լեզուով, քան խօսել էր մինչ այդ: Միւս օր Վաղարշապատեան Ճեմարանը, վանքը եւ ամբողջ Վաղարշապատը ոտքի վրայ էր: Ժողովուրդ էր գալիս եւ շրջակայ գիւղերից: Էջմիածինն ու Ճեմարանը լցուել էին մարդկային ծովով: Զարմանալի կերպով գեղեցիկ անուանվել էր: Արեւի ճառագայթի խուրձերը թափուում էին ամէն կողմ: Մասիսն էր միայն որ յանդուգն ծածկուում էր: Ճեմարանի ընդարձակ բակը լցուած էր կանաչորներով կազմ ու պատրաստ: Շուրջը անհաշիւ ժողովուրդ: Բակի կեդրոնում Ճեմարանի եւ պարտէզի մէջտեղ պատրաստուած էր մաղթանքի յատուկ մի տեղ, ուր եկաւ կանգնեց կաթողիկոսը շրջապատուած երկ կարգ եկեղեցականներից: Հանդիսաւոր մաղթանքից յետոյ կաթողիկոսը դիմեց կանաչորներին խաչաձեւական խօսքերով: Ցիշեց երեմնի հայկական բանակները, Վարդանին իր ընկերներով եւ յարեց որ Վարդանանց գործը այժմ կանաչորներն են շարունակում: «Որպէս Լեհիտասը իր երեք հարիւր ընկերներով ընկաւ հայրենիքի համար եւ արժանացաւ յաջորդների յիշատակութեան, այնպէս եւ ձեր յիշատակը օրհնեալ կլինի եւ հայ սերունդները ձեր անունները պարծանքով կը յիշեն: Գնացէք մեր սիրտը ձեզ հետ է, գնացէք յուծելու մեր դարաւոր վրէժը, եւ ազատելու բազմաչարչար տանկահայ ժողովուրդին: Կաթողիկոսից յետոյ խօսեց Ճեմարանի տեսուչ Ս. Մաղիսանեան, որ շեշտեց գիտութեան եւ գենքի համագործակցութիւնը:

Ս. Վրացեան

Հորիզոն թիւ 125

ՎԵՐՋԻՆ ՕՐԸ(*)

— «Հէ՛յ, ընկե՛ր, ասա՛, խմբապետն այնժամ
Հէ՛յ, ընկե՛ր, ասա՛, ես նայեր հապա,
Ես նայեր, մի տե՛ս, հայերը հեռուից
Ձե՞ն գալիս արդեօք մեզի օգնութեան...»
— «Խմբապե՛տ, ասա՛, ընկեր խմբապետ,
Տեսնում եմ անա, ինչպես ափիս մէջ,
Սեւ ծովից մինչեւ ծովը Վրկանայ,
Մինչեւ Կոմկասի պատնէշը ձիւնոտ.
Գալիս են խումբ-խումբ հայերը ճեպով,
Գալիս են ճեպով մեզի օգնութեան:
Իջնում են Սիւնեաց մութ-մութ սարերից,
Եջնում Գուգարքի խոր-խոր սորերից,
Շիրակի դաշտից մինչեւ Այրարատ,
Ու ողջ ափերը անուշ Արաքսի
Անվերջ տագնապով իրար են անցնում...
Գալիս են ամեն կողմից Կոմկասի
Գալիս են հեռու, հեռու կողմերից
Գալիս են կարոտ պանդուխտներն ամեն.
Գալիս են գրած տղերքը նորից
Գալիս են պարզած դրօշն հայրենի:
— «Հէ՛յ, ընկե՛ր, կանչեց խմբապետը հիմի
Ա.ռ. հրացանդ, դաշտն իջիր շուտով
Իջիր Արքազան ափը Եփրատի
Մեծ տառապանքի վերջին օրն է աս...

ՀԱՅԱՍՏԱՆ թիւ 17 1915 Մայիս 13

(*) Ռուսահայ բանաստեղծն Ց. Թումանեանի, «Հորիզոն»ի մէջ լոյս տեսած ոտանաւորէն կ'արտատպենք այս մասը։ Ծ. Խ. Հ. Ի.

Խուզարկութիւններ

Կատարուած խուզարկութիւններէն և քննութիւններէն հաստատուեցաւ թէ, անագին քանակութեամբ զէնք ներմուծուած է ներքին գաւառները, զէնքերը պահուած են մասնաւորապէս դպրոցներու առաջնորդարաններու և եկեղեցիներու մէջ։

ՍԱՄՍՈՆԻ մէջ ձեռք անցուած զէնքերու մեծ մասը պահուած էր առաջնորդարանի մէջ։

ՏԻԱՐՊԷՔԻՐԻ մէջ երեւան բերուած զէնքերը պահուած էին դպրոցին մէջ

Պատին վրայ բացուած էր նրբացք մը, ուրկէ սողոսկելով հարկ էր մտնել դպրոցին յարակից ներքնայարկը, նրբանցքը ծածկուած էր խոշոր աշխարհացոյց պատկերով մը։

ԵՐԶՆԿԱՅԻ մէջ դարձեալ խուզարկութեան հետեւանքով երեւան եկած են զէնքեր... տինամրթներու մէկ մեծ մասը զանգակատան վրայ՝ իսկ մաս մը ալ եկեղեցիին մէջ պահուած էր։

ԿԵՍԱՐԻՈՅ մէջ զէնքերը և պայթուցիկները պահուած էին դպրոցին և գերեզմանատան մէջ։

ՍԵԲԱՍՏԻՈՅ մէջ մաս մը զէնք ձեռք բերուեցաւ եկեղեցիին մէջ, իսկ մէկ մասը գլխաւորներու և մանաւոր տեղերու մէջ զետեղուած էր։

ԱՐԱԲԿԻՐԻ, ԱՏԱՓԱԶԱՐԻ, ՊԱՐՏԻԶԱԿԻ, ԻԶՄԻԹԻ, ՊՈՒՐՍԱՅԻ, ՀԱՃԸՆԻ, ԷՆԿԻՒՐԻՒ մէջ եւս մեծաքանակ զէնք պահուած էր, եկեղեցիներու, դպրոցներու, գերեզմանատուներու և գլխաւորներու մէջ։

Ուրֆայի ազգ. հաստատութիւններու, գլխաւորներու մէջէն երեւան բերուած զէնքերը բազմազան ըլլալով հանդերձ, կանուխէն խրամներ, պատնէշներ, եւայլն տեղեր չինուած էին։

Առաջին նշանին ապստամբները յարձակեցան թուրք ժողովուրդին վրայ և յետոյ զէնք պարպեցին ապստամբութիւնը հանդարտեցնելու փութացող ոստիկան զինուորներու վրայ, որոնցմէ մէկքանին՝ ընդ որս նաեւ ոստիկան զօրքերու հրամանատարը նահատակուեցան։

Արդէն ըսինք թէ, պալքանեան պատերազմէն անմիջապէս ետք, կուսակցութիւնները իրենց գործունէութեան մը սկսելու որոշում տուած՝ և հետեւաբար ամէն տեղ ՄԱՐՏԱԿԱՆ ԽՈՒՄԲԵՐ կազմուած էին։

Զէնքերու խնդիրը ուշադրութեան մանաւոր առարկայ եղած էր, այնպէս որ ընդհ. պատերազմի սկզբնաւորութեան պահուն խումբերը գաղտնապէս զինուած էին, և Ռուսիոյ գիտակցութեամբ, անոր հաւանութեամբ և օժանդակութեամբը կուսակցութիւնները սահմանադրուխէն զէնք կը ներմուծէին։

Կուսակցութիւններու երէկուան դահիճը, Զարիզմը, այսօր իրենց ամենողորմած ՊԱՇՏՊԱՆԸ, ՀԱՑԸ, ԹԱԳԱՒՐԸ, ԿԱՑՍԸ, եղած էր։

Արտասահմանի կուսակցական բոլոր թերթերը Օսմ. կառավարութեան դէմ նախատալից յօդուածներ կը հրատարակէին, համաձայնական մանաւանդ ռուսական ԼԵԳԷՈՆՆԵՐՈՒ արաղ և կատարեալ յաղթանակին համար մաղթանքներ և աղօթքներ կըլլային։

Պատերազմի յայտարարութիւնէն ետքը կուսակցութիւններու ամենողորմած Զարը հետեւեալ յայտարարութիւնը կուղղէր ՀԱՑ ՏԱՌԱՊԵԱԼ ԺՈՂՈՎՈՒՐԴԻՆ։

MANIFESTE PUBLIÉ
PAR
LE TZAR DE RUSSIE A L'ADRESSE DES ARMÉNIENS

Arméniens !

Toute la population de la grande Russie de l'Orient jusqu'à l'Occident a accucilli respectueusement mon appel. Arméniens ! après 5 siècles de tyranie sous la qu'elle un grand nombre de vous avez été cérassé et souffre encore, l'heure où vous recouvrez votre liberté a enfin sonné.

Les Russes se suviennet avec fierté de leurs fils Armeniens.

Les Lazareff, les Melikof et autres Armeniens avaient combattuau côté de leurs frères Slaves ponr la grandeur de la patrie.

Votre fidelité depuis des siecles continne pour moi un gage que vous remplirez dans ce jour suprême tous vos devoirs avec une foi et une conviction inébranlables et que vous travaillirez pour le triomphe decisif de nos armes et de notre cause juste. Armenienes, en vous unissan avec vos frères de sang tous les sceptres des Tzars vous finires par les bienfaits de la liberté et de la justice.

Ռուսահայերու և Թրքահայերու դարաւոր թշնամին ա-սոր ՃՆՇՈՒՄՆԵՐՈՒ պաշտպան եղած էր։

ՖԻՆԼԱՆՏԱՑԻ, ԼԵՀԱՍՏԱՆԻ, ԲՈԼՈՆԻՈՑ, ՃՆՇՈՒՄՆԵՐ մոռցուած էին...

Ռուսիոյ Զարին Հայերուն ուղղած Յայտարարութիւնը

Հայե՛ր,

Արեւելքէն արեւմուտք մնծին Ռուսիոյ բոլոր ժողովուրդը կատարեալ յարգանքով ընդունեց հրաւէրս։

Հայե՛ր, հինգ դարերու բռնակալութենէ մը ետք — որուն ներքեւ ձեզմէ մէկ մնծ մաս մը ճզմուած էր և կը տառապի այսօր — վերջապէս ձեր ազատութիւնը ձեռք բերելու ժամը կը հնչէ այլեւս։ Ռուսերը հպարտութեամբ կը յիշեն իրենց հայ եղբայրները։ Լազարէֆները, Մելիքոֆները և ուրիշ հայեր, որոնք հայրենիքին մնծութեան համար իրենց Սլաւ եղբայրներուն հետ պատերազմած էին։

Ձեր դարաւոր հաւատարմութիւնը ինծի համար դրաւական մըն է թէ, այս դերազոյն օրը, դուք ձեր պարտականութիւնը պիտի կատարէք անայլայլ հաւատքով մը և պիտի աշխատիք մեր զէնքերու և մեր արդար դատին վերջնական յաղթանակին համար։

Հայե՛ր, Զարերու կառավարութեան տակ, Ձեր արեւնակից եղբայրներուն հետ միանալով վերջապէս պիտի վայելէք ազատութեան և արդարութեան բարիքները։

* *

Մենք չենք զարմանար Զարական կառավարութեան այս յայտարարութեան վրայ, վասնզի գիտենք այդ յայտարարութեան տակ ծածկուած դիւանագիտութեան արժէքն ու նպատակը. մեզի զարմանք պատճառող դէպքաւոր պարագան՝ Զարական կառավարութեան խօսքերէն բաղմիցս խարուած և դեռ երէկ Ռուս հալածանքէն, տառապանքէն սարսափէն սասանող, անոր դէմ մարանչող կուսակցութիւններու, կարողիկոսներու, պատրիարքներու անգամ մէն ալ երթալ և այդ կեղծ հավանաւորութեան տակ մտնելն է։

* *

Ապստամբութիւնը ներքին դաւառներու մէջ ընդհ. հանդամանք մը ստացած էր, հրոսախումբեր կազմուած էին ամէն կողմ։

Վանի ընդհ. ապստամբութենէն եաք, Պիթլիսի, Տիարպէքիրի, Մուշի, Զէյթունի, Շապին Գարա Հիսարի մէջ կազմուած հրոսախումբերը իրենց շրջականերու մէջ զբաղուած թուրք գիւղերը կը հրկիզէին և անպաշտպան կիները ու երախաները սրախողող կընէին։

Ճամբաներու վրայ զինուորական փոխադրութիւններու հսկող ջոկատները կ'սպաննէին, պարենաւորումի յատուկ կարաւանները կը կողոպտէին, հեռագրական թելերը կը խորտակէին։

Իրերու այս ընթացքին առջեւ ինչ պիտի ընէր կառավարութիւնը։

Ներքին անօրինակ ապստամբութիւն մը, համաձայնութիւններու հաչուոյն կազմակերպուած և ապացուցուած լրտեսութիւն մը կար մէջտեղը, ինչ ընելու էր կառավարութիւնը, ինչ պիտի ընէր համաձայնական ո՛և է կառավարութիւն նմանօրինակ ապացուցուած թշնամութեան մը, դաւաճանութեան մը առջեւ։

Ապստամբական շարժումները

1914ի Փեբր.ի սկիզբները Ցեղ. հրոսախումբերը Խիզանի մէջ զինուորահաւաք ջոկատներուն դէմ ելնելով զէնքով եաք մղեցին անոնցմէ շատերը։

Այդ միևնոյն հրոսախումբերը Վանայ և Պիթլիսի ճամբաները բռնելով, հեռագրական գիծերը կտրեցին և զրկուած ջոկատներուն դէմ չարաթնելով կռիւ մղեցին։

*
* *

Մուշի մէջ ոստիկան զինուորներու դէմ կրակ բրին կամաւորները։ Անդին ալ Խօմա գիւղին մէջ միւտիրին բնակարանը կրակի տալով միւտիրը ու իր թնը զինուորները նահատակեցին։

Մշոյ մօտակայ մէկ վանքը իրենց ապաստանարան ընող հրոսախումբերը ոստիկան զօրքերու չկարան հրամանատարը և անոր հետևող երեք ոստիկան զինուորները նահատակեցին։

Ահա այս առթիւ Մշոյ առաջնորդ ծանօթ Խարախանեան Ներսես եպս.ի մեկ նամակը.

ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ Մուշ, 12 Յունվ. 1914

ՏԱՐՈՆՈՅ

Թիւ 10

Ամենապատիւ Տէր... Ս. Ա. Եպս.

Բարեխնամ Պատրիարք Հայոց Թուրքիոյ

Կ. Պոլիս

Ժամանակին տեղեկութիւն տրուած էր երեք ժանտարմաներու սպանութեան մասին. Կէլիյէկիւզանցիները իրենք կառավարութեան յանձներ էին երեք ոճրագործները, Եղօ Պօղոսեան, Սահակ Տօնօեան և Արեթ Կիրոյեան, ասոնցմէ զատ ձերբակալուած են նոյն գիւղին մէջէն վեց մեղսակիցներ։

Առնուած տեղեկութիւններուն նայելով Գաղսօ Յովհաննէսեան, Ղազար Աբրահամեան, Յովհաննէս Պօղոսեան ամբաստանուած են սպաննողներու դիակները ուրիշ տեղ փոխադրելուն և այս կերպով ոճրագործներուն օգնելուն համար։

Ասոնց մասին ի հարկէ Բաղէշի Գեր. Առաջնորդը ժամանակին տեղեկութիւն տուած կ'ըլլայ Ձեր սրբազնութեան։

Խորին յարգանօք մնամ աղօթակից

Ն. Եպս. Խարախանեան

Առաջնորդ Ս.ը հասարակ ոճրագործներ կը նկատէ հրոսախումբերը։ կերպիւ իւիմ մեղմացնելու համար իր պաշտպանած կուսակցութիւնները։

* * *

Շարունակենք։

Փետր. 16ին Զէյթուն ապաստմրած էր, զինուորական փախստականները Յեղ. հրոսախումբերը կառավարական պաշտօնատան և զինարանին վրայ յարձակեցան։ Զէնքերը ա-

ւարի տալէ ետքը, կորցեցին նաև հեռագրական թելերը, յայձակեցան նաև պաշտօնեաներու և թուրք ընտանիքներու վրայ և ապաստամբութիւնը զսպելու գացող ջոկատներուն դէմ զէնք վերցնելով անոնց մէկ մասը նահատակեցին։

1914 Մարտ 11ի 500 զինեալ հրոսակներ Զէյթունի Թէքքէ վանքին մէջ հաւաքուելով իրենց դէմ զրկուած զինուորներուն հետ ընդհարեցան և ոստիկան զօրքերու հրամանատարը և անոր հետեւորդ ոստիկան զինուորները նահատակեցին։

Ահա այս մասին ալ բարձրաստիճան կղերականի մը նամակէն քաղուած հետեւեալ տողերը։

ԿԱԹՈՂԻԿՈՍԱՐԱՆ ՀԱՑՈՑ — 1915 Մարտ 20

Ի ԿԻԼԻԿԻԱ

Համար 4930—57

Ամենապատիւ

Տ... Ս. Ա. Եպս. Պատրիարք Հայոց

Կ. Պոլիս

Կարգ մը զինուորական փախստականներ, մաս մըն ալ ենիչիրներ կառավարութեան ձեռք առած ագդու միջոցներուն չնորհիւ կը յուսանք թէ պիտի զսպուին, որով անմեղ և հաւատարիմ ժողովուրդը տարապարտ կասկածներէ պիտի ազատի։

Դ. Բանակի հրամանատար և ծովային նախարար բարձր. Ճէմալ փաշա ըստ ամենայի կը հաւատէ անմեղ հասարակութեան կեանքի, ինչքի, պատուոյ պաշտպանութիւնը, պայմանաւ որ բնաւ յարարերութիւն չունենայ ո՛ր և է դիւրութիւն ընծայելու ու թեթեւ կասկածանքի մը տեղի չտայ։

Միակ կասկածս և երկիւղս այն է, մի գուցէ փախստականք, եկեղեցի մը կամ Ս. Աստուածածին վանքը ապաստանին, այն ատեն բնական է որ ապաստարանը քանդուի.

Սիրոյ և մեծարանաց ողջունիս

Մնամ աղօթարար

...

Դարձեալ նոյն տարեւոյ Փետր. ին Կեսարիոյ Տէվելու գիւղաքաղաքին մէջ Ամերիկայէն այն ինչ վերադարձող Գէորգ Համբարձումեանի տունը պօմպա մը պայթեցաւ։ Խուզարկութիւն կատարուելով, հայ վարժարանի և գերեզմանատուներուն մէջ գտնուեցան 90է աւելի, պատրուգաւոր պոմպաներ, հարիւրաւոր մանկիկներ, մանգիր քարիւղի թիթեղներով վառօդ, ֆրանսերեն, ռուսերեն, անգլիերեն. հայերէն ծածկագրութեան բանալիներ, հրոսախումբերու պարտականութեան յատուկ հրահանգ մը և բազմաթիւ նամակներ։

Ձերբակալուած ամբաստանեալները խոստովանեցան թէ զէնքերը և պայթուցիկները հայ. անկախութեան համար սպասրասուած են։

Ատանայի Տէօրթ Եօլի, Իսկէնտէրունի շրջականները, Թշնամի նաւատորմիղներուն լրտեսութիւն ընելու, երկաթուղին քանդելու համար, դարձեալ թշնամի նաւերու կողմէ ցամաք հանուածները՝ կարգ մը Օսմանցի հայեր էին, որոնց վրայէն գտնուեցան նաեւ զանազան հրահանգներ։

Դարձեալ Մարտին, Վանայ Թիմար գիւղախումբի կեդրոնին մէջ ոչխարները համբելու տեղն, Հայերը կառավարական պաշտօնեաներու դէմ զէնք գործածեցին, իսկոյն հազարէ աւելի հրոսակներ ժողվուեցան։ Ապստամբութիւնը ծաւալեցաւ Կեավաշ, Շատախ գաւառակները։ Ապստամբները հեռագրական գիծերը կտրեցին։ Եւ իրենց կազմակերպած թակառներուն մէջ ոստիկան-զինուորներ և Կեավաշի գաղրն նահատակուեցան։

Ապստամբութիւնը յետոյ ծաւալեցաւ Վանայ մէջ։ Իսլամ տուներու վրայ, Օսմ. պանքային վրայ, բէժիին վրայ, թղթատարական և հեռագրական պաշտօնատուններու վրայ

պօմպաներ նետուեցան և քաղաքը կրակի տրուեցաւ։ Ապրիլ 17ին, մավզէրով, պօմպայով և ձեռնառումբերով զինեալ հրոսակներուն թիւը 2500ը կանցնէր։ Վանայ բերդին մէջ ապաստանած զինուորներն ու խլամ ժողովուրդը մինչեւ Ապրիլի վերջը քաղաքը պաշտպանեցին։ Քաղաքը հրոսակներուն ձեռքը անցածին պէս, իսկոյն հայկական առժամեայ կառավարութիւն հռչակուեցաւ։ Վանայ և Պիթլիսի կողմերը, հրոսակներու խրամներուն մէջ ռուս և ֆրանսական զլխարկներ ձեռք անցուեցան։

Ապրիլ 12ին, զէնքի խուզարկութեան միջոցին Տիարպէքիրի մէջ 60 տինամիթի պօմպա, տուփերով տինամիթի քարսիլ և անթիւ անհամար ու խոշոր տուփերու մէջ տինամիթի վառօդ, խիստ շատ մավզէր, մանլիխէր, Շնայտէրի հրացան և եկեղեցիներու ու դպրոցներու մէջ հազարներով զինուորական փամփստական գտնուեցան։

Սըվազի նահանգին մէջ, խոստովանութիւններով հաստատուեցաւ թէ Կովկասի բանակին նահանջի գիծին սպառնալու համար 30,000 հոգինոց ուժ մը պիտի համախմբուէր։ Սըվազի, Սուչէհրի, Մէրզիֆունի, Ամասիայի մէջ ձեռք ձգուած պօմպաները, յատկապէս պատրաստել տրուած ոստիկան-զօրաց զգեստներ, զինուորի փողեր, շատ մը արդիւնաւոր զէնքեր արդէն իսկ կը հաստատէին այդ պարագան։ Միւս կողմէ Սու Շէհրի կողմերը՝ Էրզրում գացող զինուորական խումբերու դէմ կրնակի տեղի ունեցած յարձակումներ ալ նախապանը կը կազմէին ապստամբութեան։

Յունիս 11—12ին, զէնքի խուզարկութեան միջոցին Գարահիսարը Շարգիի Հայերը ապստամբելով քաղաքը կրակի տուին։ 800 ապստամբ բերդին մէջ ապաստանած զինուորներէն, ժողովուրդէն, ոստիկան-զօրքերէն և ոստիկաններէն շատերը նահատակ ըրին։ Ոստիկան-զօրաց հրամանատարն ալ նահատակներուն մէջ էր։

Դարձեալ զէնքի խուզարկութեան միջոցին, Իզմիթի, Պաղչէճիքի, Ասաբազարի մէջ հաբիւրներով պօմպա և արգիլեալ զէնք, Արմաշի վանքի և շրջականերուն մէջ՝ խիստ քաղմաթիւ պօմպաներ և զէնքեր գտնուեցան։

Պրուսայի նահանգին չատ մը տեղերու մէջ պօմպաներ և զէնքեր գտնուեցան և զինեալ հրոսախումբեր սկսան անդորրութիւնը խանգարել։

Մարաշի մէջ 500 հոգինոց հրոսախումբ մը Ֆրնտրճրգ գիւղին մէջ կանոնաւոր խրամներ շինելով, իրենց վրայ զբաղուած զինուորական ուժին դիմադրեցին ու յարձակում գործեցին և չատերը նահատակեցին։

Այս միջոցներուն, Էնկիւրիի Պողազկեան գաւառակին մէջ զօրաւոր հայ հրոսախումբեր յարձակեցան ժողովուրդին և զինուորներուն վրայ։

Միեւնոյն կերպով Ուրֆայի մէջ ալ հայերը զէնքով ապըստամբութեան յարեցան։

Ահա ապստամբութիւնները, որոնք ռուսական սահմանագլուխի Օսմ. բանակներուն ապահովութիւնը կը վերդովէին և պաշտպանողական ուժ չունեցող պարենաւորումի խումբերուն վտանգ կը սպառնային։

Անմ արտասահմանի կուսակցական թերթերու Ապստամբութեան յատուկ յայտարարութիւնները

Հայկական ապստամբութիւնը

«Մոկսի մէջ ապստամբութիւնը մեկու կէս ամիսէ առնի տեւեց: Մուշի մէջ ապստամբութիւնը, Ռուրհնի դեկտարութեամբ, պայթեցաւ նոր ուժով: Ապստամբները եղեղով խաղաքեն, ուր Էրզրումեն 8000 ասկեր դրկուած էր, անտառապատ լեռներու մէջ մասնական կռիւ կը մղեն:

ՀԱՅԱՍՏԱՆ թիւ 25. 1915 Յուլիս 6 Շբ.

Սասունի մէջ հայ խումբերը քաշուած են լեռները և ցոյց կուտան կորովի դիմադրութիւն: Մուշի և շրջակայից հայերը ընդհարուած են քրտերու հետ: Վանի մէջ կը շարունակուին հայերու ընդհարումները զօրքերի հետ: Նոյնը և Վիլայէթին, մանաւանդ Շատախի մէջ ուր հայ խմբերը կը շարունակեն կռուիլ զօրքերի և քրդերի հետ: Ապստամբութենէն մտահոգ թուրքերը և զօրքերը կը քալեն Մուշի վրայ:

ՀԱՅԱՍՏԱՆ թիւ 17. 1915 Մայիս 13

Այս միջոցին Էրզրումի Օսմ. բանակին հայ զինուորներն ու զինուորական սպաները իրենց զէնքերով կ'անցնէին ռուսական ճակատը զէնքերնին կը դարձնէին թուրք բանակին դէմ...

Խաչատուր Պօնապարթեան, որ ուրը ամիսներ Էրզրումի Թուրք բանակին մէջ ծառայած էր իբր բժիշկ, իր ընկերներուն հետ ապրիլի կէսերուն ձիով փախած է թուրք բանակեն եւ Ծանծաղ գետը անցնելով, անձնատուր եղած է ռուսերուն:

ՀԱՅՐԵՆԻՔ 1915 Յուլիս 27

Տասը հազար զինուած հայեր քաջաբար եւ համարձակ պաշտպանում են, յոյս ունենալով որ դրսից շուտափոյթ օգնութիւն կը հասնի:

Վան պաշարուած է Ապրիլ 10 ից:

ՆԵՐՍԷՍ ԵՊԻՍԿՊ.

ՅԱՂԹՈՒԹԻՒՆ

7 Ապրիլ 1915 առաւօտեան ժամը 12

1. Վան-խաչ փողոց գերի բռնեցինք 5 զինուոր եւ մէկ զապիթ իրենց հրացանները:
2. Ալինօղլու փողոցին մէջ երեք բուրք սպաննեցինք:
3. Տէր Թոմասեան դիրքէն զարկինք 2 բուրք:
4. Առամ տէր Ներսէսեանի տան առջեւ զինուոր մը սպաննուած է:
5. Առամ տէր Ներսէսեանի տան առջեւ սպաննեցինք 6 զինուոր:
6. Մամուս աղայի ղէլան պաշարուած է մեր կողմէ, ղէլայի զօրքերը ո՛չ հաց ունին ո՛չ ջուր: Այդ շրջանին մէջ չէրքեզ մը սպաննուած է: Հրացան մը եւ ձի մը գրաւեցինք:
7. Խաչ փողոցի հեռագրատունը իր ամբողջ գոյքերով եւ մէկ հրացանով գրաւուած է: Հեռագրաթելը եւ թէլէֆօնի թելերը կտրուած են:
8. Գերմանական շէնքի կուին մէջ մեզմէ մէկը սպաննուած եւ մէկը վիրաւոր:

Խնայեցէք ձեր փամփուշտները:

Ու այդ բոլորին առջեւ մեզի մէկ բան մնաց . . . . **հայ կամաւորներու շարքը:**

Մերկացուցէք ձեր սուրերը Անդրանիկ, Վարդան եւ անոնց ընկերները, մերկացուցէք վրէժխնդրութեան միակ ուխտով: Մարդասիրութեան վեհանձնութեան ամէն չափ անցած է: Թո՛ղ նոյնիսկ թուրք մայր լայ, որքան հայ մայր լացաւ: թո՛ղ նոյնիսկ թուրք. տուն քանդուի, որքան հայ օճախ քանդեցաւ:... Վրէժ, անխիտ վրէ՛ժ, առանց ցաւ վեհանձնութեան, ու մինչեւ վերջին հայը, ամբարեի ամէն կողմերէն, նոյնիսկ պատերազմէն վերջ ձեր արիւնոտ ուխտովը դասիարակուի՝ ու ոսոխին արիւնովը յագենայ: Ասկէ վերջ վաս թող համարուի այն հայը, որ գթութեան վեհանձնութեան կրաւորականութիւնն կը ցուցադրէ, եւ հայութիւնը ասկէ վերջ թող վրէժխնդրութեան հետ նոյնանայ . . . . . .

Ա՛լ ի՞նչ մնաց մեզի բացի վրէժէն:

Շամբուր

ԱՍՊԱՐԷԶ թիւ 372 Սեպտ. 24,1915

Ապստամբութիւնը ինչպէ՞ս ծագեցաւ:

Մենք թշնամուց խլեցինք քսանէ աւելի գիրք: Ամենամեծ յաղթութիւնը տարինք կռւի չորրորդ օրը, այդ եղաւ Համաւ-ազայի կշռայի պայթեցումը և հրդեհումը: Մենք ռումբ գրինք կշռայի հիմի տակ, ռումբը պայթեցաւ թէև տունը չքանդեց, բայց գիշերը՝ յանկարծ տեսանք որ կշռան կը վառի: Այնտեղ գտնուող զօրքի մի մասը վառուեց, իսկ միւսը, գիշերից օգտուելով, փախաւ: Այդ գիրքէն թշնամին վռնտուելով մենք տէր դարձանք ամբողջ Այդեստանին: Անկէ վերջ կառավարութիւնը փորձեց յարձակումներ անել, բայց բոլոր կէտերի վրայ ետ մղեցինք: Թուրքերի կողմից մօտ 1000 հոգի վիրաւորուած և սպաննուած են: Կառավարական ոյժը 6000 էն աւելի չէր, հապա կէսը կանոնաւոր զօրք: Այսպիսի կռիւ մեր ամբողջ պատմութեան մէջ եղած չէ, նախ որ ժողովրդական էր, մասնակցեց ամբողջ ժողովուրդը առանց դասի, կոչման խտրութեան, յետոյ ամէն զոհողութիւն արաւ, և որ ամենանշանաւորն է, այնպիսի հերոսութիւններ կատարեց և այնպիսի զեկավարներ դուրս եկան, որ ոչ ոք չէր սպասում: Գործի մասնաւորական մասը առանձին էր կազմակերպուած՝ զէնքերը առանձին: Կառավարութիւնը բոլոր միջոցներին դիմեց որ անձնատուր լինինք:

ՀԱՅԱՍՏԱՆ թիւ 25. Յուլիս 6

Հայ կամաւոր խմբերը կեղծանալ սկսած են Բայազիտի և Սալմասի շրջաններուն մէջ: Քեռի և Համազասպի խմբերը Սարդարապատ, Կաղզուանէն փոխադրուած են Քեռի ընդհ. հրամանատարութեան տակ, իսկ Վարդանի և Համազասպի խմբերն ալ միացած են Վարդանի հրամանատարութեան տակ: Հայ խմբերուն կը միանան աւելի խոշոր միութիւններ, հազարեակներ կազմելու համար:

Ազատակ թիւ 356 1915

Հայ կամաւորներու առաջին զունդը յաջող ճակատամարտ մը ունեցած է Դիլմանի մօտերը, եւ առանց զօրքի գրաւած է շարք մը ամուր դիրքեր: Այս խոշոր յաջողութիւնը բարձր կերպով գնահատած են ռուս զինուորականները:

Հայ կամաւորների երկրորդ զունդը մեկնեց Եկդիրից Դրօյի հրամանատարութեան տակ: Խմբին առաջին զօրծը եղաւ Կաւսէ գիւղի մօտի կռիւը, որի մանրամասն նկարագրութիւնը տրուած արդէն «Հորիզոն»ում: Այդ կռւում վիրաւորւեց Դրօն եւ խմբի հրամանատարութիւնը անցաւ Արմէն Կարոյին օգնականութեամբ Խէչոյի:

Հայ կամաւորների Բ. զնդի խմբապետներուն եւ զինուորներուն

Տղերք ջան, երեկուայ Նայեմ. 28 թւականը կրնանք հպարտութեամբ յանձնել հայ նորագոյն պատմութեան: Երէկ մեզմէ ամէն մէկը կատարեց իւր սրբազան պարտականութիւնը դէպի իւր հայրենիքը բարեխիղճ կերպով: Մեր ռուս զինակից եղբայրները վկայ են դրան:

Ես չեմ ուզում խօսքերու շռայլութեան մէջ մտնել, միայն այսքան ըսեմ, որ հայ ժէտայու պատիւը բարձր պահեցէք բոլոր դիրքերու էլ:

Շա՛տ ապրիք:

Հրամանատար ԱՐՄԷՆ ԿԱՐՕ
(Գարեգին Բասրմաճեան)

Ապարեզ թիւ 351 1915

Հայ կամաւորական Դ. խումբը Բեռիի հրամանատարութեան տակ, ուշագրաւ հանդիպացաւ Սարիղամիշի սոսկալի ճակատամարտին մէջ: Այս զունդին կամաւորները ձեռնաւորութիւնու միջոցաւ շատ մը թրքական խրամներ խլեցին եւ իրենց հեծելազօրքին յարձակումներին այնքան ազդուեցան որ հայ հրամանատարը թեռի՝ Ս. Գեւորգի խաչ ստացաւ:

ԿԱՄԱՒՈՐՆԵՐԸ.— Հայկական 6 րդ զնդի հրամանատար Գրիգոր Աւշարեանց, հերոսական մահուամբ ինկած է պատերազմի դաշտին վրայ Յուլիս 7 ին մղուած ճակատամարտի միջոցին: Մարմինը տարուած է Պաֆու, հոն թաղուելու համար: Այս առթիւ Ազգ. Պիւրօն, Պաֆուի Հայ,

յանձնախմբի նախագահին հեռագրած է որ իր կողմէ ցաւակցութիւնները յայտնէ Աւշարեանի ընտանիքին: Այդ հեռագրին մէջ այսպէս ըսած է Աւշարեանի մասին: «Անիկա ինկաւ հերոսական մահուամբ, կռուելով մեր ընդհ. հայրենիքի եւ հայրենի ժողովրդի ազատագրութեան համար»: Կովկասեան ռազմադաշտին վրայ, նոյնպէս հերոսական մահուամբ ինկած է խմբապետ Խէչօն, ինչպէս կը հեռագրուի Վանէ Յուլիս 12 թւով հեռագրով մը: Ազգ. Պիւրօն այս երկու բաջամարտիկ կամաւորներու համար Թիֆլիզի մայր եկեղեցիին մէջ հոգեհանգստեան հանդիսաւոր պատարագ կատարել տուած է:

Քաղաքը գրաւելէ ետք, հայերը ճաշկերոյթ մը տուին ի պատիւ Զօր. Ն.-ի Զօրավարը իր բաժակաճառին մէջ ըսաւ թէ՝ Ռուսերը 1626 թուականէն ջանացած են ազատել Հայաստանը, բայց քաղաքական պարագաները թոյլ չեն տուած ատոր: Հիմա պետութիւններու խմբակցութիւնները հիմնովին փոխուած լինելով, յոյս կայ որ հայերը վերջապէս պիտի ազատին: Արամը, պատասխանելով ըսաւ «Երբ ամիս մը առաջ ապստամբութիւն հաշակեցինք յոյս ունէինք առաջերուն գալուն: Մեր կացութիւնը անել էր, պէտք էր կամ անձնատուր լինել և կամ մեռնիլ, Թիֆանիքի նաւազախումբին պէս երաժշտութեան հանդիսաւոր հնչիւններով: Մենք նախընտրեցինք վերջինը: Անապասելիօրէն դուք մեզ օգնութեան հասաք և մեր յաղթութեան կէսը մենք պարտական ենք Ձեզ»:

ՀԱՅԱՍՏԱՆ թիւ 25 1915 Յուլիս 6

Վանի մէջ լոյս տեսնող Աշխատանք թերթը կը գրէ, թէ Կովկասի Փոխարքայ Կոմս Վարանցով Տաշքովի հեռագրին համաձայն՝ Արամ Մանուկեան, զոր Արամ փաշա կ'անուանեն տեղւոյն բոլոր ազգաբնակութիւնները, Վանի շրջանին նահանգապետ նշանակուած է, իրաւունք ունենալով պաշտօնէութիւնը կազմել առ այժմ բացառապէս Հայերէ: Կովկասեան Ռուսաց զօրանակի Ընդհ. հրամանատար Նիքոլայէվի հրամանագիրներէն մէկն ալ այսպէս արուած է, թէ Արամի ժամանակաւոր նահանգապետութիւնն ենթակայ է տեղւոյն զին. իշխանութեան, որ իր ըրած կարգադրութիւնները Արամի միջոցաւ պիտի յայտնէ ժողովրդին: Նոյն թերթին մէջ հրատարակ-

ւած են նաեւ հետեւեալ պաշտօնական զեկոյցները։ —«Պայազիտի զօրամասէն, համար 24 Վան, 1915 Մայիս 18, ցտեկ, ժամը 11,45 ռոպէ։

Ուրախ եմ յայտնելու, թէ մեծ Թագաւոր կայսրի, եւ նախարարական խորհրդի նախագահին կողմէ ստացուած են հետեւեալ հեռագիրները. Ա.— Յայտնեցէք Վանի եւ շրջանակի ժողովրդին իմ շնորհակալութիւնս, իրենց յայտնած շնորհաւորական եւ հպատակութեան զգացումներուն համար։ (Իսկականի վրայ Ն. Կ. մեծութեան ձեռքով ստորագրուած է) «Նիկոլա»

Բ.— Թագաւոր կայսրը կը հրամայէ շնորհակալութիւն յայտնել Վանի նահանգապետին, առաջնորդին եւ Վանի ու շրջակայի ժողովրդին, իրենց ոյսնած զգացումներուն համար։

Մագնիսէ

ԿԱՉՄԱԿԵՐՊՈՒՄ — Վանի նահանգապետը, Արամ, իր անդրանիկ յայտարարութեամբ, զոր հրատարակած է Մայիս 8 ին, ուղղուած տելոյն հայ հասարակութեան, կրսէ, թէ ռուսական յաղթական բանակի յառաջխաղացումը նոր դարգլուխ եւ իրաւակարգ կը բանայ իրաւազուրկ ժողովուրդին համար։ Ցիշելէ ետք ռուսական իշխանութեան կողմէ իր կառավարիչ նշանակուիլը, Վան նահանգին, կ'աւելցնէ, թէ արդէն կազմակերպուած են ոստիկանական, դատական, բաղաքապետական եւայլն ամեն տեսակ վարչութիւններ, հետեւաբար ժողովուրդն իր բոլոր գործերուն համար պէտք է դիմէ նոր կառավարութեան։ Յայտարարութիւնը ապա կրսէ.— «Ներկայ պատմական պատասխանատու օրերուն մէջ հայ ժողովուրդը միայն մէկ նշանամբան պէտք է ունենայ, այն է համախմբուիլ ամբողջ եռանդով կառավարութեան շուրջը, վերակազմակերպելու համար կեանքը բաղաքի եւ շրջանի համար, արժանի լինելու բառորդ դարէ աւելի մղուած պայքարի մէջ թնկած հերոսներու յոյսերուն եւ յիշատակին եւ միշտ բարձր պահելու հայ ազգի կոյսուրական կեանքի գիտակցութիւնը Փոքր Ասիայի այս ծայրագաւառին մէջ։

Նուպար Փաշայի խնդակցութիւնը

Յօրոս նուպար փաշան ուղղել է Գ. Միքայէլ Վարանդեանին մի բնդարձակ շանեկան գրութիւն, ուր Հայկական պատգամաւորութեան նախագահը խօսում է ներկայ վայրկեանի, կամաւորական շարժումների եւ մեր յոյսերի ու ակնկալութիւնների մասին։

Նկատի ունենալով, որ այդ համակը ցօցափում է այժմէութիւն ունեցող խնդիրներ, եւ որ յայտնի մարդիկ ու խմբեր արտասանմանում

ռուսաստանի եւ կովկասի մէջ տանուգործում են յանախ փաշայի անունը ու վարկը իրենց անտարբերութիւնը ու ընդիմութիւնը արդարացնելու համար կամաւորական մեծ շարժման հանդէպ,— ճարկ եմ տեսնում մի քանի հատուածներ հրատարակել վերոյիշեալ նամակից, նախապէս ստացած լինելով նրա համար Պօղոս Փաշայի սիրայօժար թոյլտուութիւնը:

. . Անձկութեամբ ես հետեւում եմ դէպքերին, ուսկից տեղիք ունինք յուսալու թէ Հայոց Հարցը դուրս պիտի գայ լուծուած՝ համաձայն մեր իղձերին: Թուրքիոյ վարիչների խելագար ակռը, որ մղեց այդ՝ երկիրը դէպի ինքնասպանութիւն, մէկէն ի մէկ փոխեց իրերի կերպարանքը Հայաստանի վերաբերութեամբ: Այն լուծումները, որ հարկադրուում էին սկզբներում, չեն կարող այլեւս ուշադրութեան առնելի այսօր, երբ փոխուած են հանգամանքները: Ամենաազդու լծակը, որին կարողանում էինք հիմնել մեր բանակցութի նները, այն էր, որ պետութիւնները միաձայն ցանկանում էին խուսափիլ ընդհանուր պատերազմից: Այդ լծակը չկայ այլեւս այսօր, երբ ամբողջ Եւրոպան վերածած է մի ընդարձակ ռազմադաշտի, եւ երբ թուրք կայսրութեան բաժանումը արդէն անխուսափելի է: Այդ նոր կացութեանը կարող ենք համապատասխանել միայն նոր լուծումներ: Ուրախութեամբ ես դիտեցի որ, ռուսաստանի հանրային կարծիքը շատ նպաստաւոր է երեւում հայկական ինքնօրինութեան համար, Պ. Սազանովի յայտարարութիւնը շատ խրախուսիչ է եւ ես լիայոյս եմ, որ վերջնական հաւելարդարի ժամին կայսերական կառավարութիւնը պիտի ներշնչի ազատական ոգով եւ ազգայնութեան սկզբունքով . . . . . : Տարակոյս չկայ, որ հայ կամաւորները, շատ բան են մեր դատի համար . . . . պատերազմը շրջայլերծուած է, եւ կամաւորները միայն կարող են ուժեղացնել մեր դատը եւ տալ մեզ իրաւունք՝ լսելի անելու մեր ձայնը, երբ ժամը կը հասնի ձեւակերպելու մեր արդար եւ համեստ պահանջները: Գալով ձեր նամակին, ես լիովին համաձայն եմ ձեզ հետ, որ մօտ է ժամը, երբ մենք պիտի վերսկսինք մեր ուխտաւորը Եւրոպայում . . . : Պէտք է պատրաստենք նարէն բաղխելու դռները, փաստաբանելու մեր դատը, առանց սօղելու այն դժուարութիւնները, որոնց պիտի հանդիպինք, ինչպէս միշտ, երբ հարկ է հատեցնել պետութիւնների շահերը: Պէտք է ակնիւ պրոպագանդ մղենք, եւ այդ նպատակով էր, որ ես կոչ արի մեր հայրենակիցներին եւ բաց արի ժողովարարութիւն, վեհափառ կաթողիկոսի հովանաւորութեան տակ՝ մեր ազգային շահերը պաշտպանելու դիտաւորութեամբ: Լաւ գործելու համար, պէտք է որ ամենքս միաբան, համերաշխ լինինք, ինչպէս որ էինք ռէֆորմների վերջին բանակցութիւնների շրջանում: Յաջողութիւնը դրանից է կախուած...:

ՊՕՂՈՍ ՆՈՒՊԱՐ

Յ. Գ.— Երէկ, Պ. Միհ. Վարանդեանի հաստատեցին ի պատասխան վերջինիս դրկուած մի հեռագրի, ստացուեց Նուպար փաշայի հետեւեալ հեռ-ա

գիրը: «Վանի գրաւումը անհուն ուրախութիւն է պատճառում ինձ: Դրկում եմ Կաթողիկոսին իմ ձեռքով հանգանակուած գումարից 10,000 ռուբլի կարօտեալներին բաժնելու համար»:

Հորիզոն

Վանայ առումին տօնը՝ Գահիրէի մէջ

Վանայ ուրախալի առումին առթիւ Ս. Առաջնորդին և Քաղ. ժողովոյ որոշմամբ երէկ կիր. տեղւոյն Ս. Աստուածածին եկեղեցւոն մէջ գոհաբանական պաշտօն և Ս. պատարագ մատուցուեցաւ Հայաստանի ազատութեան համար նահատակուած քաջերու անմոռանալի յիշատակին: Եկեղեցին այս առթիւ լուսազարդուած էր, և լեցուած Գահիրէի բովանդակ արուարձաններէն եկող ստուար բազմութեամբ մը:

Պատարագիչն էր Առաջնորդ Գեր. Տ. Թորգոմ Ս. որ ճաշու դրքէն վերջ «Զիմն տեսանես դու» խօսքը բնաբան առնելով խօսեցաւ պերճախօս քարոզ մը: «Այսօր մեր սրտին ամենէն մօտ չորս նուիրական յիշատակներ կը խառնուին և մեզ կը հրաւիրեն խորհիլ այն ազգին և ժողովրդին վրայ, որուն կը պատկանինք: Տօն է այսօր Ս. Էջմիածնայ 1614 ամեակի, տօն է Ազգ. սահմանադրութեան 55 ամեակի, որոնց այսօր մենք երկու տօներ եւս կը միացնենք, մին Վասպուրականն աշխարհի ազատագրման և անհուն յիշատակը և երկրորդը՝ զայն նուիրագործող հայ քաջերու յիշատակը: Չորս տօն, չորս պատկեր եկեղեցւոյ և հայրենիքի, միւռնոյն շրջանակի մէջ: Տօն Էջմիածնի սահմանադրութեան, վասպուրականն աշխարհ և քաջաց դիւցազնութեան: Այս չորսը մեր ազգին առջեւ կը միանան իրարու և կը կազմեն ամբողջութիւն մը, բարձր և նուիրական, բաղկացած, կրօնք, Օրէնք, Հայրենիք և Քաջութիւն գաղափարներէն որոնք դիրար կ'ընդգրկեն:

Արեւ թիւ 14

Դէպի պարտականութիւն

Այսօր վերջապէս եկած է վայրկեանը մեր փայփայած երազը իրագործելու։ Մարդ մէկ անգամ կը մեռնի, երանի անոր, որ իր պարտականութիւնը կատարած կը մեռնի։

Այսօր վիրաւոր հայրենիք մը ունինք, ուր մեր եղբայրներն ու քոյրերը մեղմէ օգնութիւն կ'աղերսեն։ Արձագանք տանք անոնց կոչին, երթանք փրկելու զանոնք բռնակալի եաթաղանի հարուածներէն, որպէս զի վաղը անոնք քիչ մը ուրախութիւն, երջանկութիւն վայելեն։ Թող հայրենիքի սիրով տոչորուած, ժողովուրդներու ազատութեան գաղափարով տոգորուած մարդիկներ հրապարակ գան, թող անոնք որ կը յարգեն նահատակ հերոսներու, երիկուան և այսօրուան արիւններուն յիշատակը, պարտականութեան դաշտ իջնեն, թող ոմանք իրենց գանձը նուիրեն, ուրիշներ՝ իրենց ֆիզիքական կորովը։ Սակայն նուիրական պարտականութիւն մըն է, պարտականութեանց էն գեղեցիկը, վսեմը։ Եւ այդ նուիրական պարտականութիւնը կատարելով, հայը ցոյց պիտի տայ թէ՝ ինք իր գոյութեան գիտակից ազգ մըն է, արժանի ազատութեան և ազատութեան համար ծնած։ Եղբայրնե՛ր, ահա ազատութեան Գողգոթան դիմացնիս ցցուած է, խաչերը տակը դիզուած, մօտեցէք անոր, մէկ-մէկ խաչ ընտրեցէք և միասին բարձրանաք հոն...։

Այսօր մեր վաշտի կամաւորները կ'երթան դէպի կուռ դաշտը։ Թող հայ-մայրերը զրկեն իրենց կորիճները մեր ետեւէն, այսպէս ինչպէս քաջաբի հայուհին իր սրտի հատորին ձեռքէն բռնած կ'ըսէր։

Ձեզ հետ տարէ իմ տղին,
Իմ սիրուն եար պաղին
Տուշմանի դէմ կռուելու
Ձեզի մատաղ զիմ տղին...

Վեցերորդ վաշտի զինուորներէն
Վահան Կ. Շապանեան

9 Մայիս 1915 Սարիղամիշ

Ց. Գ.— Ամսոյս 7ին զօրահանդէս մը ունեցանք և յաջորդ օրը մեկնեցանք Կարսէն։ Բարի երթի համար հոծ բազմութիւն մը հաւաքած էր, հայրենասիրական ցոյցերով ճամբու դրին մեզ։ Այժմ կը յառաջանանք Կարնոյ ուղղութեամբ։ Զօրահանդէսի առեն ներկայ էին 2 ամերիկացիք, որոնք մեր վաչտին նկարները առին, սինէմաթօկրաֆի համար. ինքս հեծելազօրաց մէջ եմ։ Եթէ ազատ միջոց ունենայ, կը գրեմ ձեզ մեր շարժումների մասին։

1915 Երիտասարդ Հայաստան թիւ 2 ԺԲ. տարի

Ռուսաստան եւ հայեր

Կուսակցութիւնները չատ Փայլուն եղանակով մը ի վեր հանեցին ռուսիոյ համբաւը Կովկասի կռուին մէջ։ Անդրանիկի խումբերն էին որ Սէրայը և Պաչգալէն ռուսերուն ձեռքը ձգեցին, Անդրանիկն էր որ իր կամաւորներուն հետ Պայազիտի վրայ յարձակեցաւ և ստիպեց զայն անձնատուր ըլլալ։ Սամսոնի կամաւորներն էին, որ Ատրպատականի մէջ թափահարեցին թիւրքերուն վրայ յարձակելու հակառակ կողմէն և դանոնք արիւնալի պարտութեան մը պատժին ենթարկել։ Կովկասի կառավարիչը խորհրդարանին դիմած է օգնութիւն հայցելու համար։ Ռուսիոյ մեծագոյն մամուլը այս վերանձն նախաձեռնարկութեան կը հետեւի։ «Նովոյէ Վրէմիա» կը խօսի ի նպաստ հայոց, որոնք զոհեր եղան ռուսիոյ հանդէպ իրենց կրած համակրութեան և քրիստոնէութեան հաւատքի իրենց յարումին համար։ Ռուս և հայկական յանձնախումբ մը հիմնուեցաւ և Թոլսթոյի դուստրը, առաջին ժողովին մէջ, յիշեց հայ ազգին զոհաբերութիւնը ռուսիոյ համար և անոր քաղաքակրթիչ ազդեցութիւնը։ Ռուսիոյ մէջ արժէքի մեծ շարժում մը կ'արտայայտուի հայ ազգին ի նպաստ։ Այս շարժումը կ'առաջնորդուի այն չահագրգռութիւնէն զոր կառավարութիւնը կը շնորհէ անոր։ Ամենամեծ պայքարը զոր կը մղէ հայ ազգը այսօր, անոր անձուիրումը Ռուսիոյ դատին, անոր անցեալին

քաղաքակրթութիւնը, անոր կենսունակութիւնը, հակառակ իր սպառումներուն, ասոնք բոլորը կրնայ ազգին համակրութիւն շնչել անոր համար և մեծ քայլ մը առնել տալ անոր դէպի ինքնավարութեան գաղափարը, զոր Զարին կառավարութիւնը անոր նշմարել կուտայ ազատութեան այս կուէն վերջ։ Այսպէս վերակազմեալ Հայաստանը քաղաքակրթութեան վառարան մը պիտի ըլլայ և կարգ ու սարքի կեդրոն մը բարբարոս և անիշխանական տարրերու միջեւ, միեւնոյն ժամանակ զօրաւոր օժանդակ ձեռք մը բարոյական վերակենդանութեանը այն մեծ գործին՝ զոր Նիքոլա կայսրը կը հետապնդէ իր ընդարձակ կայսրութեան մէջ։

Երուանդունի

1915 Ապրիլ 23 Ապարեզ թիւ 350

18 Մայիս Տարտանէլ

Հայ կամաւորներ, Ֆրանս. բանակին մէջ

Մայիս 9ի ու յաջորդ օրերու Ֆրանս. յաղթանակները սկիզբն են այն կարեւոր գործողութեանց, որոնք պիտի յաջորդեն անոնց։ Զանազան ազգութիւններու պատկանող կամաւորներու այն régimentը, որուն ամէն մէկ անհատը իր մասնաւոր հայրենասիրութիւնը և ուժը նուիրած է Ֆրանս. ազնիւ ազգին, իր մասնաւոր կարեւոր դերը խաղաց յաղթանակի առաջին օրերուն, այնպիսի յաղթանակ մը որուն նմանը այս հօթնամեայ խրամատներու պատերազմի միջոցին ոչ Գերմանք և ոչ ալ Ֆրանսացիք ունեցան, ինչպէս որ պաշտօնական զեկոյցն ալ կը վկայէ. անշուշտ կը դիտուի որ կամաւորներու այդ բանակին մէջ բաւական թիւով հայեր ալ կային։

Արեւ թիւ 16, 1915

**** Եգիպտոսի «Ցուսարերի»ի մէջ հրատարակուած հայ կամաւորի մը մասնաւոր նամակին կ'իմանանք թէ Ֆրանս. բանակին մէջ գործող հայ կամաւորներուն թիւը 600է աւելի է։*

Լա Հէյի կանանց համաժողովին մէջ

Խաղաղութեան համար, Լա Հէյի մէջ գումարուած կանանց համաժողովին, իբրեւ Հայաստանի պատուիրակ ներկայ եղած է Լոնտոնաբնակ Օր. Զապէլ Կ. Պոյաճեան։

Կոչնակ թիւ 19. 1915

AU PEUPLE FRANÇAIS

Au début des hostilités une cinquantaine de membre de notre petite colonie Arménienne s'était engagés comme volontaires dans la Légion Etrangère, c'était la preuve évidente de notre profonde sympathie à la france qui sut toujours défendre les peuples opprimés, la reconnaissance que nous lui devons nous imposait le devoir de nous grouper autour d'elle.

Au moment de la rupture des relations diplomatiques entre les Alliés et la Turquie, il suffit se jeter un coup d'œil sur la carte pour reconnaître que sur la frontière du caucasse pour se solidarise avec notre — grande amie et protectrice la russie — nous sommes appelés à jouer le même rôle que l'heroïque Belgique, bien entendu suivant nos modestes moyens notre intérêt se confondant avec ceux du Peuple Russie. La proclamation de sa Magesté Nicolas II le Tzar de toute la grande Russie et le roi d'Arménie, est un éclatant hommage à notre fidélité séculaires. Des Miljaires

de nos frères vont tomber bravement sur le champ d'honneur dans les ranges de l'Armée Moscovite pour servir la cause de la civilisation et délivrer l'Armenie du joug abborré des turcs.

Au moment où les armées de la république fraternellement nuées à l'armée de la fière Albion sont en train d'éxecuter les bandes de Guillaume rouge, le digne frère du Sultan rouge, ces bandes qui depuis 44 ans empestait l 'atmosphère de l'europe, au moment dis-je où les Alliés en veritables justiciers débarrassent le monde entier de ce cauchemar qui s'appelait l'hégemonie allemande.

La brave armée de sa magesté Nicolas II va entrer en ligne de la frontière d'Armenie pour débarrasser aussi l'Europe et l'Asie de ces sanguinaires turcs dont la présence sur les rives du Bosphore n'était qu'ne honte pour la civilisation et pour l'humanité toute entière, leur veritable place étant dans leur tanière au fond de la Mecque et de Médine d'ou il n'aurait dû jamais sortir. Dans la balance des armées formidables que se mesurent, nous autres les Arméniens nous voulons aussi notre petite part le gloire contre les assasins de notre chère Arménie et contre les alboches, leur protecteur; par conséquent, notre place de nos amis Russes, français et Anglais; le peuple français dans sa

fraternelle générosité ne nous fera jamais l'insulte de nous confondre avec les assasins.

En avant! pour la cause du droit de peuple et pour la liberté.

Grande Russie

Vive la chère france!

Vive l'Angleterre!

Vive l'Arménie Russe!

Pour la comité d'organisation de Volontaires Arméniens

le délégué Turabian Aram

ՖՐԱՆՍԱՅԻ ԱԶԳԻՆ! Թշնամութեանց սկիզբները մեր հայ փոքրիկ գաղթականութեան յիսունի չափ անդամները իրը կամաւոր մտան ՕՏԱՐ ԼԷԳԻՕՆԻ մէջ, ասիկա հարստահարուած ժողովուրդներու պաշտպան Ֆրանսայի հանդէպ, մեր խորունկ համակրութեան յայտնի մէկ ապացոյցն էր. այն երախտագիտութիւնը որ կը պարտինք մենք, մեր վրայ պարտք կը դնէր Անոր՝ Ֆրանսայի շուրջը խմբուելու համար։

Դաշնակիցներու և Թուրքիոյ միջև դիւանագիտական յարաբերութիւններու խզումի այսվայրկեանին բաւ է ակնարկ մը նետել աշխարհացոյցին վրայ, ՄԵՐ ՄԵԾ ԲԱՐԵԿԱՄԻՆ ԵՒ ՊԱՇՏՊԱՆԻՆ հետ գործակցելով մեր համեստ միջոցներով կոչուած ենք կատարել դիւցազն Պելճիգայի միեւնոյն դերը։

Մեր շահերը կը նոյնանան Ռուս ժողովուրդի շահերուն հետ։ Մեծին Ռուսիոյ Զարին և հայաստանի արքային յայտարարութիւնը մեր դարաւոր հաւատարմութեան փայլուն մէկ ապացոյցն է։

Մեր եղբայրներէն հազարաւորներ, քաջաբար կ'իյնան պատուոյ դաշտին վրայ Մոսկոֆներուն բանակին մէջ, ծա-

ապրելով այսպէս քաղաքակրթութեան գործին և Հայաստանը ազատելու՝ թրքական գարշելի լուծէն։ Այն վայրկեանին յորում հանրապետական բանակը եղբայրաբար միացած հպարտ Ալպիոնի բանակին, կարմիր Սուլթանին հաւատարիմ եղբօրը կարմիր Կիլեոմի հրոսախումբերը սրէ անցնել կ'երթան, այն հրոսախումբերը՝ որոնք քառասունը չորս տարիներէ ի վեր կ'ապականէին եւրոպական մթնոլորտը, այն վայրկեանին, յորում համաձայնական տէրութիւնները ճշմարիտ դատաւորի մը հանգամանքով, բովանդակ աշխարհը գերման բռնապետութիւն կոչուած մղձաւանջէն ազատելու կ'աշխատին, այն միջոցին Վեհ. Նիքոլա Բ. Զարին բանակներն ալ հայաստանի սահմաններուն վրայ Եւրոպան և Ասիան արիւնարբու թուրքերէն պիտի մաքրեն, որոնց Վոսիորի գեղածիծաղ ափերուն վրայ ներկայութիւնը նախատինք մըն է քաղաքակրթութեան և բովանդակ մարդկութեան դէմ՝ անոնց բուն տեղը ըլլալով Մէքքէի և Մէտինէի խորերը՝ ուսկից պէտք չէ որ երբեք դուրս եկնեն։

Պատերազմիկ ահեղ բանակներու կշիռին մէջ, մենք հայերս ալ կ'ուզենք ունենալ մեր փոքր բաժինը, նուիրական Հայաստանի ոճրագործներուն և անոնց պաշտպան Գերմաններէն տարուած յաղթութեան մէջ։

Հետեւաբար մեր տեղը կանխաւ որոշուած է մեր բարեկամներուն՝ Ռուսերուն, Ֆրանսացիներուն և Անգլիացիներուն առընթեր, Ֆրանսացի ժողովուրդը իր եղբայրական վեհանձնութեան մէջ բնականաբար մեզի մեր ոճրագործներուն հետ չփոթելու նախատինքը պիտի չընէ։

Յառաջ! ազգերու իրաւունքին և ազատութեան համար, միշտ յառաջ!։

Կեցցէ Մեծն Ռուսիա!

Կեցցէ սիրեցեալ Ֆրանսա!

Կեցցէ Անգլիա!

Կեցցէ Ռուսական Հայաստան!

Ի դիմաց Հայ կամաւորներու կազմակերպիչ մարմնոյն

Արամ Թիւրապեան

Այս անպատկառ յայտարարութիւնը մեզի այնքան զարմանալի չթուիր, քանի որ, համանման խայտառակութիւններ տեսանք արդէն։

Կէտ մը միայն 'ուզենք մատնանշել, այն ալ սա է թէ, հրոսախումբերու կազմակերպիչներէն մին եղող Արամ Թիւրապեան, իր ընկերներուն հետ շատ շուտ ժողցած է Ռուսական հալածանքը՝ որուն մասին մենք խօսեցանք իր մասնաւոր տեղը, և հետեւաբար աւելորդ կը համարինք անոր հոս դարձեալ կրկնութիւնը։

Ապատամբական այս յայտարարութենէն ետք, աւելորդ կը համարինք նաև մեր կողմէ ո՛ և է խորհրդածութիւն։ Սա չափ ըսենք միայն թէ՝ Բարիզեան կամաւորներուն մէջ կը գտնուին նաեւ Օսմ. կառավարութեան կողմէ յատկացուած թոշակով ուսանողներ ալ, կան այնպիսիներ՝ որոնց ծնողքը հոս և դաւառները պետական ծառայութեան մէջ կը գտնուին, և Օսմ. կառավարութեան երախտաւորներն են։

Այսքան խոշոր ապերախտութիւն, սասնկ խոշոր դաւաճանութիւն մը կարելի՞ է երեւակայել։

Կուսակցութիւնները և ասոնց համակիրները, բոլորովին մոռցած էին Ռուսական հալածանքը։ Ընդհ. պատերազմի յայտարարութենէն և Թուրքիոյ պատերազմի մասնակցութենէն ետք կուսակցութիւններու Ռուս բռնակալութեան հանդէպ ցոյց ուսած նոր ուղղութիւնը ինքնին մեծագոյն ապացոյցն է յեղափոխական կազմակերպութիւններու անհերեսութեան և դաւաճանութեան։

Դաշնակցութեան Զուխկերիոյ կեդրոնը, հանրածանօթ դաւաճան Գարեգին Փասրմաճեանի արտասահման անցնելէն քիչ ետք, հետեւեալ ամբաստաւան յայտարարութեամբ կ'ըսէր թէ, «Որովհետեւ Դաշնակցութեանս տեսակէտը ընդունուած չէ, Օսմ. կառավարութեան կողմէ, հետեւաբար մենք ալ, ինքզինքնիս ազատ կը նկատենք մեր բռնելիք ուղղութեան մէջ։»

Ահա՛ նոսա ուրիշ ոչ նուազ կարեւոր չէֆի մը յայտարարութիւնները...

Դաշնակցականներու բանտարկեալ կուռքը Ա. Ահարոնեան, մոռցած էր իր Բանտի Յուշերը մոռցած էր իր սեւ օրերի տխուր տպաւորութիւնները, մոռցած էր Պոլսոյ դաշնակցական ղեկավարներու մէջ Ռուս. սեւ սարսափին դէմ իր ատելութիւնները և իր գրիչովը մատ էր կամաւորների շարքերի մէջ. ահա՛ թէ ի՞նչ կը գրէ Իթալիա հրատարակող Լա կերրա է Լարմենիա թերթի 15 Հոկտ. 1915 թուականի մէկ թիւին մէջ։

«Որովհետեւ Թուրքերը թշնամական ընթացք մը բռնեցին հայերու հանդէպ, մենք ալ ստիպուեցանք փոխադարձ վրէժխնդրութեան, կազմեցինք կամաւորներու խումբեր, որոնք Ռուսիոյ կողքին պիտի կռուին Թուրքերուն դէմ։ Հայ քաջամարտիկ շարքերը արդէն հասած են սահմանագլուխ, հոն կատարելու համար իրենց պարտականութիւնը, հայրենիքի ազատագրութեան համար։»

Սոնա նաեւ Արշակ Զօպանեանի մէկ բաց նամակը։

Զօբանեան եւ Միւլիկոյ

Պետրոգրատեն կը հեռագրեն «Պաֆու» թերթին.— «Բէջ» թերթի մէջ տպուած է Արշակ Զօբանեանի մեկ բաց նամակը։ Միանգամայն Միւլիկոյի մի քանի հայեացքներուն ու գնահատելով անոր բարեացակամութիւնը դէպի հայերը, Զօբանեան կ'ապացուցանէ որ, հայկական հարցի ամենեն կարեւոր կողմն ալ մի, որ վեց վիլայէթներեն ստեղծուի Ռուսասանի հովանաւորութեան տակ ինքնավար Հայաստան։ Այդ նոյն հարարի մէջ տպուած է Միւլիկոյի պատասխանը, որ ի միջի այլոց ըսուած է։ Իմ միակ տարակարծութիւնը Զօբանեանի հետ կը վերաբերի Կիլիկիոյ հարցին։ Ես կը պաշտպանեմ վեց վիլայէթներուն ինքնավարութիւնը, վճռականապէս կը պնդեմ, որ անոնց ազատութիւնը պիտի պահպանուի, եւ չեմ վախնար Անգլիայի ընդդիմութենեն, նոյնպէս Բէֆսօնը դեռ Դիարբէքիրեն առաջ Ռուսասանին կ'առաջարկէր կատարեալ անկախայի ենթարկել Հայաստանը։ Տարակարծութիւններու կարող են միայն «ինքնավարութիւն» «հովանաւորութիւն» գաղափարներու որոշեալ ժամանակ, բայց այդ այսօրուան հարց չէ արդեն։

ՀԱՅԱՍՏԱՆ Նօ. 25 1915 Յուլիս 6

Կուսակցութիւններու և կուսակցական թերթերու ապատամբական յայտարարութիւններուն այս էջերը փակելէ առաջ երկու խօսք ալ հայ բարձրաստիճան կղերի պատասխանատուութեան մասին։

Կղերին մասնակցութիւնը

Հայ ազգի դեռ երէկուան անցեալէն անտեղեակ, անհետաքրքիր և բաղդախնդիր կարգ մը եկեղեցականներ ալ միացած էին կուսակցութիւններու և հրապարակներու հետ։

Իր վրայ Ընդհ. Հայոց հայրապետի հանդամանքը կրող Էջմիածնի կաթողիկոսը՝ ինչպէս ըսինք, իր հովանաւորու-

թեան և պաշտպանութեան ներքեւ առած էր հրոսախումբերուն հետ գործակցող կղերը։

Ընդհ. պատերազմի յայտարարութենէն ետք, արտասովոր գործունէութիւն մը նաեւ Էջմիածնի վանքին մէջ՝ որը այլեւս կորսնցուցած իր վանական հրապոյրը, պարզապէս չէթէներու ապաստանարան մը եղած էր։

Կաթողիկոսին գլխաւոր առաջնորդողներն էին Մեսրոպ եպ. Մագիստրոս և Բագարատ եպիսկ.։

Ա.ը խորհրդական իսկ Բ.ը ընդհ. դիւանապետ։

Մեսրոպ եպ. Մագիստրոս իր բոլոր արտայայտութիւններուն և գրութիւններուն մէջ եղած է անաստուած մը, միևնոյն ատեն կատաղի թրքատեաց և ռուսատեաց մը։

Մագիստրոս իրր թուրք դաշնակցական մինչեւ 1913 Կովկասի փոխարքային մատնաւոր հսկողութեան տակ կապրէր, այդ թուականէն ապին տակայն, եղած էր ռուս կառավարութեան գործիքը։

Կաթողիկոսը՝ որ բարենորոգումներու խնդրոյն ատեն կուսակցութիւններու և խորհրդական եպ.ին թելադրութեամբը գործի դրուխ անցած, և Պօղոս Նուբար փաշայի ատենապետութեան տակ պատուիրակութիւն մը ալ նշանակած էր, պատերազմի յայտարարութենէն անմիջապէս ետք հետեւեալ կոչը կուղղէր բոլոր հայ ժողովուրդին։

Գեորգ ծառայ յիսուսի քրիստոսի եւ անհասանելի կամքն աստուծոյ եպիսկոպոսապետ եւ կաթողիկոս ամենայն հայոց, ծայրագոյն պատրիարք համազգական նախամեծար աթոռոյ արարատեան առաքելական մայր եկեղեցւոյ սրբոյ կաթողիկէ էջմիածնի։

Գերապատիւ թեմական առաջնորդաց, Բարձրապատիւ Փոխանորդաց, Արժանապատիւ Աւագ երիցանց և Քահանայից, Վսեմափայլ Իշխանաց և Մեծատանց, Աշխատասէր Վաճառականաց և Արհեստաւորաց, Քրիստոնէական երկրագործաց,

Բարեջան Հոգեպարձութեանց և Ուսուցչաց և Ամենայն Ազգային-Հասարակական Գործոց, Հարազատ Որդւոց Մայր Աթոռոյս Ողջոյն Քրիստոսաւանդ և Օրհնութիւն Հայրապետական.

Արդէն իսկ գիտէք Դուք, զի արտաքին թշնամիք յարձակեցան ի վերայ Հայրենեաց մերոց Մեծին Ռուսիոյ:

Հակառակ խաղաղասիրական ցանկութեանց և բարեմիտ աշխատանաց Կառավարութեան մերոյ, ցաւալի է յոյժ, զի ծագեցաւ պատերազմ սոսկալի ի մէջ քաղաքակիրթ Եւրոպական ազգաց և պետութեանց:

Սակայն յայսմ պատմական վայրկենի, որ լի է փորձութեամբ և արհաւրօք, միխիթարական է յոյժ, զի ժողովուրդք Մեծին Ռուսիոյ, որպէս մի անձն և մի ընտանիք, չաղկապեալք ընդ միմիանս զօրեղ բարոյական գիտակցութեամբ, ելին ի պաշտպանութիւն արդարութեան, իրաւանց և քաղաքակիրթ ձգտմանց ազգաց ընդդէմ բռնութեան և ոնարդարութեան:

Եւ յայսմ բարոյական մրութեան տեսանի գրաւական յաղթութեան և երջանկութեան Հայրենեաց, քանզի զուգութիւն է մայր բարեաց և հերոսական գործոց:

Մխիթարիմք յոյժ, զի հոգեւոր որդիք Մեր յամենայն կողմանց առանձին ոգեւորութեամբ և ազնուութեամբ կատարեն զպետական և զքաղաքացիական պարտականութիւնս իւրեանց, հոգւով և սրտով մասնակից լինելով պաշտպանութեան ընդհանուր հայրենեաց և փառաց նորա:

Ցայսմ նուազի եւս ժողովուրդն Հայոց, որպէս յանցելում, ցուցանէ զպատմական և զվկայեալ յընթացս դարուց ի Գահոյից-Մեծազօր Կայսերաց Ռուսաց զհաւատարմական զգացմունս իւր, ամենայն պատրաստակամութեամբ և հաստատամտութեամբ:

Ցուսալով և հաւատալով կատարելապէս զի հոգեւոր որդիք Մեր, ըստ օրինակի նախնեաց իւրեանց կատարեսցեն զպարտիս իւրեանց քաջութեամբ և ամենայն անձնազոհութեամբ, այսու հայրապետական Կոնդակաւս յորդոր կարդամք

առ ամենեսեանդ՝ փութով օժանդակել նիւթապէս և բարոյապէս յաջողութեան համապատասխան մեծի և արդարացի գործոյն և կազմակերպել զմարդասէր գործ եղբայրական օգնութեան վասն անօգնական ընտանեաց նոցա, որք ի պատերազմի պատրաստ են դնել զանձինս իւրեանց վասն պատուոյ և բարօրութեան ընդհանուր հայրենեաց մերոց՝ Մեծազօր Ռուսիոյ։

Յիշեցէ՛ք նոյնպէս, զի յընթացս սոսկալի պատերազմի, բազում վիրաւորք կարօտ լիցին խնամոց և բժշկութեան, որոյ վասն քրիստոնէական պարտիք կան ի վերայ ամենեցուն՝ ընդ փոյթ հասանել յօգնութիւն, որպէս ողորմած Սամարացին, առ ի ոտիսել և ամոքել զվիշտս և զվէրս պարտաճանաչ զաւակաց Հայրենեաց։

Աղօթելով վասն յաջողութեան և յաղթութեան քաջամարտիկ զօրաց Ռուսիոյ, օրհնեմք զամենեսին և մաղթեմք ի Տեառնէ պարգեւել մեծազօր Պետութեան Ռուսիոյ փրկութիւն յամենայն վտանգից և յորոգայթից թշնամեաց, անսասանութիւն և յաջողութիւն կատարեալ, յուբախութիւն և յերջանկութիւն ամենայն հաւատարիմ հպատակ ազգաց նորա. Ամէն։

Ի վերայ իսկականի ստորագ.

ԳԻՈՐԳ Ե. ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՑՆ ՀԱՅՈՑ

Ի 5 օգոստոսի 1914 ամի

ի Հայրապետութեան Մերում Գ. ամի

ի Արարատեան Մայր Աթոռս Էջմիածնի

ի Վաղարշապատ

Թ. 1150

Կաթողիկոսը Կովկասի և Ամերիկայի մէջ կազմուած բարեգործականներու, հանգանակիչ մարմիններու ազգ. կեդրոնական բիւրոյի նախագահ նշանակած էր իր խորհրդականը՝ Մագիստրոսը։

Ահա՛ Մեսրոպ եպ. Մագիստրոսի, ծանօթ թրքատեաց և

հանրածանօթ դաշնակցականին բարիգալստեան մէկ ուղերձը՝ ուղղուած Նիքօլա-Նիքօլայէվիչի որ, հարիւր հազարաւոր Ռուսահայերու, ընդ որս նաեւ Գարեգին Փաստրմաճեանի մահաւմէիքը սառորագրած էր. որուն դէմ կատաղի պայքար մը կը մղէին Դաշնակցութիւնը և Հնչակը։

Մեծ իշխանը Հայասանէն դուրս ելլելուն այցելեր է հայոց վանքի մայր եկեղեցին, իր ամուսնոյն, իշխանուհի Անաստասիա Նիքօլաէվնայի եւ եղբօրը, մեծ իշխան Պեսոր Նիքօլայէվիչի եւ անոր ամուսնոյն հետ։ Հայկական բոլոր դպրոցներուն աշակերտները ու աշակերտուհիները կանգնած էին վանքի բակին առջեւ եւ ներսը, իսկ եկեղեցիին մէջ հայ հոգեւորականութիւնը, զգեստաւորուած, աջ եւ ձախ կանգնած էր, թեմին առաջնորդ Մեսրոպ եպիսկոպոսի գլխաւորութեամբ։ Նիքօլա Նիքօլայէվիչ, մտնելով եկեղեցի կը համբուրէ Մեսրոպ եպիսկոպոսի բռնած խաչն ու Աւետարանը։ Իսկ կարճ մաղթանքէ մը վերջ Մեսրոպ եպիսկոպոս կ'արտասանէ հետեւեալ ճառը։ «Հայոց եկեղեցին, որ ամենահներիցն է արեւելքում, իր կամարների տակ ուրախութեամբ ողջունում է իր Փոխարքայ մեծ իշխանի, այն թագաւորների ընտանիքի անդամին, որոնք իրենց բարձր հովանաւորութեան տակ առնելով արեւելքում ապրող ժողովրդների եկեղեցին, աշխատել են ազատել թէ՛ եկեղեցին եւ թէ՛ ժողովուրդները նրանց ճնշող լուծից։ Ազատագրումը-դա միաժամանակ լոյսի եւ խաւարի, արեւելքի եւ արեւմուտքի կուլտուրայի կռիւն է։ Հայ ժողովուրդը ապրում է այն յոյսով որ այդ յաղթական ընթացքը շարունակում է ցարդ, իր ազատութիւնը կը բերէ սահմանից այն կողմ գտնուող իր եղբայրներին. այդ յոյսը լիակատար հաւաս է դառնում Ձերդ կայսերական բարձրութեան Կովկասի փոխարքայ եւ Կովկասեան փառապանծ բանակի զեկավար նշանակուելովը։ Ներկայ սարսափելի պատերազմի սկիզբից, հայերը, հետեւելով իրենց սրտի ձգման, իրենց պապերի աւանդներէն եւ ընդհանուր հայրենիքի սիրոյն, ուրախութեամբ դուրս եկած են իրենց կեանքն ու գոյքը զոհաբերելու հայրենիքի սեղանին վրայ։ Ձերդ կայս. բարձրութեան այս ցնցագին դիմաւորութեան ժամանակ, հաստատ հաւատալով, որ կովկասեան բանակը ձեր զեկավարութեան տակ կատարեալ յաղթութիւն կը տանի, մենք նորից կրկնում ենք մեր խորին վճռականութիւնը, ամեն տեսակ զոհաբերութիւն անելու ռուսաստանի մեծութեան եւ փառքի համար։ Եւ այս նշանակալից ժամին, երբ ձերդ կայս. բարձրութեան ապաւինած է այս երկրի զեկավարութիւնը ես իմ սրտովս աղօթում եմ առ բարձեալն, որ նա այժ եւ առողջութիւն շընորհէ ձեզ, որ ձեր իմաստուն զեկավարութեան տակ Կովկասը ծաղկի եւ արժանանայ այն բոլոր բարիքներին իրագործմանն որ վայելում է եւ պիտի վայելէ մեր ընդարձակ հայրենիքին։ Աղօթում եմ նոյնպէս ձեր պարե-

պաշտ ամուսնու, մեծ իշխանուհի Անաստասիա Նիքոլայէվնայի բարօրութեանը եւ առողջութեան համար, նա պիտի մասնակցի ծերդ կայս. բարձրութեանը օգտին Շաս տարիներ եմ մաղթում ծերդ կայս. բարձրութիւններին:»

Ընդհ. Հայոց կաթողիկոսը կանուխէն յարաբերութեան էր նաեւ Պոլսոյ Պատրիարքարանին հետ, որ արդէն էջմիածնէն իր ստացած հրահանգներուն համաձայն գաղանապէս կը գործէր հոս Պոլսոյ մէջ իր շուրջը ունենալով ծանօթ կուսակցականներ և հայ դատին անօթի փաստաբանները:

Կ. Պոլսոյ Պատրիարքարանը մանաւոր միջոցով մը նորին Օծութեան կը հաղորդէր Թուրքիոյ մէջ տեղի ունեցած իրադարձութիւնները, և վարձուած գործիչներ արտասահմանի մէջ հայոց հանդէպ համակիր շրջանակ մը ստեղծելու համար չափազանցուած և յերիւրուածոյ լուրեր կը տեղացընէին պոլսէն:

Ամերիկայի մէջ, տեղւոյն ընդհ. առաջնորդի նախագահութեան տակ կազմուած էր ազգ, շահերու պաշտպան միութիւն մը՝ բոլորովին կղերականներէ. ի գլուխ որոց, Աստանայի Ջարդին դրդապատճառ, վշտակիր առաջնորդը Մուշեղ եպ. իր հետը ունենալով Գաղատիոյ առաջնորդ Բարկէն եպ. Կիւլէսէրեան, Ֆէրիգիւղի և Իւսկիւտարի երբեմնի քարոզիչ Տիրայր վարդ., ուսանողական շրջան մը բոլորելու համար Ամերիկա գտնուող Վաղարշակ և Շահէ վարդ.ները եւայլն:

Երկու կատաղի հակառակորդներ Բարկէն և Մուշեղ՝ ոռոնք զիրար բղկտելու ատելեան խօսքով և գրչով արտայայտուած էին իրարու դէմ, այսօր սրտակից և գաղափարակից բարեկամներ եղած էին. ազգ. դատին առջեւ մոռցած էին անցեալը, բան մը որ երկու կողմէն ալ հաւասարապէս չէր սպասուէր, քանի որ հրապարակին վրայ կար ու կը մնար ՓՏՈՒԹԵԱՆ ՕՃԱԽԷՆ հաղարաւոր օրինակներ:

Աստանայի վշտակիր առաջնորդը ծանօթ է արդէն:

Բարկէն եպ. Սահմանադրութեան Ա. տարիներուն կուսակցականներու և Մուշեղի ձեռքէն իր կաչին ազատելու

համար, Իթթիհատի Նուբը Օսմանիյէի գլխուը ապաստանած և անոր պաշտպանութեան ապաւինած և այս կերպով միայն կրցած էր իր օձիքը ազատել զինքը մահացու կերպով հետապնդող կուսակցութիւններու ձեռքէն, և այս շնորհիւ ալ եպիսկոպոս եղած էր։

Ահա Թուրքիոյ թշնամիները, և հայերու խելացի բարեկամները։

Հայ կղերը կ'օրհնէր ու կը քաջալերէր, հայ կղերը մէկ ձեռքը Աւետարան՝ իսկ միւսը սուր ապստամբութիւն կը քարոզէր Թուրքիոյ դէմ։

Ինչ հակասութիւն, Աւետարան և սուր, Աւետարանի քարոզութեան գլխովին հակառակ։

Այսպէս Աստուծոյ և խաղաղութեան պաշտօնեաները միացած էին դաւաճաններու և սճրագործներու խումբերուն։

Բոլոր սոնց մէջ եղական դէմք մը կը մնայ Մագիստրոս, կաթողիկոսին խորհրդականը՝ որ միևնոյն ատեն Կովկասի փոխարքային մօտ հայոց ներկայացուցիչն էր։

Էջմիածնի կաթողիկոսը, յարաբերութեան մէջ էր բոլոր համաձայնական արքունիքներուն հետ, հեռագիրներ կը փոխանակէր, հրահանգ կ'ստանար ևն. ևն.։ Ահա ֆրանս. կառավարութեան նախարարապետին մէկ գրութիւնը՝ որ իր պղտոնական արտայայտութիւնովը շատ բան կը խօսի։

Նորին Ս. Օծութիւն
Տ. Տ. Գէորգ Ե. Կաթողիկոս եւ Մայրագոյն
պատրիարք ընդհ. Հայոց

Վեհափառ

Ստացանք Ձեր վեհափառութեան 5-17 Նոյ. թուակիր յանձնարարագիրը՝ որով հայկական շահերու պաշտպանութեան համար Պօղոս Նուպար Փաշան պատուիրակ նշանակած և համաձայնական տերութիւններու յաղթանակին բարեմաղթութիւններ բրած էիք։

Այս համակրական արտայայտութիւնները շնորհակալու-

թեամբ և երախտապարտ զգացումով ընդունեց Ֆրանս. հանրապետութիւնը։

Ձեր զգացումներուն այս արտայայտութիւնը, Ձեր Ս. աթոռին ամենէն տրամաթախիպ մէկ միջոցին, իրաւունքի և արդարութեան, մարդկային փառքին ու պատիւին համար մարտնչող տէրութիւններու արժէքն ու կարեւորութիւնը անգամ մը ևս հաստատէ։

Թուրքիոյ հայերու վերջերս ենթարկուած խժդժութիւններու և հարստահարութիւններու հանդէպ Ձեր զգացած վիշտին միւս տերութիւններուն հետ Ֆրանսայի մասնակցութիւնը ծանօթ է արդէն Ձեր Ս. Օծութեան։

Ներկայ պարագաներու և պայմաններու ներքեւ չափով, ամեն անգամ որ առիթը ներկայանայ, Ֆրան. կառավարութիւնը կարելիութեան սահմանին մէջ իր համակրութիւնները յայտնելէ պիտի չ'դադրի։

Ֆրանս. կառավարութիւնը յաբաժամ օժանդակեց հայ ազգին, աշխատեցաւ մեղմացնել անոր դժբաղդ ճակատագրին սասակութիւնները։

Իրերու ընթացքը նպաստաւոր երեւոյթ մը ստանալուն պէս, Ֆրանս. կառավարութիւնը կը վստահացնէ Ձեր Ս. օծութիւնը թէ՛ միեւնոյն համակրական զգացումներով և միւս տէրութիւններուն հետ հաւասարաբար պիտի աշխատի հայ ազգի մխիթարութեան գործովը։

Հաճեցէք, այս առթիւ ընդունիլ համակրական զգացումներս, որով

Մնամ Ձերդ Ս. Օծութեան
խոնարհ և հնազանդ որդի
Պրիլեան

ԱՐՄԷՆԻԱ. Բ. տարի, թիւ - 11 Նոյ 8 1916

Իտալիա - Թորինօ

Հայկ. Կեդրոնական
ԱԶԳԱՅԻՆ ԲԻՒՐՕ
13 Մարտ 1915
Թիֆլիզ

Բոստօնի Հ. Յ. Դաշնակցութեան
Կենտրոնական կոմիտէին
Ամերիկա-Բոստոն

Գերապատիւ Տ. Մեսրոպ եպիսկոպոսի միջոցով բիւրօն Մարտ 7ին ստացաւ յարգելի կոմիտէիդ ուղարկած 47061 ր. 31 կոպէկը եւ այդ մասին յայտնեց իւր սրտագին շնորհակալութիւնը :

Նոյն նամապարհով բիւրօն ստացաւ նաեւ քառասուն եօթ հազար քանի եւ չորս ռուպլի (47024 ռուպլի) :

Բիւրօն կրկին յայտնում է իր սրտաբուղխ շնորհակալութիւնը յարգելի կոմիտէիդ այդ առատաձեռն նուիրատուութեան համար :

Փոխ-Նախագահ բիւրօյի Յ. ԽԱՆԱԿ

Ասպարէզ թիւ 356 1915

ԹԻՖԼԻՋ մարտ 16.— Հ. Յ. Դ. Կ. կոմիտէին, Պոսթըն.— Ստացած 47061 ռուպլի 11 կոպ, Շնորհակալութիւն կանաւորներու եւ բիւրոյի անունով:

Արեւպ. ՄԵՍՐՈՊ

Նախորդ 20,000 տոլարը ստացուելուն պատասխանը ընդունելուս պէս դրկեցինք 20,000 տոլար եւս: *Մեսրոպ եպ.*

ՀԱՅՐԵՆԻՔ թիւ 34 (995) 17րդ տարի

Հաճեցէք ներփակ համեստ գումարը 17 տոլար, դրկել Կովկաս, Ազգ. պիւրօին, յատկացուելու համար Հայ Ազատագրութեան համար կռուող մարտիկներուն։

ՁՈՐՍ ՎԱՆԵՑԻՆԵՐ

Երզնկայի մահմուտցիք գիւղի Կրթ. միութիւնս, թուով 16 հոգի, չուզելով անմասն մնալ ներկայ նուիրական գործին, մեր ունեցած պատրաստ դրամէն 100 տոլար կը դրկենք հայ ազատագրութեան համար, փութով հասցուելու Ազգ. պիւրոն։

ԿՆԻՔ

Զարսանճաղ Զօրակ գիւղի ուսումն ընկերութիւնս տարին նոր կրոլորէ և կոկիկ դրամագլուխ մը չունի, սակայն այդ պատճառ մը չէ որ ինք ալ չմասնակցի հայ հերոսներու տրած հազարաւոր յաղթանակներուն, գոնէ իր 20 տոլարով, որ կինդրենք դրկել ազգ. պիւրոյին։

ԿՆԻՔ

Անկարող լինելով մեր արիւնը խառնել Կովկասի սահմանների վրա կռւող հայ մարտիկների արեան, մեր սիրելի Հայաստանն ազատելու դարաւոր թշնամուց, մենք Աղէքսանդրա պոլսեցի և դուրսեցի ռուսահայերս մեր լումայն էլ կը ցանկանանք միացնել հայ Ազատագրութեան համար հաւաքւած գումարին։ Ներեցէք որ անդործ ենք մեծ մասով և անկարող ենք աւելին ուղարկել։

Հայրենիք թիւ 34 1915 7րդ տարի

Թղթակցութիւնները

Ուրիշ տեղ մընալ ըսինք թէ, Հայ Յեղ. կուսակցութիւնները իրենց քարոզութիւններովը, բրօշականներովը յաջողած էին արեւելեան գաւառներու մէջ տարածել Հայրենիքի ազատագրութեան և անկախ հայաստանի գաղափարը։

Պատերազմի յայտարարութեան յաջորդող ամիսներուն մէջ, արտասահման գտնուող գաւառացիները նամակներու և ծածկագիր գրութիւններու միջոցաւ արտասահմանէն ամենէն արագաւոր լուրերը կը փոխադրէին դէպի ներքին գաւառները ու կը քաջալերէին իրենց պարագաները. հոս յառաջ կը բերենք հազարաւորներէն մէկ քանի նմոյշներ՝ որոնք բաւական են հաստատելու մեր ըսածները.

* * *

915 Յունվար 4 Ֆրեզնօ

ԲԱԲԵՐԴ

Եղբայր Ջան

Վերջին գրութիւնդ ստացայ։ Ուրախ եղայ տուած լուրերէդ։ Բարեւներդ տուի Վարդանին և իր եղբօրը։

Պէտէլի մասին լաւ մտածեր էք, եթէ հարկ ըլլայ, ծախեցէք ամէն բան և ազատեցէք զինուորութենէ, մի ծառայեցէք այդ դաղանին։

Դուռ դրացի համոզեցէք զիրար և այդպէս վարուեցէք։ Թուրքին վերջին օրերը հասած են։ Հայրենիքի անկա-

խութիւնը չատ մօտիկ է, մի յուսահատիք, հաց ու հատիկ գնեցէք։

Վանի անկուսին կ'սպասեն կուսակցութիւնները...

Մնամ կարօտով

Եղբայրդ

Նոյեմ. 16, 914

Գոռնիկի Իւնիւվհուսկ

Սիրելի մօրեղբայրս

Համաշխարհային պատերազմը արդարեւ զարհուրելի է։ Աշխարհը իր էն մեծ ճգնաժամին մէջ է. ու Աստուած միայն գիտէ վերջը ինչ պիտի ըլլայ։ Ամերիկա գրեթէ մինակ մեծ պետութիւնն է որ չէզոք է, առաջ Աստուած մինչեւ վերջ այսպէս մնայ։

Թուրքիա ալ հիմա պատերազմի մէջ մտած է, պատերազմի լուրերը մենք այստեղ անտարակոյս ձեզմէ կանուխ և աւելի ապահով աղբիւրներէ կ'ստանանք։ Մեր կարծիքով— Թուրքիոյ վերջին օրերը մօտեցած են, արդէն քաղաքները մինչեւ Վան հասեր են առաւօտեան լուրին նայելով։ Ով գիտէ Հայաստանի համար որքան արդիւնաւոր պիտի ըլլայ այս պատերազմը։

Քեռորդիդ

1914 Նոյեմ. 22 Քեսէրլի

Յարգելի Քեռիս

Կատարուեցաւ այն՝ ինչ որ կ'սպասուէր արդէն։

Երեք շաբաթէ ի վեր է որ Թուրք կառավարութիւնը պատերազմ յայտարարած է Մեծն Ռուսիոյ կայսրութեան դէմ, ապաւինելով Գերմանիոյ ժամանակաւոր յաղթութեանց և համիսլամական գաղափարին։

Այս վերջինները իրենց հետ ունենալով ամբողջ եբիտասարդ Թրքերու ազգայնամոլ հոսանքի համակրութիւնը, և Գերման Ֆօն Զանտէրս փաշայի չահանդիր խորհուրդները, երկիրը առաջնորդեցին...

Դուք միայն վերջին յոյս մը ունիք և այդ յոյսերնուդ

կապուեցէք. ամուր անխախտ հաւատքով, թէ այս բոլոր իրագործութիւններէն, այս անտանելի տանջանքներէն ու կարմիր արեան գետակներէն բան մը պիտի ծնի և այդ ալ հայ ազգի ազատութիւնն է որ շատ մօտ է ու մեր դրան սեմերը կը բաղխէ.— Եւ մենք պիտի տեսնենք մօտ օրէն թէ.

Հայաստանի սարերը ազատութեան ջերմ ու տաք արեդը պիտի ճառագայթէ և մեր պաշտելի հայրենիքն ալ իր գարունը պիտի ունենայ։ Թէպէտ իրենց շատ թանկ պիտի նստի մինչեւ այդ օրը. վերջացնելով, կարօտալի համբոյրներ կը դրկեմ ձեզ ամենուդ։

Մնամ ձերդ կաթողիկ՝

914 Նոյեմ. 15 providense

Պ. . . . .

Էրզրում

. . . Սիրելիս վրէժխնդրութեան համար Պ. Լեւոնին հետ երկու ամիս առաջ ծրագրած էինք արդէն սպասելով հանրութեան համերաշխ միութեան կոչին դէպի կուսոյ դաշտ ոխերիմ թշնամիէն վրէժ լուծելու կիրքերուններս յագեցուցած տալու։ Կոչը մօտալուտ է քանի մը օրէն յայտնի կ'ընէ վերջապէս։

Մենք ալ դէպի պարտականութիւն պիտի յառաջանանք կայծակի նման չանթահարելու թշնամին։

Միանալու համար մեր սիրելիներուն կուսոյ դաշտին վրայ ձեռք ձեռքի տուած, փաթթուելով իրար, գուրգուրանքով առնենք տարիներու կարօտները և դէպի հայրենիքի ազատութիւնը քալենք միասին։

Պատերազմի պահուն վստահ եմ ընելիքներուդ ինչ որ խնացուցած ես։ Այո, ջանա շուտով կատարել։

Անկեղծ եղբայրդ

Union collège
Collège Vien, Veb.

Նոյեմ. 14. 914

Պ. Եսովք Ազգապետեան Սամսոն

Սիրելի եղբայրս

Անցեալ շաբթու ձեզի թերթ մը եւս ղրկեցի ուր ըսուած էր թէ հայերը Վանի կողմէն յարձակած և թրքերն ուքրդերը մեծ կորուստով ետ մղած են։

Այս շաբթուան լուրերը կ'ըսեն թէ բաւական հայեր Ռուսիոյ բանակին արձանագրուած են Թուրքիոյ դեմ եւ Ռուսիա ալ մտադրած է նոր Հայաստան մը հաստատել։ Անգլերէն նաւատորմիղը Տարսանէլի, եւ ռուսականն ալ Պոսֆորի կողմէ կը ոգեւորեն. արդէն Տարսանէլի քանի մը ամրոցները քանդուած են։ Ամիկա Թուրքիոյ վախճանն է ոչ թէ միայն Եւրոպայի մէջ, այլ նաեւ Փոքր-Ասիոյ մէջ, ինչպէս կ'ըսէ անգլ. նախարարապետ Լորա Էսքուիթ։ Հաճեցէք դուք մանրամասն գրել այդ տեղի բոլոր պարագաներուն վրայ։ Ինծի կուգայ թէ, եթէ այս պատերազմը վերջանայ Թուրքիոյ պարտութիւնովը այն ատեն շատ լաւ պիտի ըլլայ հայկ. բարեկեցութիւնը։ Չեմ կարծեր որ Ռուսիա այս անգամ ալ ուխտադրուժ ըլլայ։

17 Նոյեմ. 1914 Ցրեգլոյ

Եղբա՛ր,

. . . Նոր լոյս, նոր կեանք մեր հայ ազգին, շաբաթ մը առաջ լրագիրները կարդացինք որ, ռուսը Պայազիտ և Ալաշկերտ մտած է։ Արդէն թուրքը պիտի վերջացնեն, այն ատեն մօտ է հայրենիք վերադառնալս։

Կարօտով բարեւներ

Սիրելի հա՛յր

20 Նոյ. Տիրոյին

. . . Այս վերջին նամակս է որ կը գրեմ, զի ես ալ կերթամ միանալու հայ կամաւորներու՝ հայրենիքի հանդէպ իմ պարտականութիւնս կատարելու և թուրքին դլուխ ճղմելու համար։

Ռուսիա, Անգլիա, Ֆրանսա վճռած են կատարեալ վերջ լուծել թուրքէն և դերմանէն։

Հայը ազատ և անկախ պիտի ըլլայ, անհոգ եղիք փրկութիւնը չատ մօտ է . . .

Զաւակդ

915 Յունիս 4

Իրեզլիս

Անուշիկ քոյրս

Դեռ նամակիս պատասխանը չառած, ահա երկրորդ մը ևս։ Կը յուսամ թէ լաւ ծնունդ մը անցուցիք։

Ապահով եղէք որ յառաջիկայ տարի ծնունդը հայկական ազատութեան մէջ պիտի տօնենք։

Թուրք կառավարութիւնը չ'կայ այլեւս, վերջապէս պիտի կատարուի եւրոպայի նշանաբանը, այն է՝ մէջտեղէն վերցնել այդ գազանի կառավարութիւնը . . .

Քոյդ

Ինչպէս դիտել տուինք, անհատական հաղարաւոր այս նամակներէն մէկ քանին, որոնց ստորագրութիւնները իրենց բուն օրինակներով պահուած են, կասկած և տարակոյս չեն թողուր թէ՝ կուսակցութիւնները Թուրքիոյ մասնակցութենէն չատ առաջ պատրաստած էին ընդհ. ապստամբութիւն մը ուղղակի Թուրքիոյ դէմ։

*
* *

Այս նամակներուն մէջ մեծագոյն տեղը կը գրաւէ մանաւանդ դաշնակցութեան Պոլսոյ կեդրոնի կողմէ գաւառային մասնաճիւղերու ենթակոմիտէներուն ուղղուած շրջաբերականներէն հետեւեալ մէկ քանի նամակները.

Եպիսկոպոսի Ե. կոմիտէին

Ընկեր

Ձեր պատգամաւորը արդէն տեղը հասած, և զեկուցած կը լինի թէ ընդհ. ժողովի և թէ երկրի վիճակի մասին։ Մեր զեկավարող (կառավարական) շրջանակներ ընդհանրա-

պէս պատերազմի կողմնակից են։ Եթէ գերմանական յաջողութիւն լինի նաեւ արեւելեան սահմանների վրայ, այն ատեն պատերազմը անխուսափելի կը դառնայ։ Դժբախտաբար ասոնք չհասկցան։

Մեր առած տեղեկութիւններէն կերեւայ թէ, Կովկաս Ռուսները շատ մեծ այժ են հաւաքել, հետեւապէս նման պարագաներուն պատրաստ...

Բարեբաղտաբար այս նեղ օրերու ռազմատենչ տրամադրութիւնները մասամբ մեղմել են։

Ասոր գլխաւոր պատճառը պէտք է փնտռել իրենց առնելիք փորձի մէջ Բոլկարիան և Թուրքիան եւս իրենց տանելու տրիթով։

Նկատելի ներկայ կրիչին դաշնակցական դրսի մարմիններ առաւել եւս պիտի աշխատին...

Որքան որ ծանր է ներկայ վիճակը բայց և այնպէս յուսահատելու տեղիք չկայ։ Հօփը հազիւ վան հասած, յետ ուղարկուեց կրկին դէպի Պոլիս...

Ընդհանրապէս նամակների բացումը սովորական կը դառնայ, կամաց կամաց հին սովորութիւններ կը վերադառնան...

Մեր դրամները կը մնան արեւելեան Բանկերում, ընկերներ որոնք աւերիկայ եւ ուրիշ վայրեր պիտի երթան, մնացել են հոս բանտարկուած. Ձեզ մոս գտնուած բոլոր դրամներ անյապաղ ուղարկեք մեզ։

Ուշացնելու չէք, որպէսզի աւելորդ օրեր այստեղ մուրացիկ չապասեն։ Կուսակցութեան բիւտճեն ուժեղացնելու համար աշխատեցէք կանոնաւորապէս զանձել անասվճարները...

914 Կ. Պոլիս

Իզմիրի Կոմիտէին

Ընկերնե՛ր,

Քաղաքական կեանքի վերաբերեալ նորութիւններ դժուար պիտի կրնանք տալ ձեզ։ Ձենք գիտեր թէ մեր երկրի

գիրքը ի՞նչ պիտի լինի ներկայ համեւրոպական պատերազմի ընթացքում։ Երեւոյթներ ցոյց են տալիս որ, բարեյաջող պարագաներում կառավարութիւնը դուրս պիտի գայ իր չէզոքութիւնից։ Պատրաստութիւններ տեսնում են ամենամեծ փութով։

Մեր դիրքը որոշ է պատերազմի վերաբերմամբ, իւրաքանչիւր հայ պարտաւոր է զինուորական արձակաւոր տալ, այլ բանէ ի հարկէ, որ մենք սկզբունքով դէմ ենք, որ Թիւրքիան ներկայ պատերազմին մասնակցի։

Մեր քաղած մասնաւոր տեղեկութիւններից կ'երեւայ, որ Կովկասում Ռուսերը շատ մեծ ոյժ ունին, այնպէս որ պատերազմի ընթացքում արեւելեան վիլայէթներին մեծ վտանգ սպառնում է...

Ենթակոմիտէի անդամներ պակսել են վերջին դէպքերի պատճառով. անհրաժեշտ է որ նրանք նոր անդամներ եւ կազմը ամբողջացնէք։

Գրեցէք աւելի յաճախ և կանոնաւոր կերպով։ Առայժմ ուղարկեցէք նամակներ ԱՂԱՏԱՄԱՐՏԻ հասցէով՝ ձեռքով յանձնելի Բայնորին։

* * *

Բալկանեան Կ. Կոմիտէին

Ընկերնե՛ր,

Ստացել ենք ձեր 12 թիւ նամակը։

Մենք ուրախ ենք, որ դուք պահանջում էք կանոնաւոր յարաբերութեան լինել մեզ հետ, բայց բարի եղէք մեր դրածներին էլ չուտով պատասխանել...

Ընդհ. ժողովի կարեւոր որոշումներից մէկը այն է, որ Դաշնակցութեան կեդրոնը փոխադրուի երկիր, Հայաստանի բիւրօն ուժեղացուի և արեւմտեանի վերածուի։

Միայն Պոլսում պիտի ունենանք... իբրեւ արեւելեանի մաս։

Մեր ղեկավարները սխալ կարծիք ունին թշնամիների ուժերի վերաբերմամբ։

Կովկասում այժմ կէս միլիոնի բանակ կայ կազմ ու պատրաստ։

Ամերիկայի Կ. Կոմիտէին

Ստացել ենք ձեր Օգոստ. 10 թիւ նամակը. ընդհ. ժողովի մասին աւելորդ ենք համարում ձեզ մանրամասն տեղեկութիւններ տալ, չուտով ընկեր Վրացեան ձեզ մօտ կը լինի և զեկուցում կ'ըլլայ։

Լսեցինք որ ընկեր... էլ վաղը կամ միւս օր հոս կը լինի և միասին կը ճանապարհուին դէպի ձեզ։

Անցեալ անգամ էլ գրեցինք, Թիւրքիայում այսուհետև մէկ բիւրօ պիտի լինի, որի անդամների մեծ մասը պիտի լինի Հայաստանում։ Պոլսում կը լինին բիւրօյի ներկայացուցիչներից 3 հոգի։

Թէ այսուհետև յարաբերութիւններ ինչ ձեւով պիտի լինի, ձեզ կը յայտնուի քիչ յետոյ, երբ սէկսիօնի բոլոր անդամներ այստեղ լինին։

Համեւրոպական պատերազմ մը մեծ ազդեցութիւն ունեցաւ Թիւրքիոյ վրայ։ Ռազմական տրամադրութիւններ չատ մեծ են։

Ղեկավարող շրջանակներ երբէք գաղտիար չունին թշնամի ուժերի մասին։

Ռուսերը մեծ բանակ ունին Կովկասի սահմանագլխի վրայ, բարի եղէք, փութով մեզ հաղորդել կարեւոր լուրերը...

1914 Յուլիս 2-15 Պոլիս

Դրօշակի խմբագրութեան Ժրնեվ

Ընկերներ,

Ստացած ենք ձեր յուլիս 7 թուակիր քարտը, ինչպէս և ընկեր Միքայէլի երկու հեռագիրները։ Սաստիկով կը յայտնէր թէ չի կրնար գալ իսկ երկրորդով կ'ըսէ. «Մէկ շաբաթէն կը մեկնին (կը մեկնիմ!) երկիր գալու»։ Արդեօք

ինքն է մեկնողը և ոչ թե պիտի երթայ Կարին թէ Կ. Պոլիս։ Այս կէտերը մութ կը մնան մինչև ընկերոջ Պոլիս հասնելը։ Տեղեկագիրը չտուցանք մինչև այսօր, ընկերները ճամբայ կ'ելլեն ուրբաթ կամ շաբաթ, այնպէս որ հարկ է շտապել, որպէս զի միասին առնեն, իրրև լուսագոյն միջոց։

Արսէն Տէր Յովհաննէսեանէն նամակ ստացանք Կարինէն, կը հաւանի երթալ սեպտեմբերին։

Քննիչները կը պատրաստուին ճամբայ ելլալ, պաշտօնէութեան մասին առաջարկուած ցուցակը (հայկականը) ձախողեցաւ, որովհետև հարեւանները սատակապէս կ'ընդդիմանան։ Վէսթէնէկը ասոնցմէ մը մաքառեցաւ, բայց յոյս չկայ և կամայ և ակամայ պիտի համաձայնին։

Առանձին գրած էինք ձեզի, khatch et dolusի պատմութեան մասին Hist. des anciens Arménies։

Դուք պատասխանեցիք լակոնիկ ոճով մը, որ մեր սպասածը չէր, հեղինակին մտադրութիւնը ստիպուած ենք նորէն գրել։ Բարի եղէք ճշդելու թէ, մեր գրածները ընդունա՞ծ էք ամբողջովին։

Արևմտեան բիւրօ

Կ. Պոլիս 2-15 Յուլիս 1914

Շամի Կ. Կոմիտէին

Ընկերներ,

Կը հաստատենք մեր Յունիս 6 և 16 թուակիր քարտերը, երկուքն ալ Ցրդ ընդհ. ժողովի մասին։ Մինչև այս պահս լուր չունինք թէ ով են ձեր պատգամաւորները կամ արդեօք ճամբայ ելած են։ Ստացանք ձեր Յունիս 9 թուակիրը։ ՀԱ. Խ. և Արեւելեանը մնդած ըլլալով բարձրաբերդի մասին, այլ ևս կարելի չէր կանգ առնել Շամի վրայ։ Ձեզի հեռագրեցինք «արդէն Յուլիս 15 Օր. Կարինեանի մօտ»։ Հետեւաբար փակուած է այս հարցը։ Քննիչները կը պատրաստուին ճամբայ ելլել։ Պաշտօնեաներու մասին հարեւաններու տեսակէտն էր որ յաղթեց։ Հայկական ցուցակը համարեա վիժած է, որովհետև հարեւանները ուժգնօրէն կ'ընդդի-

մանան։ Մանաւանդ կուսակցականներու, հոլանտացին դիտողութիւններ ըրաւ իր նախասիրութեանց մասին. բայց երեւի պիտի համոզուին առանց երկարելու։ Անշուշտ ստացաք հրահանգները (հինգ օրինակ) գրքերու հետ միասին։ ԳԱՂՏՆԻ ԿԸ ՊԱՀԷՔ ԲԱՅԱՐՁԱԿԱՊԷՍ, ՁԷ։ Մեր Պոլիս հասած պատգամաւորները ճամբայ կ'ելլեն չորեքթի օր։ Կարեւոր բրած ենք որպէս զի ժողովն ունենայ լիագումարի հանդամանք։ Զորս անդամ հրաւէր ղրկուած, և վերջին պահուն ալ հեռագրուած է։ Մօտերս ձեր քաղաքը կուգայ . . . . . Ֆիզըր, ծանօթ իր հրատարակութիւններով, համոզուած Ջատագով մին է մեր դատին։ Մէկ տարի պիտի մնայ իր կնոջ հետ միասին, պատմական ուսումնասիրութիւններ կատարելու համար։ Ի հարկէ ուրիշ նպատակներ ալ կրնայ ունեցած ըլլալ։ կը բարեկամանաք, ամէն բարոյական աջակցութիւն կ'ընծայէք. բայց կազմակերպական տեսակէտով լաւ է որ վերապահ մնաք։ Շարունակ տեսակցելու կուգայ մեզի հետ։

Ընկերական բարեւներով
Արեւմտեան բիւրօն

Արեւելեանի՛ն
Ընկերնե՛ր,

Զորս նամակ է ձեզ գրուած ընդհանուրի վերաբերմամբ, բայց և այնպէս և ոչ մէկին պատասխան չստացանք, արդեօ՞ք մեր գրածները ձեզ չեն հասած. թէ անփոյթ էք նամակագրութեան մէջ։ Այդ կէտը պարզուելու է։ Նկատելով որ գործնէութեան նորանոր ասպարէզներ են բացուած, և գուցէ մեր տակտիկի և մօտիկ պահանջներուն մէջ որոշ փոփոխութիւնների կարիք պէտք է լինի. աշխատեցինք, հնարաւորին չափով, շատ կարգերից ընկերներ հրաւիրել։ Մենք Տաճկաստանի և արեւմտեան հայութիւնից մօտաւորապէս 13 վայրերից ընկերներ ենք հրաւիրել, բացի դործիչ ընկերներից։ Այս մարմիններին մի չափազանց փոքր մասնի, որ իրական տեղ ունի, մեծ մասին հրաւիրել ենք խորհրդակցական անդամ։ Նոյն կերպ վարուելու էք և դուք, նաւահան-

գիսից, այգեստանից, ջրաբերդից: Խարից, մրգաստանից, մեծ բացուկից, Ոսկեհատից Ինչպէս և Յուլիից և կարեւոր վայրերից, անպատճառ ընկերներ հրաւիրեցէք: Զսահմանափակուէք միայն տենչ ունեցողներով, ի նկատի ունեցէք մօտիկեան չափազանց կարեւորութիւնը: Սարուստանը պիտի աշխատի շատ ընկերներով մատնակցել: Ի հարկի չէք մոռնալ հրաւիրել նաեւ գործիչ ընկերներ:

Թէպէտեւ այս կողմի ընկերների մեծ մասը ճանապարհեցին Կարին, բայց մի քանիսը մէկ շաբթից կը ճանապարհուեն:

Այնպէս որ ուշ չի լինել և ձեզ համար, հեռագրով կը հրաւիրէք ընկերներին և կ'ճանապարհէք վերոյիշեալ վայրը:

Յատկապէս ձեր ուշադրութիւնը հրաւիրում ենք և խնդրում, որ կարելի է շատ վայրերից ընկերներ լինեն:

Մարզպանները վաղուց ճանապարհուած կ'լինէին, բայց աշխատում են իրենց իրաւասութիւնների սահմանները աւելի լաւ ճշդել ու գնալ այդտեղ գործեղուած ձեւով: Միւս կողմից աշխատում են միջազգային բանաւորութիւն կրող պայմանագրութիւնը հէնց սկիզբից և եթ յարգել տալ: Մենք յոյսով ենք որ նրանց ներկայութեամբ մի աստիճան աւելի եւս կ'բարւոքի հայերու դրութիւնը, և այսուհետեւ վերածնութեան գործը շատ աւելի կանոնաւոր պայմաններում առաջ տարուի:

Թիւրքահայերի դրութիւնը օրէ օր լաւանում է: Եւ այդ բանի պէտքի . . . . և գնահատեն ոչ միայն մեր ընկերները այլ և բոլոր հայերը: Յուսով ենք որ դէթ այսուհետեւ կ'աշխատիք աւելի կանոնաւոր նամակագրութիւն ունենալ:

Ընկերական բարեւներով

14 11-24 Յուլիս
Պոլիս

Հ. Յ. Դ. Ամերիկայի Կ. Կոմիտէ

Ընկերներ,

Ստացանք ձեր Յունիս 23, Յուլիս 6 և 13 թուակիր նամակները, բիւրոյի մեծ մասը ընդհ. ժողովի գացած ըլլալով, կը փութանք պատասխանել միայն ընթացիկ հարցերուն։

1.— Ընկեր Վրացեանը չաբաթ օր մեկնեցաւ այնպէս որ իրեն յատուկ թուղթերը ընկերոջ մը հետ քանի մը օրէն, բոլորը մէկ ծրարի մէջ կը ղրկենք։ Իսկ բօսթով ձեզի կ'ուղարկենք իր ձգած թուղթերը։

2.— Ընկեր Արսէն Տէր Յովհաննէսեան, (այժմ Արսէն Միքայէլեան) մտադրած է Ամերիկա գալ, բայց կարգ մը ուսումնասիրութիւններու մասին երկիր գացած ըլլալով. ուշացաւ իր պատասխանը, իրմէ նամակ ստացանք Կարինէն, ուրիշ պիտի անցնի Մուշ և Վան, և Սեպտեմբերին պատրաստ պիտի ըլլայ Ամերիկա ուղեւորուելու։ Նոյն իսկ Օգոստոսին կը հաւանի գալ։ Մենք այս բոլոր տեղեկութիւնները անձամբ հաղորդեցինք ընկեր Վրացեանին, որ գրած պիտի ըլլայ թէ ձեզի և թէ իրեն։ Ամէն պարագայի մէջ այդ ընկերը ապահովուած է. կրնաք վստահ ըլլալ, մենք այսօր իրեն գրեցինք Մուշ որպէսզի պատրաստ ըլլայ և աւելի չ'ուշանայ։

3.— Ստացանք ձեր չէքերը մէկը 22 կէս օսմ. ոսկի և միւսը 26 ոսկի (գեռ չենք գանձած), Թամզարայի Զախտաք ենթակոմիտէին համար, վաղն իսկ կրփոխադրենք պատասխան ընկալագիր պահանջելով։ Ի հարկէ հակակազմակերպային քայլ մըն է որ առած են Թամզարացիները, այդ ձեւ յարաբերութեամբ և կ'արժէր դիտել տալ։ Իշնչ եղած է նաեւ միւս հին գումարներուն, Կիւրին ղրկուած է արդէն, Զմկածադի մասին խիստ նամակ մը գրած էինք վերջերս Փառնակին, որ պատասխանատու է այդ գործին հա-

մար, ու խմացանք որ իրենց կամքէն անկախ պատճառներ ունէին, իսկ այժմ արդէն ղրկած են։ Զգիտենք ինչու կը յիշէք Ծովքը...։ Այս հարցերու մասին անչուշտ ձեր պատգամաւորը գոհացում պիտի պահանջէ Ընդհ. ժողովին մէջ, որով կը խնդրենք չկրկնել ամէն մէկ նամակի մէջ։

Ըսենք անցողակի թէ, ընդհանրապէս լրջութիւնը կը պակսի ձեր կարգ մը նամակներուն մէջ, և շրջաբերականներու չնչան անգամ առնուազն անախորժ է։ Այս տեսակէտով ուշագրաւ է մանաւանդ ձեր Յունիս 1 թուակիրը, որուն այլևս անտեղի կը նկատենք պատասխանել։ Քանի որ ձեր յուզած հարցերը պիտի քննուին ընդհ. ժողովին մէջ։

4.— Կամաւորները կարող են երթալ երկիր.... իրենք իրենցով և երբ որ հարկ ըլլայ կը ճամբորդեն իրենց ուժերով, ուրիշ ոչինչ կարելի է ընել, ոչ ալ յանձնառութեան տակ մանել այդ մասին, դէթ մինչև ընդհ. ժողով։ Երկու ընդհ. քննիչներէն Հօքը մեկնեցաւ այսօր, Վէսթենէնկը ճամբայ կ'ելլէ տասը օրէն, վերջին չաբաթներու միջոցին չափազանց կնճռոտեցաւ խնդիրը, որովհետև կառավարութիւնը մինչև վերջը կը ջանար ընդունիլ տալ իր տեսակէտը։ Թէ իրաւասութիւններու և թէ պաշտօնէից։ թեան մասին։ Շնորհիւ մեր դիմումներուն և ուրիշ օժանդակութիւններուն, մանաւանդ ՀՈԼԱՆՏԱՅԻՆ ընդդիմութեան, կարելի եղաւ որոշ դիջումներ ձեռք բերել։ Այսպէս հարեւանները ընդունած եղան որ զլխաւոր պաշտօնեութիւնը կազմուի կէստակէսի սկզբունքով։ Հօքը իրեն հետ ունի երեք Հայ, երկու Յոյն և երեք Թուրք (մէկը Քիւրտ երեւութապէս) Վէսթենէնկը կ'ունենայ երկու հայ։

11—24 Սուլիս 1914

Կ. Պոլիս

Յարգելի ընկեր Սրսէն Միքայէլեան

Մուշ

Ստացած ենք ձեր երկու նամակները, վերջինը՝ Կարինէն, Յունիս 22 թուակիր։

Ձեր տեղեկութիւնները հաղորդեցինք ընկեր Վրացեանին, որ երկիր կը դառնուի արդէն, և Ամերիկա պատասխանի կ'սպասէին։ Զգիտենք թէ Վրացեանը գրեց ձեզի։ Կը փութանք հաղորդել որ անոր հետ պիտի կարգադրէք ձեր պաշտօնի բոլոր մանրամասնութիւնները, և կրնաք նոյն իսկ անոր հետ մեկնիլ։ Ամէն պարագայի մէջ նկատի ունեցէք որ

1.— Մենք Ամերիկա գրած ենք ձեր անուանումը վերջնականապէս.

2.— Անհրաժեշտ է շտապել, նոյն իսկ օգոստոսին ճամբայ ելլել։ Բաւի եղէք ուրեմն շուտով հաղորդակցութեան մտնելու թէ ընկեր Վրացեանին հետ (Կարին և թէ հայրենիքին), որպէսզի մութի մէջ չմնան և շարունակ հարցեր չուղղեն մեզ

Ընկերական բարեւներով
Արեւմտեան

Դ-ի ընկերներին,
Սիրելիք,

Ընդհանուր պատերազմի հետեւանքները ի հարկէ ծանրացաւ Թուրքիոյ վրայ։ Առոր հետեւանքն է ընդհանուր զօրակոչին խնդիրը։ Արդէն բոլոր ազգերն իրար են անցնում և կարելի է հետեւցնել թէ Թուրքիան եւս անմասն չ'մնայ ընդհ. պատերազմի մէջ իր մասը ունենալէ, նամանաւանդ որ այնտեղ կան բարի մարդիկ որոնք այդ ուղղութեամբ չեն խնայում իրենց աշխատանքները։ Վանան՝ Թուսատանի վրայով կուգայ Վան։ Արամ նոյն ճանապարհով այսօր ճանապարհում է Վան, տեսնենք պիտի կարողանայ տեղ առնել թէ ոչ, դրութիւնը օրիցօր փոփոխում է, ամէնքն ալ ղրկեցինք ձեր կողմը, իսկ պէտք լինի, ի հարկէ ներկայ տագնապալից ժամերում անհրաժեշտ է որ թիւրք, հայ, քիւրտ լինին համերաշխ իրար մէջ։ Ընդհանուրի շահը այդ է պահանջում։

Լիէժի ամրութիւնները չեն առած, Ֆրանսայինները մտել են Ալզաս։ Գրաքննութիւնները չափազանց խիստ են, լրա-

դիրներից չատ բան չէք կարող հասկնալ։ Թէպէտ և պատերազմին վերաբերեալ մենք էլ կարող չենք չատ բան իմանալ։

Կ. Պոլիս 19 Օգոստոս 1914

Բէրակի կոմիտէին

Ընկերնե՛ր,

Ստացանք ձեր Յուլիս 27 թուակիրը։

Ձեր դանդատը ինչքան ալ իրաւացի ըլլայ Լեռնասարի անհոգութեան մասին, պարտաւոր էք դարձեալ կապը չիզել անոր հետ, այլապէս առաջ կուգայ խառնակ և հակակազմակերպական դրութիւն։

Մենք առանձին նամակով մը կը յիշեցնենք անոնց որ անփոյթ չենան, մանաւանդ ներկայ տագնապալի օրերուն։ Երեւի զօրաչարժի խուճապին մէջ մէկդի դրուած են կազմակերպական հոգերը։

Շատ դնահատելի գործ մը կատարած էք, ոչ-զինուորներէ մարմին մը կազմելով, որպէս զի ընթացք տայ գործերուն։ Ձեզի պէս չարժած են նաեւ Բանալիի Կ. Կոմիտէն և ուրիշ վայրեր խորապէս ըմբռնելով որ, արդի պարագաներուն մէջ, ամէնէն աւելի պէտք է զօրանան կազմակերպութիւնները իբրեւ միակ ամուր կապը՝ ցիրուցան և չփոթած հասարակութեան մէջ։ Դուք ըրած էք ինչ որ պէտք էր, և մենք մանաւանդ գոհունակութեամբ պիտի հաղորդենք ձեր օրինակը ուրիշ տեղեր։ Բարի եղէք պարբերաբար լուրեր հաղորդելու։ Բացառիկ պարագաներու մէջ մենք ալ կը գրենք, իսկ ընթացիկ լուրերը կը ստանաք Լեռնասարէն։

Ծրդ, ընդհ.ը յաջողութեամբ վերջացած է, չնայելով պատերազմի տագնապին։ Ընկերներու մէկ մասը ցրուած է։ Դրաքնութիւնը չատ խիստ է, տրուած լուրերուն երեք քառորդ մասը սուտ կամ սխալ են։ Մէկ երկու օրէ ի վեր միայն ֆրանսական պարտութեան մը լուրը կը հաստատեն, և եթէ չարունակուի այս ձախողուածը, հարեւանները այլ ուս կանգ չպիտի առնեն, ինչպէս բացէ ի բաց կը խոստովանին և...

Ընկերական բարեւներով

Արեւմտեան

Ահա Դաշնակցութեան հազարաւոր նոյնիմաստ շրջաբերականներէն մէկ քանի նմոյշ՝ որոնք կարկառուն ապացոյցներ են կուսակցական ներքին դաւադրական տաֆիֆին։

Այս և բոլոր շրջաբերականներուն մէջ դիտելի ուշադրաւ կէտ մըն է նաև տեղւոյ յատուկ անունները։

ԲԱՐԶՐԱԲԵՐԴ, ԼԵՌՆԱՍԱՐ, ՋՈՐԱՄԷՋ, ՀԱՒԵԲԼՈՒՐ ՔԱՐԱՋՈՐ, ՎԻՇԱՊԱՋՈՐ. և ն։

Ինչո՞ւ այս անունները փոխանակ Պոլիս, Պրուսա, Իզմիթ և ն. անուններուն տեղ։

Ինչո՞ւ այսքան խիստ գաղտնի գործելակերպ։

Շրջաբերականներուն ոճը, դաղափարը անոնց պարունակութիւնները, ուղիղ և հայրենասէր գործունէութիւն մը ցոյց չենք տար երբէք, արդէն առանց բան մընալ ապասելը յիմարութիւն է։

* * *

Ինչպէս, ուրիշ տեղ մըն ալ ըսինք, առհասարակ բոլոր հայ կուսակցութիւնները անկախութեան գաղափարին շուրջ միացած էին և այս իսկ պատճառով միջկուսակցականը տենդոտ գործունէութիւն մը ցոյց կուտար։

Սահմանադրական ռամկավարները որոնք սկիզբները Դաշնակ. եւ Հնչակ. կուսակցութիւններէ անջատաբար կը գործէին, իրենց սկզբունք ունենալով պահպանողականութիւնը, վերջին տարիներ այս կուսակցութիւնն ալ ընդունեց եղած հրաւէրը եւ իր ձեռքը տուաւ Հնչակեան կուսակցութեան, որուն գործելակերպը ճշդուած էր 1913 Սեպտ. 11 Թէօսթէնճէ գումարուած Հնչակեան գօնկրէսին մէջ։

Ահա թէ ինչ կը գրէ այս մասին Սահմ. Ռամկ. կուսակցութեան կեդրոնը։

Թիւ 55 20-5 Մարտ 1914

Ս. Դ. Կուսակցութեան Ալէքսանդրիոյ ակումբին,
Սիրելի ընկերներ,

Ստացած ենք Ձեր Յունվ. 24 թուակիր նամակը, շնոր-

հակալ ենք Կեդր. ակումբիս նկատմամբ՝ Ձեր յայտնած համակրութիւններուն համար.....

Գալով....., ինդրոյն, ո՞վ կարելի է ժխտել անոր իրաւունքը, քանի որ բնական է ան և տարրական։

Համաձայն Բ. Պատգմ. Ընդհ. ժողովի որոշման, Կեդր. ակումբս կը քաջալերէ գործադրութիւնը իրաւանց՝ այն միջոցներով որոնք ցոյց տրուած են ներքին կանոնագրի բացառիկ միջոցներու գլխուն մէջ։

Հնչակեան կուսակցութեան հետ համերաշխ գործակցութիւն մը ամենուս ալ ջերմ փափաքն եղած է միշտ և ջանքեր ալ չեն խնայուած ու պիտի չխնայուին Կեդր. ակումբիս կողմէ անոր շարունակութեանը համար։

Վեր. Հնչակեան կուսակցութեան հետ միութիւն առաջ բերել անչուշտ դժուար չէ։ որովհետև չկայ դայն մեզմէ բաժնող գաղափարի և հայեցքներու ո՛ և է տարբերութիւն։

Ներկայիս որչափ անհրաժեշտ է միութիւնը որ նոյնչափ անհրաժեշտ և հրամայողական, նոյնչափ ալ համերաշխ գործակցութիւն մը։ Ասոր կը ձգտին տեղւոյս Ռամկավար և Հնչակեան ձեռնհաս մարմինները և իրենց հետ կը քաջալերեն նաև Դաշնակցական և Վեր. Հնչակեան կուսակցութիւնները։

Ընկերական սիրալիր բարեւներով

Ս. Ռ. Կուսակց. Կեդր. Ակումբի

Քարտուղար Նախագահ

Թ. Ինկիլիզեան Տ. Քէշիկեան

Այլեւս կասկած չկայ թէ, Սահմ. Ռամկավար կուսակցութիւնն ալ սկզբունքով ընդունած էր Հնչակեաններու նոր վարդապետութիւնը։

*
* *

Դպրոցներու մասին համառօտիւ միայն խօսած էինք։ Ցոյց տալու համար թէ, կուսակցութիւնները իրենց միակ նպատակ ունէին ԱՆԿԱԽՈՒԹԻՒՆԸ՝ որ պետութեան դէմ ընդհ. ապստամբութեամբ և կամ դաւաճանութեամբ միայն

կարելի էր ձեռք բերել, իրենց ճիրաններուն մէջ առած էին դաւառներու, նոյն իսկ էն հեռաւոր վայրերու և մայրաքաղաքի մէջ գտնուած նախակրթարանները ու երկրորդական վարժարանները։

Նախակրթարաններու մէջ Հայ. Ազգ. պատմութիւնը, Աշխարհագրութիւնը միայն յեղափոխական գաղափարին ծառայումին համար կաւանդուէր։

Պատմութեան դասագիրքերը կը բովանդակէին իրենց մէջ հայ ամենահին իշխաններու, թագաւորներու, շինծու, յեռոյ յեղափոխական ժամանակակից դիմքերու պատկերները։

*
* *

Աշխարհագրութեան դասը՝ որ ընդհ. դաստիարակութեան մէջ կը ծառայէ իբր կրթիչ միջոց մը, պարզապէս մատաղ մտքերու մէջ յեղափոխական գաղափարներու ամրապնդումին կը ծառայեցուցուէր։

Հայկական հին քարտէզներ դպրոցներու մէջ իրենց մասնաւոր տեղը ունէին, Վասպուրական, Տուրուբերան, Տարօն, Բարձրաբերդ, Կարին, Տիգրանակերտ են, անուններ յաջորդած էին Վան, Մուշ, Տրապիզոն, Էրզրում, Տիարպէքիր են. աշխարհագրական անուններու։

Աշխարհագրութեան դասերու ատեն տեղագրական ճիւղը միայն և միայն հին Հայաստանի յատուկ էր, և զարմանալին հոն է որ, յեղափոխական ուսուցիչները առ հասարակ Թուրքիոյ մասին կը խօսէին, իբր թէ՝ Թուրքիա ուղղակի հայերէն գրաւած ըլլար այդ երկրամասերը, մինչդեռ պատմութիւնը կը վկայէ թէ, հայ տարրը Թուրք պետութեան տակ կրցած է պահել իր ազգ. գոյութիւնը, և սակայն ուրիշ պետութիւններու հովանիին! Ներքեւ հայերը բոլորովին կորսնցուցած են իրենց գոյութիւնը և հետքերնին անգամ չէ մնացած, այսպէս կորսուած են ռումանական, հոլանտական են. գաղթականութիւնները։

Տարր. նախակրթարաններու սահմանուած դասագրքերը

կուսակցական հեռաւոր նկատումներով պատրաստուած, պարտաւորիչ դարձած էին ուսանող մանկտւոյն և պատանեկութեան։

Հին ու նոր յեղափոխական բոլոր բանաստեղծութիւնները կարգով դասաւորուած էին ընթերցանութեան դասագիրքերուն մէջ՝ որոնք անպատճառ պիտի ունենային նաեւ Հայաստանի հին բաժանումները ցուցնող քարտէս մը։

Իրարու եւեւէ հրատարակուած պատմութեան դասագիրքերը ազգայնութեան գաղափարով պատրաստուած էին, բնականաբար մասնաւոր նպատակով մը։

*
* *

Դաշնակցական և Հնչակեան շէֆեր իրր տնօրէն ուսուցիչ պաշտօնի գլուխ անցած էին թէ մայրաքաղաքի և թէ գաւառի վարժարաններուն մէջ։

Ղալաթիոյ Կեդրոնականը յեղափոխականներու ձեռքերուն մէջ, յեղափոխութեան և խայտառակութեան վառարանը եղած էր։

Մանաւանդ գաւառացի նպաստակալ ուսանողները դըպրոցական բոլոր ժամերը յեղափոխական վիճաբանութիւններով կ'անցնէին։

Հոն՝ այդ վարժարանին մէջ անպակաս եղան կուսակցական բաղխումները՝ որոնք միեւնոյն ատեն կը քաջալերուէին կուսակցութիւններու կողմէ։

*
* *

Սանասարեան վարժարանի անցքերը տակաւին շատ թարմ են մտքերու մէջ։ Կուսակցութիւնները ոգի ի բռին կը ջանային ձեռք անցնել անոր մատակարարութեան ղեկը, մանաւանդ որ՝ ռուսական պաշտպանութիւնն «protection» ալ կը վայելէր, և հետեւաբար կարելի էր իրր ապաստանարան ալ գործածել, ինչպէս որ օրինակներն ալ տեսնուեցան։

Երկրորդական այս վարժարանն ալ չորս հինգ տարի շարունակ կուսակցական վէճերու թատր եղաւ։

Հոն՝ այդ վարժարանին մէջ պատրաստուեցան նաեւ ապաստամբական ծրագիրներ կուսակցութիւններու միջոցաւ։

*
* *

Կուսակցութիւնները իրենց հրապարակային յայտարարութիւններուն մէջ բացէ ի բաց ըսին թէ, առ հասարակ բոլոր դպրոցներու դեկը պէտք է որ իրենց ձեռքերուն մէջ ունենան։

Կուսակցական ուսանողութիւններու զանազան միութիւնները ունեցան նաեւ իրենց պարբերաթերթերը, բացէ՛ք զոր օրինակ, Բարիզի դաշնակցական ուսանողութեան օրգանը եղող Ոստանը, դուն ուրեք պիտի հանդիպիք, զրական կամ գիտական ո՛ և է լուրջ յօդուածի մը։

Անոր ընդարձակ էջերը նուիրուած են Սոցիալիզմի, հողային պրոլիտի, կոնկրէտներու, Սոցիալ դեմոկրաս դեմքերու կենսագրութիւններու, յեղափոխական դիմքերու եւն. եւն.։

Իրողութիւնները մէջտեղը ըլլալով այս մասին եւս աւելորդ կը նկատենք մեր կողմէ ո՛ և է խորհրդածութիւն։

Իրաց այս վիճակին մէջ Օսմ. կառավարութիւնը դարձեալ ազատ ձգած էր ազգ. դաստիարակութիւնը։

Անգամ մը՝ ալ կը հարցնենք թէ, ո՞ր երկրի մէջ դաստիարակութեան գործը եղած է այսքան ազատ և ապաստամբական։

ընելիքնիս աւարտեցինք։

Ուզեցինք այս գիրքին իւրամանչիւր էջը վաւերաթուղթ մը ընել այն խստմնելի ոճիրին եւ անլուր դատանանութեան՝ զոր հայ կուսակցութիւնները գործեցին նանդէպ խեղճ ազգի մը եւ բարեացակամ կառավարութեան մը։

Հայութեան ծոցին դաշունանար մնոն ած կուսակցութիւններ վերջացուցած չեն թուիր իրենց եղբայրասպանութիւններ։ Օսմ. Պետութեան այդ խարդախ մատնիչներ կրնայ ըլլալ որ դեռ շարունակեն իրենց անլուր եւ պակուցիչ ըմբոստութիւնները՝ որոնք անձնասպանութեան մղեցին ողջոյն ազգ մը եւ խորտակեցին հայ եւ թուրք տարրերու միջեւ զոյութիւն ունեցող

սիրակցորդ դրացնութիւնը: Ասելութիւն եւ վրէժ սերմանեցին երկու ժողովուրդներու մէջ՝ որոնք իրարու լրացած սիրալիր ամբողջութիւն մը կը կազմէին:

Այս քաղաքական մեծ ոճիրին հետեւանքները ապագայ պատմութիւնը միայն կրնայ արձանագրել:

Տակաւին շա՛տ, խիստ շատ բաներ կան ըսուելիք եւ գրուելիք Հայ կուսակցութիւններու եւ անոնց ազիտաբեր գործունէութեան մասին:

Այդ կուսակցութիւններուն ոչ մէկը չնամարձակեցաւ իր համարատուութիւնը եւ հաշուետուութիւնը ներկայացնել հրապարակաւ եւ նակատաբաց այն ազգին, զոր կենազրաւ բրին: Հակառակ՝որ առիթը ներկայացաւ քանիցս թէ հնչակեանին եւ թէ Դաշնակցականին իրենց քաներնինիզամեաներու առիթով ներկայանալու հանրութեան, երբեք չնամարձակեցան անոնք հասարակութեան ըսել ի՞նչ էին իրենք եւ ի՞նչ բրին. այնքա՛ն կեղտոտ, այնքա՛ն արիւնոտ եւ այնքա՛ն կեղծ էր իրենց կեանքը եւ իրենց բովանդակ գործը: Նոյն իսկ երբ քանի մը անհատական ձեռնարկներ եղան կուսակցութիւններու պատմութիւնը շարադրելու, ամէն տեսակ խաբանարար մի. ջոցներու դիմուեցաւ լռութեան դատապարտելու համար զանոնք:

Մեզի այդ ամէնը գիտնալով է որ ազգին ողջամիտ գիտակցութեան, հայ խղճին արդարադատութեան եւ պատմութեան անկաշառ դատաստանին կը յանձնենք այս հատորիկը:

Կը կրկնենք դարձեալ թէ, պակասներ շա՛տ կան այս անփոյթ գրութեան մէջ, մանաւանդ պատերազմի յայտարարութենէն վերջ կուսակցականներու գործունէութեան եւ անոնց վիժած ու ապարդիւն աշխատութեան մասին:

Հայկական խնդիր մը գոյութիւն չունեցած տեղը զայն ստեղծելը, արտասահմանի մէջ բրճանայութիւնը՝ այս պատուական եւ բարեբասիկ ժողովուրդը եւրոպական տերութիւններէ ոմանց մասնաւոր նպատակներուն գործիք ծառայեցնելով իրենց ապրուստը ապառնելը, միջոց ապօրինի միջոցներով բնագաւառեան հանդարտ դասակարգերը, տգէտ եւ անգիտակից ժողովուրդին դիւրաբորբոք քնախնդրութիւնը հրահրելը, երբեմն Թուրքիոյ գործակցելով Ռուսիոյ դէմ մահաբեր եւ այժմ ալ մոսկովեան բանակներուն մէջ ըբրեւ կամաւոր ծառայելով մեր հայրենիքին դէմ դաւանանելը, Պարսկաստանի մէջ ազատական տարերու հետ շինծու դաշինքներ կնքելով այդ սահմաններուն մէջ ալ յեղափոխական աւազակութիւններու ձեռնարկելը, այս չէ՞ հայ ֆօմիքէներու ամբողջ պատմութիւնը:

Շինծու խաներ (Եփրեմ) եւ փաշաներ (Անդրանիկ) ինքնակալ իշխաններ (Աղբամարի) եւ կոմսեր (Փափազեան) ու դեռ կարգ մը խամանիկներ երեւան բերելով ելլել պարծենալ թէ ժողովուրդը մկրտած է այդ տիտղոսներով իր յեղափոխական հերոսները, անգոյ ջանմէջաներու սարսափը տարածել հայրենի հողին գիւղացի անդորր ժողովուրդին մէջ. բանն ու

զուրանը խլել անոր ձեռքէն եւ հրացանի ու ռումբի համար կորզել եւ շորթել անոր դրամը, յանուն ընկերվարական խակ ու չհասկցուած սկզբունքներու գործադուլներ սարքել. այս չէ՞ միթէ մեր կուսակցութիւններուն բովանդակ գործունէութիւնը:

Կրօնք. ազգ, հայրենիք, ընտանիք ուրանալ, եկեղեցիները եւ վանքե[illegible] կողոպտել, տոնական աւանդութիւններն ու նուիրական սրբութիւնները ծա[illegible]ել եւ նախապատարումներ համարել, համաշխարհային քաղաքացի ըլլա[illegible] հովեր առնել, ազատ սէր քարոզել, նոռմաբան տեսնախօսութիւններ [illegible] վատախտարակ դասախօսութիւններ սարքել. այս չէ՞ միթէ հայ յեղափ[illegible]կաններու բոլոր վարդապետութիւնները:

Տեսականին եւ գործնականին մէջ, սկզբունքին եւ իրողութիւնն[illegible] մէջ, ծրագիրներուն եւ դէպքերուն մէջ հաւատարապէս ձախողած հա[illegible]ղափոխութենէն ու մեր կուսակցութիւններէն օգուտ մը չենք սպասեր [illegible] եւս. զէր կարենայինք անոնց վստահաւոր եւ վնասակար ազդեցութեն[illegible] զերծ կացուցանել մեր ժողովուրդը:

Անէծք, արցունք եւ արիւն լեցուցած են հայ յեղափոխական կո[illegible]ցութիւններու պատմութեան էջերը: Այդքան անէծք, այդքան արցունք, այդքան արիւն ոչ մէկ հայ չպիտի ներէ իրենց: Այսքան աւեր ու խ[illegible]ում, այսչափ ոճիր եւ դաւանանութիւն, այս ասիճան կեղծիք եւ [illegible]որութիւն զարհանք կ'ազդեն ամէն ողջամիտ մարդու: Հայութեան վիճակ զաւակներն են անոնք. իրենց սաղմին մէջ խեղդաման եղ[illegible] ապօրինի ծրնունդները՝ որոնց սաղմը եւրոպական տխեղծ քաղաքակա[illegible]թիւն մը սփռեց հայ արգաւանդ եւ հաւատարիմ արգանդին մէջ եւ որ հիմա[illegible] կը նեսուի մոռացութեան կոյուղին՝ արժանի դամբանը այդ արիւնաշաղախ եւ իր հայրենիքը յօշոտող նիւաղին:

Քար մը ալ եսեւէն:

7n